

ՆՈՐ ԶՈՒՂՄ

ՏԵՂԵԿԱՏՈՒ ՄՊԱՀԱՆԻ ՀԱՅՈՑ ԹԵՄԻ

ԺԱ ՏԱՐԻ, ԹԻԻ 94, ՅՈՒՆԻԱՐ-ՓԵՏՐԻԱՐ 2013



**ՊԱՏԳԱՄ Ն.Ս.Օ.Տ.Տ. ԱՐԱՄ Ա
ԿԱԹՈՂԻԿՈՍԻ
ՄԵԾԻ ՏԱՆՆ ԿԻԼԻԿԻՈՅ - ԱՆԹԻԼԻԱՍ**

ՏԻՄՈՒՆ ԹՅՈՒՑ Ի ԶԾՅԷՂ - 2013



*Մեծի Տանն Կիլիկիոյ կաթողիկոսութեան
Թեմակալ առաջնորդներին,
Հոգևոր դասին,
Ազգային իշխանութեանց եւ
Մեր ժողովրդի զաւակներին*

Աստուածայայտնութեան խորհրդով լեցուն բացող Նոր Տարւայ սեմին, Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան Անթիլիասի մայրավանքից հայրապետական օրհնութեամբ, քրիստոնէական ջերմ սիրով ու ազգային վառ ապրումներով ողջունում ենք մեր ժողովրդի սիրելի զաւակներին՝ նրանց մաղթելով աստուածային բարիքներով ու շնորհներով լեցուն տարի:

Ինչպէս ծանօթ է ձեզ, մեր նախաձեռնած աւանդութեան համաձայն, իւրաքանչիւր տարի ներսում ենք մեր ժողովրդի, եկեղեցու եւ Հայրենիքի հետ անմիջական աղերս ունեցող մի ընդհանրական մտահոգութեան, մի երեւոյթի, մի արժէքի կամ մի դէպքի: Այս առիթով մեր ժողովրդի զաւակներին հրաւիրում ենք տարբեր նախաձեռնութիւնների միջոցով, հաւաքաբար թէ անհատաբար, լուսարձակի տակ առնել տւեալ թեման՝ իրապաշտ քննարկումով, լուրջ արժեւորումով եւ մեր համայնական կեանքն աւելի ծաղկեցնելու նպատակաւ մօտեցումով:

Արդարեւ, առաջին հայ գրքի տպագրութեան 500-ամեակը, ինչպէս նաեւ հայ գրքի նկատմամբ մեր ժողովրդի ունեցած նախանձախնդիր վերաբերմունքը մեզ մղեց անցնող տարին հռչակել «Հայ Գրքի Տարի»: Մէկ ամբողջ տարի դասախօսութիւնների, ցուցահանդէսների, շնորհահանդէսների ու հրատարակութիւնների միջոցով փառքը հիւսեցինք հայ գրքի, մեր յարգանքն արտայայտեցինք հայ գիրք գրողներին ու մեր գնահատանքը՝ մեկենասներին, վերաշեշտելով հայ կեանքում հայ գրքի պայծառակերպիչ ու հայակերտիչ ներկայութեանը նոր կենսունակութիւն տալու հրամայականը:

Նկատի ունենալով մեր ժողովրդի հաւաքական կեանքում հայ մօր կենտրոնական ներկայութիւնն ու մանաւանդ նրա որոշադրիչ ու եզակի դերը, ներկայ հայրապետական գրով 2013 թւականը հռչակում ենք

«ՆԱՅ ՄՕՐ ՏԱՐԻ»:

Մեր ողջ պատմութեան ընթացքում հայ մայրը հայ ժողովրդի համար ո՛չ միայն դարձել է տիպար մայր՝ իր կեանքում ցոլացնելով հոգևոր, բարոյական ու ազգային սրբազան արժէքներն ու առաքինութիւնները, ո՛չ միայն ընտանիքի ամրակուռ սիւնն է եղել ու իր զաւակների նւիրեալ դաստիարակը, այլեւ մեր պատմութեան ամենաճակատագրական պահերին իր օրինակելի վարքագծով, ամուր կեցածքով, անհուն զոհողութեամբ, քրիստոնէական հաւատի պահպանութեան ու պաշտպանութեան, ինչպէս նաեւ ազգաշինութեան ու հայրենաշինութեան սրբազան առաքելութեանը բերած իր ամբողջանւէր ու յանձնառու մասնակցութեամբ եղել է բարձրագոյն աստիճանի յարգանքի արժանի մի անձ:

Արդ, ներկայ տարւայ ընթացքում անհրաժեշտ է համապարփակ մօտեցմամբ վերաբժեւորել հայ մօր տիպարը՝ յատկապէս պարզելով ներկայ ժամանակներում նրա դիմագրաւած մտահոգութիւններն ու մարտահրաւերները եւ շեշտելով մեր կեանքը յուզող տագնապների դիմաց նրան վիճակած ճակատագրական դերը:

Անհրաժեշտ է, սակայն, նախ դառնալ Աստուածաշնչին՝ որպէս հիմքը մեր քրիստոնէական հաւատի, կեանքի ու մտածողութեան:

Ա

Մայրը՝ Ապրածաշնչում

Աստուածաշունչն աղբիւր է աստուածային յայտնութեան: Այս անհերքելի ճշմարտութիւնից ելնելով՝ եկեղեցին իր կեանքին ու առաքելութեանն առնչող որեւէ ուսուցման, սկզբունքի, արժէքի կամ երեւոյթի գծով հարկ է, որ

միշտ նայի Աստուածաշնչին՝ նրանից ստանալու իր ներշնչումն եւ ուղղութիւնը:

Արդարեւ, Հին թէ՛ Նոր Կտակարաններում բազմաթիւ են ակնարկները՝ մօր նկատմամբ:

Այս ուղղութեամբ, եւ որպէս Աստուածաշնչի ուսուցումների ելակէտ, հարկ է յիշել Աստծու պատւերը՝ «Պատւի՛ր հօրդ ու մօրդ» (Ելք 20.12): Եսայու մարգարէութեան մէջ կարդում ենք. «*Ինչպէս մի մայր իր որդուն հանգստացնում է, այնպէս էլ ես ձեզ կը հանգստացնեմ*» (66.13): Իսկ Առակաց գիրքն ասում է. «*Հնազանդւի՛ր մօրդ, որ քեզ ծնել է ու մի՛ անարգիր քո հօրը, երբ ծերանայ*» (23.22): Մի այլ տեղ Առակաց գիրքը դարձեալ ասում է. «*Որդեակ իմ, քո հօր խրատը լսիր ու քո մօր օրհնքը մի՛ մերժիր, որովհետեւ նրանք քո գլխի շնորհների պսակը եւ քո պարանոցի մանեակները կը լինեն*» (1.8-9):

Նոր Կտակարանում մօր գերագոյն տիպարը սուրբ Մարիամ Աստուածածինն է: Մարիամի ընտրութիւնը Աստծու կողմից՝ որպէս Աստծու Միածին Որդու մայրը դառնալու կոչւած տիպար կին (Մտ 1.20), Բեթղեմէում ծնած Յիսուս մանուկի նկատմամբ Աստուածածնի ցուցաբերած գուրգուրանքը (Ղկ 2.6-7), Յիսուսի հոգե-մտաւոր աճման մէջ Աստուածածնի դերը (Ղկ 2.22-24) եւ ապա Քրիստոսի առաքելութեան ընթացքում Աստուածածնի մնայուն ներկայութիւնը՝ իր զաւակի կողքին (Յն 19.25) եւ, միւս կողմից, Քրիստոսի ցուցաբերած խոր յարգանքը՝ իր մօր նկատմամբ (Յն 19.26), պերճախօս կերպով պարզում են մօր հարազատ պատկերը եւ փոխադարձ սիրոյ ու գուրգուրանքի վրայ հիմնւած մայր-զաւակ օրինակելի յարաբերութիւնը:

Մօր մասին Աստուածաշնչի ուսուցումները եզրակացնելուց առաջ՝ յայտնենք նաեւ, որ մայրը այնքան յարգանքի արժանի անձ է եղել, որ նոյնիսկ «Վերին Երուսաղէմ»-ը բնութագրել է որպէս «բոլորի՛ մայրը» (Գղ 4.26):

Աստուածաշնչում մօր ներկայութիւնը կարելի է ամփոփել հետեւեալ կէտերի մէջ.

ա) Մայրը ներկայանում է որպէս ընտանիքի հիմքը. նրա դերը միայն ընտանիքի գոյատեւումը երաշխաւորելը չէ՝ զաւակների ծննդաբերութեամբ. նա նաեւ դաստիարակիչ դեր ունի: Բարոյական ու հոգեւոր իմաստով ընտանիքի առողջ պահպանումը մօր առաջնահերթ պարտաւորութիւնն է:

բ) Նկատի ունենալով աստուծային տնօրինումով մօրը յանձնւած եզակի առաքելութիւնը՝ նա կոչւած է՝ իր կեանքում ու գործում գործնապէս արտայայտելու բարոյական ու հոգեւոր արժէքներն ու սկզբունքները:

գ) Անհրաժեշտ է, որ զաւակները հնազանդւեն իրենց մօրը՝ հետեւելով նրա ցուցմունքներին ու կեանքի օրինակին:

դ) Սուրբ Մարիամ Աստուածածինը համարում է որպէս ճշմարիտ մայրութեան տիպար:

Բ

Մայրը՝ եկեղեցու հայրերի ուսուցումներում

Թե՛ Ընդհանրական Եկեղեցու եւ թե՛ Հայ Եկեղեցու հայրերը յատուկ կարեւորութիւն են ընծայել մօրը՝ բնականաբար միշտ Աստուածաշնչին ունենալով իրենց մեկնաբանութիւնների եւ ուսուցումների առանցքը եւ սուրբ Աստուածածնին համարելով որպէս օրինակելի մայր: Եկեղեցու հայրերը մօր դերին անդրադարձել են առաւելաբար աստուածաշնչական գրքերի իրենց մեկնաբանութեան ծիրում, ինչպէս նաեւ եկեղեցու հաստատած բարոյական, հոգեւոր ու հասարակական բնոյթ ունեցող կանոններում:

Այս ուղղութեամբ արժէ հպանցիկ կերպով յիշել մի շարք եկեղեցական հայրերի.

Յովհան Ոսկեբերանն անդրադառնալով Եսայու 66.13 համարին թէ՛ «*Ինչպէս մի մայր հանգստացնում է իր որդուն, այնպէս էլ ես ձեզ կը հանգստացնեմ*», ասում է, թէ Աստուած գուրգուրալից մօր նման սէր, հոգածութիւն ու խաղաղութիւն է շնորհում իր զաւակներին:

Օգոստինոսը յիշելով Բ Օրինաց 5.16 համարը՝ «*Պատւի՛ր քո հօրն ու մօրը, ինչպէս քո Տէր Աստուածը քեզ պատւիրեց, որպէսզի քո օրերը երկար լինեն...*» եւ Եփեսացիների 6.1-3 համարը թէ՛ «*Ո՛րդիներ, ձեր ծնողներին հնազանդ եղէ՛ք Տիրոջով, վասնզի դա է արժանին: Պատւի՛ր քո հօրն ու մօրը, որպէսզի քեզ լաւ լինի ու երկար կեանք ունենաս երկրի վրայ*», - ասում է, թէ մօր հանդէպ ցուցաբերած յարգանքն ու պատիւը մեր առջեւ լայնօրէն բացում են երկնային բարիքների դռները:

Կիրեղ Աղեքսանդրացին մէջբերելով Ղուկաս 2.44 համարը, որտեղ յիշում է, թէ Յովսէփը եւ Մարիամը «*սկսեցին փնտրել Յիսուսին ազգականների եւ ծանօթների մօտ*», ասում է, թէ ծնողները միշտ պէտք է փնտրեն իրենց զաւակներին, որպէսզի նրանք չկորչեն մեղքի ու անօրէնութեան փոշիներում:

Որոգինէսը մէջբերելով Ղուկաս 2.27 համարը, թէ «*Ծնողները մանուկ Յիսուսին տաճար բերեցին*», ասում է, թէ Յովսէփն ու Մարիամը դա անելով՝ ծնողներին սովորեցնում են իրենց զաւակներին եկեղեցի բերել:

Հայ Եկեղեցու հայրերն եւս յաճախակի կերպով անդրադարձել են մօր դերին:

Ներսէս Լամբրոնացին մէջբերելով Առակաց 29.15 համարը, թէ «*Գաւազանն ու յանդիմանութիւնը իմաստութիւն են տալիս, բայց իր կամքին թողնւած տղան իր մօրն ամաչեցնում է*», շեշտում է, որ մօր կողմից իր

զաւակների հանդէպ ցուցաբերած խստապահանջութիւնը նրանց առաջնորդում է պատասխանատուութեամբ ապրել իրենց կեանքը:

Յովհաննէս Երզնկացին ընդգծում է յատկապէս մօր դաստիարակիչ դերը՝ յիշեցնելով, որ եթէ նա թերանայ իր պատասխանատուութեան մէջ, Աստծու ատենանի առջեւ ի՛նքը պատասխանատու կը լինի զաւակների գործած չարիքների համար:

Բարսեղ Մաշկետրոցին վեր հանելով աղօթքի կարեւորութիւնը՝ մայրերին թելադրում է, որ աղօթել սովորեցնեն իրենց զաւակներին:

Գրիգոր Տաթեւացին շեշտում է, որ հայ մայրն արժանի է բարձրագոյն աստիճանի յարգանքի ու պատիւի, որովհետեւ նա Աստծու պատկերը հայ մանկան մէջ կազմաւորելու գծով յոյժ կարեւոր պարտաւորութիւն ունի:

Յովհան Մանդակունին այնքա՛ն ուժեղ կերպով է շեշտում հայ մօր տիպարը, որ նրան համարում է «մայրերի մայրը»:

Խրիմեան Հայրիկը մայրերին թելադրում է իրենց զաւակներին սովորեցնել Աւետարանը, որպէսզի նրանք սովորեն սիրել իրենց եղբորը, իրենց ընկերոջը եւ իրենց նմանին:

Ընդհանրական Եկեղեցու ու մեր եկեղեցու հայրերից քաղած այս մի փունջ վկայութիւնների լոյսի տակ անհրաժեշտ ենք համարում հետեւեալ ընդգծումները կատարել.

ա) Թէ՛ Ընդհանրական Եկեղեցու եւ թէ՛ Հայ Եկեղեցու հայրերն ընդհանրապէս անդրադարձել են ընտանիքի ու զաւակների նկատմամբ ծնողների ունեցած պարտաւորութեանը՝ հօրը եւ մօրը համարելով որպէս մէկ ամբողջութիւն, սակայն յատուկ շեշտ դնելով մօր դերի վրայ:

բ) Հետեւելով Աստուածաշնչին, նրանք կարեւորութեամբ ընդգծել են մօր դաստիարակիչ դերն ու նրան համարել քրիստոնէական առաքինութիւնների հարազատ արտայայտիչը՝ ընտանեկան թէ՛ հասարակական կեանքում, Աստուածածնին համարելով բացառիկ տիպար մայրութեան:

գ) Մեր եկեղեցու հայրերը հայ մօրը նկարագրել են ո՛չ միայն որպէս քրիստոնէական արժէքների ու առաքինութիւնների ճառագայթող ներկայութիւն՝ ընտանեկան յարկի տակ, այլ նաեւ նրա մէջ տեսել ազգային կեանքում կարեւոր դերակատարութեան կոչւած անձը:

Գ

Հայ մայրը՝ հայ կեանքում

Հայ մայրը հայ ժողովրդի պատմութեան մայր էջի վրայ միշտ եղել է առանցքային ներկայութիւն: Նրա տիրական ներկայութիւնն ու իւրապատուկ դերակատարութիւնն ակներեւ են մեր կեանքի կրօնական, մշակութային, քաղաքական, հասարակական, մարդասիրական մարզերում ու նոյնիսկ՝ ազատագրական պայքարում: Հնարաւոր չէ ամբողջական կերպով հասկանալ հայոց պատմութիւնը՝ առանց անդրադառնալու հայ մօր առաքելութեանը, եւ փոխադարձաբար՝ հնարաւոր չէ ճիշտ ու ամբողջական կերպով ըմբռնել հայ մօր եզակի դերը՝ առանց խորաթափանց ակնարկով քննելու հայոց պատմութիւնը:

Հայ Եկեղեցու առաքելութեանն ու ընդհանրապէս մեր ազգի կեանքին, հայ մայրը բերել է գործօն մասնակցութիւն ու կարեւոր նպաստ եւ իր սրբակենցաղ կեանքով, ծառայական դերով, անմնացորդ նւիրումով եւ նոյնիսկ արեան վկայութեամբ հարստացրել է մեր հաւաքական կեանքը՝ մեր պատմութեան ճակատագրական պահերին գրաւելով առաջնորդողի ու առաջնորդի դիրքը: Մեր մատենագիրները՝ Ագաթանգեղոսը, Խորենացին, Եղիշէն եւ ուրիշները, ինչպէս նաեւ մեր Եկեղեցու հայրապետները՝ սուրբ Գրիգոր Լուսաւորչից սկսած մինչեւ սուրբ Ներսէս Շնորհալի եւ նոր ժամանակների մեր հոգեւոր հայրերը սքանչելի տողերով են բնորոշել հայ մօր դերը:

Թերեւս ամենից աւելի ցայտուն ու հարազատ կերպով հայ մշակոյթն է, որ գրի ու գոյների, ձայնի ու կերպի միջոցով ներկայացրել է հայ մօր կերպարը, նրա իւրապատուկ տեղն ու դերը՝ մեր ազգի ու Հայրենիքի պատմութեան մէջ: Եւ աւելին՝ ընդհանրապէս, մեր գեղարւեստական գրականութիւնն է ու մանաւանդ բանաստեղծութիւնը, որ այնքա՛ն կենդանի պատկերներով բնութագրել է հայ մօրը եւ մեր ժողովրդի անխառն զգացումները՝ մօր նկատմամբ:

Արդարեւ, «Ո՛վ աղօթք ուսուց իմ բերնիս քնքուշ, որ պաշտեմ Աստուած» երգած Մատթէոս Մամուրեանից մինչեւ իր պանդուխտ զաւակի տունդարձի կարօտով ճենճերող հայ մօր վիշտն ու սպասումը նամակագրած Դանիէլ Վարուժանը, ազգին ու Հայրենիքին «հերոս որդիք» պարգեւած մայրերի առջեւ խոնարհած Ալեքսանդր Ծատուրեանից մինչեւ «Ո՛հ, ներէ ինձ... մօրս արտօ՛սըր տեսի...» երգած Պետրոս Դուրեանը, «Մեր տան աստուածն է մայրս» յուշակոթողած մայրերգակ Յովհաննէս Ծիրազից մինչեւ «Այ կը բաւէ, Տէ՛ր Աստուած, մեր տունն ու տեղ դարձուր մեզ» հայ մամիկի աղօթքը երկինքն ի վեր բարձրացրած Մուշեղ Իշխանը, հայ մօր աղօթական կեանքը թէ՛ «իրենց հոգին կը վառէին իբրեւ կանթեղ առտու-գիշեր, որ մութի տեղ՝ լոյս Աստուծոյ

զուլթը իջնէ» պարզ, սակայն խորիմաստ բառերով նկարագրած ժագ Ս. Յակոբեանից մինչեւ բազմատասնեակ այլ քերթողներ քայլել են իրենց մայրերի ունահետքերով եւ հայ մօրն առաջնորդել դէպի հայ հոգու եւ մտքի երկնամերձ բարձունքները: Հայ մայրը ինքը քայլել է ժամանակի հետ եւ նույնիսկ ժամանակներից վեր՝ որպէս լուսաճաճանչ ուղեցոյցը հայ ժողովրդի փոթորկալոյզ կեանքի:

Կարելի՞ է չիշել եւ մի պահ կանգ չառնել այն պաշտելի մայրերի առջեւ, ովքեր «վասն հաւատոյ ու վասն հայրենեաց» նշանաբանի հաւատով ու յանձնառութեամբ ապրեցին եւ «իմացեալ մահով» իրենց կեանքն ընծայաբերեցին: Կարելի՞ է չիշել այն պաշտելի մայրերին, ովքեր Դեր Զորի անապատներում եկեղեցի եւ դպրատուն դարձան, սարդարապատեան հրաշամարտը հաւատի պարիսպներով պողպատեցին եւ արցախեան երկնամերձ կատարներն իրենց ուխտի կրակով ու արեամբ ոգեզիկեցին եւ իրենց հաւատի կեանքով սրբացան ու արժանացան եկեղեցու եւ ազգի պաշտամունքի հասնող սիրոյն:

Արդարեւ, եթէ մայրական սիրոյ անհունութիւնը, խանդաղատանքի ջերմութիւնը, նւիրումի ազնւութիւնը եւ զոհաբերութեան զօրութիւնը բնութագրած մակդիրները, վերադիրները, ստորագելիներն ու ածականները մի պահ փորձենք ի մի խմբել, էջէ՛ր կը լցեն: Նոյնը կարելի է ասել հայ մօր բացառիկ կերպարը եւ առաքինի էութիւնը փառաբանելու նպատակով յօրինած բազմահարիւր բանաստեղծութիւնների ու երգերի համար:

Հայի համար ուրի՛շ է հայ մայրը՝ որպէս հաւատի, նւիրումի, կամքի ու սիրոյ վաւերական մարմնացում: Բանաստեղծի բառերով.

*«Թափառեցայ երկիրներ, ճամբաներով շատ անցայ,
Տեսայ գրկանք, տեսայ ցաւ, սէր ու խնդուժ ես տեսայ,
Բայց չտեսայ, չգտայ ո՛չ մէկ սիրտ այնքան արի,
Քու հոգիիդ չափ ազնիւ, մա՛յր իմ անուշ ու բարի»:*

Հայի շինջ զգացումներն իր մօր նկատմամբ հարազատօրէն նկարագրող Համաստեղի այս բառերը կարելի է տարածել բոլոր ժամանակների հայ մայրերի վրայ՝ սկսելով հեթանոսական շրջաններից ժառանգւած բեղմնաւորութեան եւ ինքնաբաշխումի խորհրդանիշ Անահիտ շաստւածուհուց՝ վեր հանելով երկնային առաքինութիւններով լուսապսակւած պայծառ ներկայութիւնը Հայ Եկեղեցու սրբուհիների՝ հասնելու համար հայոց պատմութեան ամենաճակատագրական պահերին բախտորոշ պատասխանատուութիւններ ստանձնած մեր թագուհիներին եւ իշխանուհիներին, ովքեր կոչեցին՝ Աշխէն թագուհի եւ Շուշանիկ Պահլաւունի, Փառանձեմ ու Սօսէ Մայրիկ ու մինչեւ նոր ժամանակների յայտնի ու անյայտ մեր բոլոր անզուգական մայրերը:

Վերջապէս, ինչպէս չիշել հայ մօր խոր հաւատի, անհուն սիրոյ ու ծով զոհողութեան առջեւ խոնարհուած Պարոյր Սեւակի հետեւեալ տողերը.

*«Եկէք այսօր մենք համբուրենք որդիաբար
Մեզ աշխարհում ծնած, սնած,
Մեզ աշխարհում շահած, պահած,
Մեզնից երբե՛ք չկշտացած,
Փռչի սրբող, լացք անող,
Անվերջ դատող, անվերջ բանող
Ա՛յս ձեռքերը-
Թող որ ճաքած ու կոշտացած,
Բայց մեզ համար մետաքսի պէս
Խա՛ս ձեռքերը...»:*

Հայ մարդու սրտի հարազատ թարգմանն է լինում Աւետիք Իսահակեանը, երբ ասում է. *«Ամենայաւ կիներ մա՛յրն է: Մօր սիրտը մարդկութեան սիրտն է, տիեզերքի սիրտը: Հէնց միայն մայր ունենալու համար արժէ աշխարհ գալ»:* Աւելի ճիշտ ասած՝ միմիայն Հայ Մայր ունենալու համար արժէ աշխարհ գալ...

Գ

Հայ մայրը՝ այսօր նոր մարտահրաւերների դիմաց

Բառերը մարդկային, որքան էլ ուժեղ ու գեղեցիկ լինեն, անզօր են արտայայտելու հայ մարդու սրտի ընդերքից ժայթքող շինջ զգացումները, անհուն սէրն ու խոր երախտագիտութիւնը՝ իր գոյաւորման աղբիւրն ու գոյատեւման ամրոցը դարձած հայ մօր նկատմամբ: Արդարեւ, իզուր չէ, որ մեր իմաստուն ժողովուրդն իր ամենանւիրական սրբութիւններին տւել է մայր մակդիրը՝ դրանք կոչելով Մայր Եկեղեցի, Մայր Հայաստան, մայր լեզու...

Հայ մայրը հոմանիշն է յաւիտենական արժէքների ու երկնատուր արժանիքների, գերագոյն իդէալների ու նւիրական ձգտումների, վե՛ր առաքինութիւնների ու ամուր սկզբունքների: Հայ մայրը պատւանդանն է մեր գոյու-

թեան, աղբիւրը մեր զօրութեան, միջնաբերդը մեր ինքնութեան, ներշնչարանը մեր պայքարի:

Արդ, առանց հայ մօր ճառագայթող ներկայութեան՝ երա՛շտ է մեր կեանքը: Առանց հայ մօր մարդակերտման ու հայակերտման առաքելութեան՝ անգո՛յն է մեր կեանքը: Առանց հայ մօր յանձնառու մասնակցութեան՝ աղքա՛տ է մեր կեանքը:

Հայ մայրո՛վ հայը հայ մնաց՝ պատմութեան ամեհի ալիքների դիմաց:

Հայ մայրո՛վ է հայը հայ՝ ներկայ ժամանակների ինքնութիւն ապականող հոսանքների դիմաց:

Հայ մայրո՛վ հայը հայ՝ կը մնայ՝ գալիք բոլոր ժամանակների մարտահրաւէրների դիմաց:

Այսօր, երբ դիտում ենք մեր ժողովրդի կեանքը, հարց ենք տալիս՝ արդեօք հայ մայրն այսօր իր հայ մօր առաքելութեան մէ՞ջ է. հայ մայրը որքանո՞վ է հաւատարիմ իր նւիրական կոչմանը...

Երբեմն հաճոյապաշտ կեանքի գերին է նա:

Երբեմն՝ ընտանեկան սրբութեանց խաթարիչը:

Երբեմն՝ օտարամուտ բարքերի տարածիչը:

Երբեմն հեռո՛ւ է նա հայ կեանքի ոգեշնչող ու հայացնող ներկայութիւնից...

Բայց ո՛չ: Հայադրոշմ արժանապատւութեան ուժեղ պաշտպան, հայկական սրբութեանց եւ աւանդութեանց արթուն պահապան, ազգային հաւաքական խոյանքների ուսուցիչ հայ մայրը այդպէս չի՛ կարող լինել, չպէ՛տք է լինի:

Մենք հաւատ ներշնչող, կամք կռւնող, յոյս ներարկող, սէր փոխանցող, այլ խօսքով՝ հայի մէջ քրիստոնեայ ու հայ մարդ կերտող ու այդ ճանապարհին իր անձն ընծայաբերող հայ մօր յոյժ կարիքն ունենք:

Գիտե՛նք՝ հեշտ չէ մայր լինելը. հեշտ չէ մա՛նւաւանդ հայ մայր լինելը:

Չմոռանանք երբեք, որ հայ մայրը եկեղեցի՛ դարձաւ, այնտեղ՝ որտեղ եկեղեցի չունեցանք. դպրո՛ց դարձաւ, այնտեղ՝ որտեղ դպրոց չունեցանք. հայրենի՛ք դարձաւ, երբ հայրենիք չունեցանք:

Նո՛յնը կոչւած է լինել հայ մայրն այսօր ու միշտ: Սա՛ է հայ մօր հարազատ կոչումը: Բի՛ւր յարգանք հայ մայրերին:

* * *

Ներկայ տարին «Հայ Մօր Տարի» հռչակելով՝ մեր սպասումն է, որ.

ա) Անդրադառնանք մեր կեանքում հայ մօրը վիճակւած նւիրական առաքելութեանը:

բ) Վերահաստատենք հայ մօր նկատմամբ մեր ունեցած խորունկ սէրն ու յարգանքը:

գ) Միաժամանակ, հայ մօրը յիշեցնենք իր եզակի դերն ու ճշմարիտ դիմագիծը միշտ պայծառ պահելու հրամայականը:

Հետեւաբար՝ մեր այս սպասումների լոյսի տակ՝ մեր հայրական թելադրանքն է՝ ուղղւած մեր թեմակալ առաջնորդներին, հոգեւոր դասին, ազգային իշխանութիւններին ու մեր կեանքում գործող բոլոր կառույցներին, որ ներկայ տարւայ ընթացքում յատուկ նախաձեռնութիւններով վերաշնչեն, վերյիշեցնեն ու վերարժեւորեն հայ մօր տիպարը՝ իր հարազատ պատկերով ու առանցքային դերով՝ մեր եկեղեցու, ազգի ու Հայրենիքի կեանքում:

Աղօթում ենք առ Բարձրեալն Աստուած, որ իր երկնային շնորհներով շնորհազարդի մեր մայրերին, որպէսզի վերանորոգ նւիրումով կարողանան քրիստոնէական հաւատով թրծել եւ ազգային արժէքներով ու իդէալներով կազմաւորել իրենց զաւակներին:


Հայրական ջերմ սիրով՝

ՉՕՍԻՅՆՅՆՅԵՆ
ՉԾՉԹ Չ Ի Չ ԱՁԾՁԷԻ ՁԵ
ԹՕԻ ՁԷԻ ՉՍՍ Ի ՁԷՁԷԻ ՁԵՍ

1 յունւարի 2013

Անթիլիաս, Լիբանան

(Արեւելահայերէնի վերածւած)





² è ² æÛàð, èð´ ²¼² Û Ðúð ä²î ¶ ² ØÀª
è. Ì ÛÛ, ² Û ì úÛÆ ² è ÂÆð

ԲԵԹՂԵՀԼՄԸ ՀՈՎԻԻՆԵՐԻ ՃԱՆԱՊԱՐՀԸ

«Մարդու Որդին եկաւ փրկելու կորածը»:
(Մտ 18.11)

Ինչքան մեծ ցնծութեամբ եւ ուրախութեամբ լսոււմ են նորից
Ս. Մենդեան աւետարտոր գանգերը, եւ միլիոնաւոր հաւատացեալներ
խոնարհութեամբ նայոււմ են Բեթղեհէմի անշուք մասուրին եւ բարձ-
րաձայն երգոււմ են շարականագիր վարդապետի բառերը փոխ առ-
ներով.-

«Խորհուրդ մեծ եւ սքանչելի
Որ յայսմ ատր յայտնեցաւ...
Որդիք մարդկան օրհնեցէք,
Զի վասն մեր մարմնացաւ...»:

Այո՛, այսօր յայտնեց մեծ ու սքանչելի խորհուրդը, մարդկանց որդիներ՛ր, օրհնեցէ՛ք Նրան, որովհետեւ մեզ
համար մարմնացաւ:

Երկնային հրեշտակները պարզ ու անմեղ հովիւների միջոցով մեղքի ու խաւարի մէջ տւայտող մարդկու-
թեանն աւետեցին Ս. Մենդեան պատգամը.- «Փառք ի բարձունս Աստուծոյ, եւ յերկիր խաղաղութիւն, ի մարդիկ
հաճութիւն» (Ղկ 2.14-15):

Բեթղեհէմի ճանապարհը՝ ուրախութեան ճանապարհ,
Մարմնացեալ աւետիսին ականատես լինելու ճանապարհ՝
Հանդիպելու ուրախութեան ծնունդին
Եւ Սպասւածին ողջունելու:

Բեթղեհէմի ճանապարհը վազք է՝ դէպի դարերի պատգամ,
Յոյգերի՛ եւ գեղեցկագո՛յն գգացումների հեւքի ճանապարհ,
Վերադարձի ճանապարհ՝ դէպի նոր կեանք՝ Նորածնի հանդիպումով:

Քսան դարեր անցել են այն օրւանից, բայց Բեթղեհէմեան պատգամը մնացել է նոյնը. Քրիստոս որպէս Քաջ
հովիւ եկաւ փրկելու կորածը:

Քրիստոս որպէս ճայնն Աստծու, փարիսեցիներին բացատրոււմ էր իր մարդեղութեան խորհուրդը, աշխարհ
գալու կենսական նպատակը, եւ ինքն իրեն ներկայացնում է քաջ հովիւ օրինակով եւ ասում. «Ես եմ իսկական
հովիւր: Իսկական հովիւն իր կեանքն է տալիս ոչխարների համար» (ՅՀ 10.11): Այստեղ Քրիստոսը մի գանազա-
նութիւն է դնում վարձկան հովիւի եւ ճշմարիտ, քաջ ու արթուն հովիւի միջեւ եւ ասում, որ վարձկանը իրաւ,
ճշմարիտ եւ արթուն հովիւ չէ, տէրը չէ իր ոչխարների. երբ գայր՝ թշնամին, գայիս է, թողնում է ոչխարներին
անտէր եւ փախչում է, երբե՛ք չի մտահոգւում, գոհողութիւն յանձն չի առնում ոչխարներին փրկելու չարից,
գայի յափշտակիչ ձեռքից: Տակաւին Քրիստոսը շարունակում է լաւապէս բացատրել իր խօսքը եւ ասում է.
«Ես եմ իսկական հովիւր: Ծանաչում եմ Իմ ոչխարներին, եւ նրանք էլ Ինձ են ճանաչում» (ՅՀ 10.14): Քրիստոսի
հասկացողութեամբ, ճշմարիտ հովիւր ոչխարների բուն տէրն է ու արածացնողը միանգամայն: Ճշմարիտ հո-
վիւր, երբ արածացնելու է տանում իր ոչխարներին, նաեւ ձայն է տալիս նրանց. ոչխարներն իրենց հովիւ ձայ-
նը ճանաչում են, հովիւն էլ իր ոչխարներին է ճանաչում: Արածացնելու պահին, երբ թշնամին՝ գայրը, մօտենայ
ոչխարներին՝ հօտը ցրելու, իսկական հովիւն իր անձը կը վտանգի, իր անձը կը գոհի, մինչեւ որ ոչխարին գայի

բերանից ազատի:

Ո՞վ է հովիւը: Ես չեմ, դու ես, դուք էք, մենք բոլորս էլ հովիւներ ենք, եւ առանց Բեթղեհէմի ճանապարհին հովուութիւն չկա՛յ: Մէկը որպէս հոգեւոր առաջնորդ հովիւ է, միւսը՝ որպէս ընտանիքի հայր, ուսուցիչը դպրոցում հովիւ է, մի խօսքով՝ բոլորս էլ հովիւներ ենք եւ պարտաւոր ենք մեր հայեացքը դարձնել դէպի Բեթղեհէմ, լոյսի եւ յոյսի օրրանը:

Ո՞վ է հովիւը:

Սիրող անձ է. գիտէ ինչ է նշանակում սիրել,

Հոգատար անձ է. գիտէ խնամել,

Քաջ անձ է. գիտէ կուել ու պաշտպանել իր սեփականը:

Ո՞վ է հովիւը: Երբե՛ք չենք կարող տարակուսել, որ իսկական, քաջ եւ արթուն հովիւը ՔՐԻՍՏՈՍ ԻՆՔՆ Է. Քրիստոս որպէս քաջ հովիւ՝ մարդկութեան զոհը դարձաւ, որպէսզի մարդուն հաշտեցնի Աստծու հետ, որպէսզի մարդիկ փրկւեն իրենց մեղքերից: Նա իր անձը զոհեց, իր կեանքը տւեց իր ոչխարների, իր հօտի՝ իր ժողովրդի համար: Իրաւ ոչխարները՝ Նրա հետեւորդները, նրանք են՝ ովքեր ճանաչում են իսկական հովիւն, յսում են Քրիստոսի ձայնը եւ հետեւում են Նրան:

Երբ Յիսուսին ենք նայում, նոյն հօտի ոչխարներն ենք: Հետեւաբար, այսօր որպէս հաւատարիմ ոչխարներ, եթէ ուզում ենք հետեւել Քրիստոսին՝ Մեծ Հովապետին, ընդունե՛նք Նրան որպէս մեր կեանքի ապաւէնն ու նպատակակէտը, «Ճանապարհը, Ծշմարտութիւնը եւ Կեանքը»: Ժանաչե՛նք Նրան, յսե՛նք Նրա ձայնը եւ հաւատանք, որպէսզի կարողանանք վայելել Նրա մշտական ներկայութիւնն ու հսկողութիւնը՝ հեռու մնալու ամէն տեսակ չար փորձութիւններից եւ մեղքի կապանքներից: Լինե՛նք փրկութեան արժանի հաւատարիմ ոչխարներ՝ ժառանգորդները՝ երկնքի արքայութեան:

Երբ միմեանք ենք նայում՝ հովիւներ ենք. ինչքա՛ն պարտաւորութիւններ ունենք՝ սիրելու, խնամելու եւ քաջաբար նւիրելու:

Բեթղեհէմի ճանապարհը կեանքի ճանապարհ է, որ մեզ հանդիպեցնում է Մեծ Սիրոյ ծնունդին: Նորածնի ծնունդի մէջ է մարդկային ամէն ուրախութիւն: Գնալ ընդառաջ այդ ուրախութեան՝ նշանակում է այն մեր կեանքի մասնիկը դարձնել եւ ուրախանալ ծնունդով՝ Յիսուսի ծնունդով սիրել, Յիսուսի ծնունդով հոգատար դառնալ, Յիսուսի ծնունդով արիանալ:

Փրկութիւնը հովուութեամբ է լինում, Յիսուսի պատգամած հովւի պատկերով՝ սիրելու, խնամելու եւ զոհաբերելու:

Ահա այս խորհուրդն է, որ տօնում ենք այսօր, Հայաստանեայց Առաքելական Սուրբ Եկեղեցու զաւակներս: Ծնունդը Հովապետի, մեր հօր Փրկչի՝ Յիսուս Քրիստոսի...:

Սա՛ է պատգամը Ս. Ծննդեան...:

* * *

Ս. Ծննդեան նւիրական այս տօնին, սիրոյ իմ սրտագին ողջոյնս ուղղում եմ ձեզ՝ բոլորիդ, Պատգամաւորական ժողովի անդամներին, Կրօնական եւ Թեմական խորհուրդներին, հոգեւորականաց դասին, ազգային-եկեղեցական մարմիններին, կրթական, բարեսիրական, կանանց, երիտասարդական, մարզական եւ մշակութային միութիւններին, կազմակերպութիւններին, ազգային վարժարանների եւ Կիրակնօրեայ դպրոցների ուսուցչական կազմերին եւ ուսանողութեանը, Ծնողական խորհուրդներին, եկեղեցու սպասաւորներին, դպրաց դասերին, ազգային հաստատութիւններին եւ մեր ժողովրդի բոլոր զաւակներին անխտիր:

Ձեզ եւ մեզ մեծ աւելիս՝
Քրիստոս ծնեց եւ յայրնեց:

6 յունւար 2013
Ս. Ամենափրկչեան Վանք
Նոր Զուղա

ԲԱԲԳԷՆ ԵՊՍ. ԶԱՐԵԱՆ
Առաջնորդ
Սպառնացի Հայոց Թեմի

ԱՄԱՆՈՐԸ ԵՒ Ս. ԾՆՆԴԵԱՆ ՏՕՆԵՐԸ ՄԵԾ ՇՈՒՔՈՎ ՆՇԻԵՑԻՆ ՍՊԱՀԱՆԻ ՀԱՅՈՑ ԹԵՄՈՒՄ



2013 թականի յունարի 1-ի ժամը 00:30-ին, նախագահությամբ Սպահանի Հայոց Թեմի առաջնորդ գերշ. Տ. Բաբգէն եպս. Չարեանի, Գոհաբանական աղօթք կատարեց Նոր Զուղայի Ս. Ամենափրկչեան Վանքի Ս. Յովսէփ Արեմաթացի եկեղեցում, որտեղ առաջնորդ Սրբազան Հայրն իր ամանորեայ պատգամը յղեց ներկայներին:

հրրդի իրագործած աշխատանքների մասին, իսկ շնորհատրանիքի ուղերձով հանդէս եկաւ Ս. Ամենափրկչեան Վանքի «Կոմիտաս» երգչախումբը: Վերջում Սրբազան Հայրը կրկին շնորհատրեց եւ բարեբաստիկ առիթի կապակցությամբ բարեմաղթանքներ կատարեց:



Ծաբաթ՝ յունարի 5-ի երեկոյեան ժամը 4:30-ին, Ծարգալոյցի առթիւ Նոր Զուղայի եւ Ծահինշահրի եկեղեցիներում մատուցեց Ս. Պատարագ: Թեմակալ առաջնորդը նախագահեց Նոր Զուղայի Ս. Յովհաննու եկեղեցու Ս. Պատարագը:

Նոյն օրն առաւօտեան ժամը 10-ին, կրկին Ս. Ամենափրկչեան Վանքի մայր տաճարում, մատուցեց Ս. Պատարագ: Օրւայ պատարագիչն ու քարոզիչն էր թեմակալ առաջնորդ Սրբազան Հայրը:

Կիրակի՝ յունարի 6-ի առաւօտեան ժամը 9:30-ին, դարձեալ Նոր Զուղայի եւ Ծահինշահրի եկեղեցիներում մատուցեց Ս. Պատարագ՝ Ս. Ծննդեան եւ Աստածայայտնութեան տօների առթիւ եւ ապա կատարեց Զրօրհնէքի արարողութիւն: Նոր Զուղայի Ս. Ստեփանոս եկեղեցու Պատարագը մատուցեց Առաջնորդ Սրբազան Հօր միջոցով, որի ընթացքում նա իր հայրական պատգամը փոխանցեց ներկայ ժողովրդին: Սրբազան Հօր յաւուր պատշաճի քարոզն ընթերցեց նաեւ միւս եկեղեցիներում՝ յընթացս Ս. Պատարագի:

Արարողութիւնից յետոյ, գերշ. Տ. Բաբգէն եպս. Չարեան, Ամանորի կապակցութեամբ շնորհատրանքներն ընդունեց առաջնորդարանի Ծաղկեայ դահլիճում, ուր Սպահանի Հայոց Թեմի Թեմական Խորհրդի ատենապետ Նոէլ Մինասեանն ամփոփ զեկոյց ներկայացրեց անցնող մէկ տարւայ ընթացքում սոյն Խոր-

տեղի ունեցաւ նաեւ Ս. Ամենափրկչեան Վանքի Ս. Յովսէփ Արեմաթացի եկեղեցում՝ ձեռամբ առաջնորդ Սրբազան Հօր, որից յետոյ՝ նա Առաջնորդարանի Ծաղկեայ դահլիճում ընդունեց Ս. Ծննդեան տօնի առթիւ շնորհատրանքները:

Վերոնշեալ բոլոր արարողութիւններին ներկայ էին հոծ թւով հաւատացեալներ:

**ՍՊԱՀԱՆԻ ՀԱՅՈՑ ԹԵՄՈՒՄ
ԸՆԹԵՐՑԻԵՑ ՄԵԾԻ ՏԱՆՆ
ԿԻԼԻԿԻՈՅ Ն.Ս.Օ.Տ.Տ. ԱՐԱՄ Ա
ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ՀՈՉԱԿԱԳԻՐԸ՝
2013 ԹԻՎԿԱՆԸ**

«ՀԱՅ ՄՕՐ ՏԱՐԻ»

ՅԱՅՏԱՐԱՐԵԼՈՒ ԿԱՊԱԿՑՈՒԹԵԱՄԸ



Ծաբաթ՝ փետրարի 9-ի երեկոյեան, Նոր Զուղայի Ս. Գէորգ եկեղեցում տեղի ունեցած Կիրակնամուտքի ժամերգութեան աւարտին, Սպահանի Հայոց Թեմի առաջնորդ գերշ. Տ. Բագէն եպս. Չարեանի միջոցով ընթերցեց Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա Կաթողիկոսի հայրապետական գիրը՝ 2013 թուականը «Հայ Մօր Տարի» հռչակելու կապակցութեամբ, որտեղ ներկայ էին հոգեւորականաց դասը եւ հաւատացեալ ժողովուրդը:

Վեհափառ Հայրապետը «Հայ Մօր Տարւայ» հռչակագրում կարեւորութեամբ ընդգծելով Աստուածաշնչում ներկայացած մօր պատկերն ու մայր-գաւակ յարաբերութիւնը եւ հայ մայրերի անփոխարինելի դերակատարութիւնը՝ հայ ժողովրդի կեանքում, թելադրում է, որ անդրադառնալ մեր կեանքում հայ մօրը վիճակւած նւիրական առաքելութեանը, վերահաստատել հայ մօր նկատմամբ ունեցած խորունկ սէրն ու յարգանքը եւ նրան յիշեցնել իր եզակի ու ճշմարիտ դիմագիծը միշտ պայծառ պահելու հրամայականը:

Հռչակագրի ընթերցման աւարտին թեմակալ առաջնորդ Սրբազան Հայրը ողջունեց Վեհափառ Հայրապետի մտայղացումը եւ դիմելով ներկայ հաւատացեալներին, ի մասնաւորի հայ մայրերին, յայտարարեց, որ յատուկ ձեռնարկներով ու միջոցառումներով արժեւորելու են հայ մօր դերակատարութիւնը եւ նւիրական առաքելութիւնը:


Նոյն օրը, Շահինշահրում եւս Կիրակնամուտքի արարողութեան աւարտին, համայնքի հոգեւոր հովիւ հոգշ. Տ. Անանիա վրդ. Գունանեանը բազմաթիւ հաւատացեալների ներկայութեամբ ընթերցեց հռչակագիրը:



Մեծի Տանն Կիլիկիոյ Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա Կաթողիկոսը վերջին 10 տարիներն անանակոչել է ըստ հետեւեալի.-

- 2003: **ԱՍՏԻԱԾԱՇՆՉԻ ՏԱՐԻ**
- 2004: **ՀԱՅ ԸՆՏԱՆԻՔԻ ՏԱՐԻ**
- 2005: **ԱԶԳԱՅԻՆ ՊԱՀԱՆՋԱՏԻՐՈՒԹԵԱՆ ՏԱՐԻ**
- 2006: **ՀԱՅ ԴՊՐՈՑԻ ՏԱՐԻ**
- 2007: **ՀԱՅ ԼԵԶԻԻ ՏԱՐԻ**
- 2008: **ՔՐԻՍՏՈՆԷԱԿԱՆ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹԵԱՆ ՏԱՐԻ**
- 2009: **ԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹԵԱՆ ՏԱՐԻ**
- 2010: **ՀԱՅ ԿՆՈՋ ՏԱՐԻ**
- 2011: **ՀԱՅ ՄԱՆԿԱՆ ՏԱՐԻ**
- 2012: **ՀԱՅ ԳՐՔԻ ՏԱՐԻ**

2013: ՀԱՅ ՄՕՐ ՏԱՐԻ



ՔԱՂԱՔԱՎԱՐԱԿԱՆ ԱՅՅԵԼՈՒԹԻՒՆ ԱՄԱՆՈՐԻ ԱՌԹԻՒ



Շաբաթ՝ 2013 թականի յունարի 5-ի ճաշւայ ժամը 12:00-ին, Ս. Ամենափրկչեան Վանք այցելեցին Սպահան քաղաքի քաղ-խորհրդի ատենապետ պրն. Հաջոասուլիհան եւ 5-րդ շրջանի քաղաքապետ պրն. Ասաոզադեգանը:

Հիւրերն ընդունելութիւն գտան Ս.Ա. Վանքի Ծաղկեայ դահլիճում: Հանդիպմանը ներկայ էին թեմակալ առաջնորդ գերշ. Տ. Բարգէն եպս. Չարեանը, Սպահանի Հայոց Թեմի Պատգամատրական Ժողովի Դիւանի ատենապետ պրն. Աշոտ Դալթեանը, Թեմական Խորհրդի ատենապետ. պրն. Նոէլ Մինասեանը, Կրօնական Խորհրդի ատենապետ պրն. Արշալոյս Խուդավերդեանը եւ արժն. Տ. Մեսրոպ քհնյ. Գալստանեանը:

Թիւններին, յիշեցրեց, որ նկատի առնելով իսլամական սուգի օրերի զուգադիպումը 2013 թականի ամանորեայ օրերին, Առաջնորդարանի կողմից հայ համայնքին յայտարարել է տօնական միջոցառումներն աւելի զուսպ եւ պատշաճ կազմակերպել՝ յարգելով իսլամական սգոյ օրերի տրամադրութիւնը:



Քաղ-խորհրդի ատենապետ պրն. Հաջոասուլիհան շնորհակալութիւն յայտնելով ընդունելութեան համար, իր շնորհատրանքները փախանցեց առաջնորդ Սրբազան Հօրը, ազգային մարմիններին եւ հայ համայնքին՝ Ամանորի եւ Յիսուս Քրիստոսի Ս. Ծննդեան տօնի առթիւ, եւ դրատանքով արտայայտեց Առաջնորդարանի կեցածքի եւ գործունէութեան մասին:

5-րդ շրջանի քաղաքապետ պրն. Ասաոզադեգանը, շնորհատրանքներ փոխանցելուց յետոյ, իբրեւ առաւել ծանօթացում՝ մանրամասն տեղեկութիւններ փոխանցեց պրն. Հաջոասուլիհայի անցեալի եւ ներկայի գործունէութեան եւ վարած պաշտօնների մասին:

Թեմական Խորհրդի ատենապետ՝ պրն. Նոէլ Մինասեանը, գոհունակութիւն յայտնելով հայ համայնքի նկատմամբ Սպահանի պետական մարմինների տա-



Սկզբում գերշ. Սրբազան Հայրը բարիգալստեան խօսք ուղղեց հիւրերին եւ գովասանքով արտայայտեց քաղաքապետարանի եւ քաղ-խորհրդի գործունէութեան վերաբերեալ՝ նրանց աշխատանքների յաջողութեան արգասիքը համարելով Սպահան քաղաքի բարօր եւ ծաղկուն կարգավիճակը: Առաջնորդ Սրբազան Հայրն անդրադառնալով միաստուածեան կրօնների համակեցութեան եւ բարի-դրացիական յարաբերու-

Շարունակութիւնը՝ 13-րդ էջում

ՍՊԱՅԱՆԻ ՆԱՅԱՆԳԱԴԵՏԻ ԱՅՅԸ Ս. ԱՄԵՆԱՓՐԿՉԵԱՆ ՎԱՆՔ



Չորեքշաբթի՝ յունվարի 30-ի կէսօրից յետոյ ժամը 4-ին, Նոր Տարւայ եւ Ս. Ծննդեան տօների առթիւ շնորհաւորանքներ փոխանցելու նպատակով, Ս. Ամենափրկչեան Վանք այցելեցին Սպահանի նահանգապետ Ալիոեզա Ջաքեռ-Էսֆահանցին, արտաքին գործոց նախարարութեան Սպահան նահանգի ներկայացուցչութեան նախագահ Մոհամմադոեզա Քառչենասը եւ նահանգապետարանի մի շարք բարձրաստիճան պաշտօնեաներ:

Նահանգապետին եւ նրա ընկերակիցներին առաջնորդարանի Ծաղկեայ դահլիճում ջերմ դիմաւորեցին՝ Սպահանի Հայոց Թեմի առաջնորդ գերշ. Տ. Բաբգէն եպս. Չարեանը, Թեմի Պատգամաւորական Ժողովի Դիւանի, Թեմական ու Կրօնական խորհուրդների ատենապետեր՝ Աշոտ Դաւթեանը, Նոէլ Մինասեանը եւ Արշալոյս Խուդավերդեանն ու Կրօնական Խորհրդի անդամներ՝ Գարեգին Մարկոսեանը եւ Սաքո Տէր-Յովհաննիսեանը:

Սկզբում առաջնորդ Սրբազան Հայրը հանդէս եկաւ բարիգալստեան եւ ողջոյնի խօսքով, որից յետոյ՝ խաղաղութիւն ցանկանալով աշխարհին, ի մասնաւորի Սիրիայի համար՝ անելացրեց, թէ Քրիստոսը Բեթղեմիէից մեզ համար խաղաղութեան, սիրոյ, համերաշխութեան եւ արդարութեան պատգամ բերեց, սակայն դժբախտաբար այսօր մարդիկ մոռանալով Քրիստոսի պատգամը՝ հեռանում են Աստծու ներկայութիւնից, եւ այդ պատճառով անհրաւորութիւններ են տիրում աշխարհում: Սրբազան Հայրն իր արտայայտութեան աւարտին շնորհաւորանքի խօսք ուղղեց՝ իսլամ կրօնի մարգարէի ծննդեան տօնի եւ Իրանի Իսլամական Յեղափոխութեան 34-րդ տարեդարձի կապակցութեամբ:

Այնուհետեւ նահանգապետ Ալիոեզա Ջաքեռ-Էսֆահանցին շնորհաւորանքներ եւ բարեմաղթութիւններ փոխանցելով Նոր Տարւայ եւ Ս. Ծննդեան տօների կապակցութեամբ՝ անդրադարձաւ Կրօնների Երկխօսութեան Կենտրոնի կատարած աշխատանքներին ու նշելով համաշխարհային նոր քաղաքական կացութիւնը՝ յոյժ կարեւոր համարեց ներկայ ժամանակաշրջանում միաստուածեան կրօնների փոխըմբռնման շրջագծում կազմակերպւող միջոցառումները:

Հանդիպման շարունակութեան մէջ պրն. նահանգապետը կարեւորութեամբ ընդգծելով Իրանի նկատմամբ կիրառուած տնտեսական շրջափակման հետեւանքների դիմագրաւման ուղղութեամբ նախատեսուած ելքերն ու միջոցները՝ ուրախութեամբ նշեց Իրանի, ի մասնաւորի Սպահանի գիտնականների ձեռքբերումները՝ տնտեսական շրջափակման ժամանակահատուածում:

Նահանգապետ Ջաքեռ-Էսֆահանցի արտայայտութիւններից յետոյ, կազմակերպւած հիւրասիրութեան ընթացքում, մտերիմ մթնոլորտի ներքոյ, շարունակեց զրոյցը եւ Թեմական Խորհրդի ատենապետ Նոէլ Մինասեանն անդրադառնալով Իրան-Հայաստան յարաբերութիւնների կարեւորութեանը, առաջարկեց Երեւան-Սպահան քոյր քաղաքների միջեւ անելի սերտ յարաբերութիւններ ստեղծել եւ առհասարակ Իրան-Հայաստան յարաբերութիւններն առանել զարգացնել: Նահանգապետ Ջաքեռ-Էսֆահանցին ընդառաջելով առաջարկին՝ Թեմի ներկայացուցիչների հետ պայմանաւորեց, որ Իսլ. Խորհրդարանում հարաւային իրանահայութեան պատգամաւոր Ռոբերտ Բեգլարեանի, Իրանում Հայաստանի դեսպանատան եւ Սպահանի Հայոց Թեմի ներկայացուցիչների մասնակցութեամբ, մօտ ապագայում գործնական աշխատանքներ ձեռնարկի նշուած յարաբերութիւնների բազմակողմանի զարգացման կապակցութեամբ:

ԱՄԱՆՈՐԻ ԱՌԹԻՒՄՈՒՄԻ ՍՊԱՀԱՆԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՔԱՂԱՔԱՊԵՏԻ ԱՅՑԵԼՈՒԹԻՒՆԸ

Չորեքշաբթի՝ 2013 թվականի փետրվարի 6-ի ճաշային ժամը 13:30-ին, Ս. Ամենափրկչեան Վանք այցելեցին Սպահան քաղաքի ընդհանուր քաղաքապետ Կարեն Սաղայան-Նեժդյանը, ընկերակցությամբ Սպահան քաղաքի 5-րդ շրջանի քաղաքապետ Կարեն Ասատրյանի և քաղաքապետարանի մի քանի բարձրատիճան պաշտօնեություններ, ովքեր հանդիպում ունեցան Ազգ. Առաջնորդարանի պատասխանատուների հետ:



Ս. Ամենափրկչեան Վանքի Ծաղկեայ դահլիճում հիւրերին ընդունեցին թեմակալ առաջնորդ գերշ. Տ. Բաբգէն եպս. Չարեանը, Սպահանի Հայոց Թեմի Պատգամաւորական Ժողովի Դիւանի, Թեմական և Կրօնական խորհուրդների ատենապետներ Կարեն Աշոտ Դաւթեանը, Նուէլ Մինասեանը և Արշալոյս Խողապետեանը: Ներկայ էին նաեւ Կրօնական Խորհրդի, Հաշտեքնիչ և Կալամա-Տնտեսական մարմինների ներկայացուցիչները:

Գերշ. Սրբազան Հայրն իր ուրախութիւնը յայտնեց քաղաքապետների այցելութեան առթիւ, գնահատելով նրանց շինարար և բեղուն գործունէութիւնը՝ Սպահան քաղաքի ծաղկման և գեղեցկացման ուղղութեամբ: Առաջնորդ Սրբազան Հայրը յոյս յայտնելով, որ 2013 թվականը լինելու է Իրանի և համայն աշխարհի մարդկութեան համար խաղաղութեան և առողջութեան տարի, առանձնաբար յիշեց Սիրիայում տիրող պատերազմական կացութեանը, այնտեղի ժողովրդի ծանր պայմաններին և նրանց դժարութիւններին վերջ տալու անհրաժեշտութիւնն ու կենսական հրամայականը: Ապա Սպահանի և Իրանի բոլոր պատասխանատու անձանց և ժողովրդին շնորհաւորեց Իրանի Իսլամական Յեղափոխութեան 34-րդ տարեդարձի և իսլամ կրօնի հիմանդիր Մուհամմեդ մարգարէի ծննդեան առիթներով: Առաջնորդ Սրբազան Հայրը նշեց, որ խաղաղ և համերաշխ ապրելու գաղտնիքը կայանում է աստուածամերձ կեանք ապրելու և բարոյական ու եղբայրասիրութեան սկզբունքներին հաւատարիմ մնալու

մէջ, որի համար աղօթեց Աստուած իր շնորհքները առատօրէն բաշխի մարդկութեանը, որպէսզի վերանան սատանայական բոլոր փորձանքներն ու սաղաքները մարդկային կեանքից:

Քաղաքապետ Կարեն Սաղայան-Նեժդյանը, երկրորդելով առաջնորդ Սրբազան Հօր խօսքերը, ինքն էս շեշտեց, որ մարդ արարածը երբ հեռանում է աստծու պատկերանկերի գործադրութիւնից և հաւատն առանձնացնում է իր քաղաքական կեանքից, մատնուում է սարսափելի դժարութիւնների և կրում ծանրագոյն վնասներ: Նա բազմաթիւ օրինակներ բերելով մարդկային կեանքի պատմութիւնից, իր համոզումը յայտնեց, որ մարդը կարող է խաղաղ և երջանիկ ապրել, եթէ Աստծու նկատմամբ իր հաւատն ու վստահութիւնը շաղախի իր կեանքի բոլոր ոլորտներին: Պրն. Սաղայան-Նեժդյան իր շնորհաւորանքները փոխանցեց Ամանորի և Ս. Ծննդեան տօների առթիւ, մաղթելով աշխարհում Քրիստոսի անտաճ խաղաղութեան և սիրոյ առաւել տարածումը:



Թեմական Խորհրդի ատենապետ Կարեն Նուէլ Մինասեանն էս իր հերթին ուրախութիւն յայտնեց երկու քաղաքապետների այցելութեան առթիւ, նաեւ յատուկ կերպով շնորհակալութիւն յայտնեց՝ Առաջնորդարանի և ընդհանրապէս հայկական թաղամասերի նկատմամբ քաղաքապետարանի կիրառած բարեսցական քաղաքականութեան համար: Պրն. Մինասեանը նաեւ խնդրեց պատասխանատուներին՝ Նոր Ջուղայի հայկական կրօնական, մշակութային և մարզական կենտրոնների առաւել պատշաճ շինութեան և պահպանման գործում անելիով նիւթա-բարոյական ներդրումներ և հնարարութիւններ յատկացուն:

Հանդիպման ասարտին, Կարեն Սաղայան-Նեժդյանը յուշանւերներ յանձնեց և Ս.Ա. Վանքի «Խաչատուր Կեսարացի» թանգարանի առջեւ հաւաքական կերպով լուսանկարելուց յետոյ, հրաժեշտ տուեց Ազգային Առաջնորդարանի պատասխանատուներին:

ԵԳԻՊՏԱԾԻ ՊԱՏԻՐԱԿՈՒԹԻՒՆ Ս. ԱՄԵՆԱՓՐԿՉԵԱՆ ՎԱՆՔՈՒՄ

Շաբաթ՝ 2013 թվականի փետրվարի 9-ի կեսօրից յետոյ ժամը 2:30-ին, Սպահանի Իսլամական Առաջնորդության եւ Մշակույթի Հիմնարկի Փոքրամասնությունների Բաժնի կազմակերպությամբ, եգիպտացի լրագրողների, քաղաքական կուսակցությունների գործիչների եւ համալսարանի դասախոսներից բաղկացած 7 հոգանոց մի պատվիրակություն ժամանեց Ս. Ամենափրկչեան Վանք եւ Ծաղկեայ դահլիճում հանդիպում ունեցաւ Սպահանի Հայոց Թեմի առաջնորդ գերշ. Տ. Բաբգէն եպս. Չարեանի հետ: Հանդիպմանը ներկայ էին Սպահանի Հայոց Թեմի Պատգամաւորական Ժողովի ատենապետ պրն. Աշոտ Դաւթեանը, Թեմական Խորհրդի ատենապետ պրն. Նոէլ Մինասեանը, Կրօնական Խորհրդի ատենապետ պրն. Արշալոյս Խուրավերդեանը, նոյն Խորհրդի անդամ արժն. Տ. Վազգէն քննյ. Քէօշկերեանը եւ Կրթական Խորհրդի ատենապետ պրն. Զանսոն Աղաբաբայեանը:



Հանդիպման սկզբում թեմակալ առաջնորդ Սրբազան Հայրը բարիգալստեան խօսք ուղղեց հիւրերին, ապա պատասխանելով նրանց հարցումներին՝ ընդհանուր տեղեկություններ փոխանցեց Թեմի կառուցի եւ գործունէութեան վերաբերեալ, խօսեց Իրանում եկեղեցական եւ կրօնական ոլորտներում հայութեան իրաւունքների ու ազատութեան մասին: Յաւելեալ մանրամասնություններ հաղորդեց արժն.

Տ. Վազգէն քննյ. Քէօշկերեանը՝ հայոց եկեղեցիների եւ դպրոցների ծրագրերի ու հնարաւորությունների վերաբերեալ:

Պրն. Նոէլ Մինասեանը, ողջունելով պատվիրակութեան անդամներին, տեղեկություններ փոխանցեց մասնաւորաբար Սպահանի Հայոց Թեմի տարածքում ապրող հայութեան հասարակական, մշակութային, կրօնական եւ ազգային գործունէութեան ու իրավիճակի մասին: Նա իր խօսքի մէջ ասաց. «Նոր Զուղայն իր հուլիսեամբ եւ 400-ամեայ գոյութեամբ, միշտ հանդիսանալով բազմաթիւ կրօնների համերաշխ համակեցութեան եւ խաղաղ երկխօսութեան բնորոշան, լաւագոյն օրինակ կարող է հանդիսանալ աշխարհի այլ երկրների համար՝ հանդուրժողականութեան եւ մարդկային իրաւանց սկզբունքների յարգման եւ իրագործման ուղղութեամբ»: Իր խօսքերի վերջին բաժնում, պրն. Մինասեանը երախտագիտութեամբ արտայայտեց 1915 թվականին թուրք ջարդարարների միջոցով կազմակերպուած Հայոց Ցեղասպանութեան կոտորածից փրկուած եւ Եգիպտոս գաղթած հայութեանը ապաստան տալու եգիպտացի ժողովրդի վերաբերմունքի մասին, միաժամանակ կարեւոր համարելով Իրան-Եգիպտոս քաղաքական եւ տնտեսական յարաբերությունների առաւել զարգացումն ու բարելաւումը:

Հանդիպումից յետոյ խումբն այցելեց Ս.Ա. Վանքի Ս. Յովսէփ Արեմաթացի եկեղեցի եւ «Խաչատուր Կեսարացի» անվան թանգարան:

Շարունակութիւն 10-րդ էջից

ՔԱՂԱՔԱՎԱՐԱԿԱՆ ԱՅՅԵԼՈՒԹԻՒՆ...

Ծած ուշադրութեան համար՝ Նոր Զուղայն, յատկապէս Ս. Ամենափրկչեան Վանքի շրջապատի անվտանգութեան, մասնաւորաբար բարեկեցութեան, հնագիտական արժէքի պահպանման, եւ հայկական թաղամասերում մեծ թւով ճաշարանների գոյացման թողած բացասական ազդեցությունների ուղղութեամբ մի շարք մտահոգություններ փոխանցեց հիւրերին, ովքեր նկատի ունենալով խնդիրների լրջութիւնը, խոստացան այդ պարագաները յատուկ ուշադրութեան արժանացնել եւ պատշաճ որոշումներ կայացնել:

Հանդիպման ասարտին, պետական հիւրերը յուշանւէր յանձնեցին Առաջնորդարանին, որից յետոյ պատվիրակությունն այցելեց Ս. Ամենափրկչեան Վանքի «Խաչատուր Կեսարացի» թանգարանը եւ Ս. Յովսէփ Արեմաթացի եկեղեցին, որտեղ նրանց համապատասխան բացատրություններ փոխանցեց: Թանգարան այցելած բարձրաստիճան հիւրերին յատուկ յուշամատենանում իր տպաւորությունների մասին արձանագրութիւն թողեց պրն. Հաջուասուլիհան:



ԻՐԱՆԻ ԻՍԼԱՄԱԿԱՆ ՅԵՂԱՓՈԽՈՒԹԵԱՆ ՅԿՐԳ ՏԱՐԵՎԱՐՁԻ ԱՌԹԻ ԿՈՓԵՏԱՆՔՍԵԱՆ ԱՐԱՐՈՂՈՒԹԻՒՆ՝ ՆՈՐ ԶՈՒՎԱՅԻ ՀԱՅՈՑ ԱԶԳԱՅԻՆ ԳԵՐԵԶՄԱՆԱՏԱՆԸ՝ ԻՐԱՔ-ԻՐԱՆ ՊԱՐՏԱԳՐԵԱԼ ՊԱՏԵՐԱԶՄԻ ՀԱՅ ՆԱՀԱՏԱԿՆԵՐԻ ՅԻՇԱՏԱԿԻՆ

Ուրբաթ՝ փետրվարի 8-ի առաւօտեան ժամը 10:30-ին, Նոր Զուղայի Հայոց Գերեզմանատանը, Իրանի Իսլամական Յեղափոխութեան 34-ամեակի առթիւ տեղի ունեցաւ Հոգեհանգստեան արարողութիւն՝ Իրաք-Իրան պարտադրեալ պատերազմի հայ նահատակների յիշատակին:

Հանդիսանում բոլորի համար: Մեր նահատակների ընտանիքներն ապրել են դժարին պահեր, որոնք առաջացել էին իրենց զաւակները կորցնելու պատճառով, այսօր՝ տասնամեակներ յետոյ, բոլորս հպարտութեամբ ենք յիշում մեր երիտասարդների զոհարելու թիւերը: Փառք ու պատիւ հայ նահատակների ընտանիքներին, որ նման երիտասարդներ դաստիարակեցին»:



Արարողութեանը ներկայ էին՝ Սպահանի Հայոց Թեմի առաջնորդ գերշ. Տ. Բաբգէն եպս. Զարեանը, արժն. Տ. Վազգէն քհնյ. Քեօշկերեանը, դպրաց դասը, ազգային մարմինների ներկայացուցիչները, հայ նահատակների հարազատները, Նոր Զուղայի Հայոց Ազգային «Արմէն» համալիրի տեսուչները, Ծնողական Խորհրդի ներկայացուցիչները, դպրոցի 5-րդ ու 6-րդ դասարանների աշակերտ-ուսուցիչները եւ համայնքի անդամները:

Պրն. Նոէլ Մինասեանն իր խօսքի շարունակութեան մէջ անդրադառնալով հայերի դերակատարութեանը Իրանի պատմութեան տարբեր հանգրուաններում, ասաց. «Հայ նահատակների կատարած սիրագործութիւնների շնորհիւ իրանահայութիւնը պետական տարբեր շրջանակներում պատուով է արտայայտուում այն դերակատարութեան մասին, որը ցուցաբերել է երկրի հողային ամբողջականութիւնը պաշտպանելու գործում»:



Թեմակալ առաջնորդի նախագահութեամբ Հոգեհանգստեան արարողութիւն կատարւեց նահատակներ՝ Վարդան Աբրահամեանի, Ռայմոնդ Բաղդամեանի (Խաթուն-Նեժմաղ) եւ Վրէժ Բաղումեանի շիրիմների վրայ:

Այնուհետեւ թեմակալ առաջնորդ Սրբազան Հայրը յիշելով Վարդանանց պատերազմի քաջերին, ասաց. «Վարդանանց նահատակները հաւատի, հայրենիքի եւ ազգի արժանապատուութեան համար իրենց կեանքը զոհեցին եւ իրենց արիւնը թափեցին, որպէսզի մենք պատուով ու պարգերես ապրենք: Ի՞նչ է տարբերութիւնը»:



նր: Նրանք նոյն նահատակներն են, ովքեր այս անգամ իրաք-իրան պարտադրեալ պատերազմում, իրենց անձերից վեր՝ գաղափարի եւ հայրենիքի հողային ամբողջականութիւնը պաշտպանելու համար, որպէս հաւատարիմ քաղաքացիներ, իրենց պարտականութիւնը կատարեցին եւ այդ ճանապարհին ընկան՝ մեր պատիւն ու արժանապատուութիւնը բարձր պահելով: Սիրելի՛ ծնողներ, դուք ձեզ հպարտ զգացէք, որ նման գաւակներ էք ունեցել»:

Վերջում նահատակ Վրէժ Բաղումեանի եղբայր պրն. Վարուժան Բաղումեանը, հայ նահատակների հարազատների անունից շնորհակալական խօսք ուղղեց առաջնորդ Սրբազան Հօրը, Թեմի ազգային մարմիններին եւ միւս ներկայներին՝ Հոգեհանգստեան արարողութեանը ներկայանալու եւ նահատակների հարազատներին մխիթարելու համար:



ՍՊԱՀԱՆԻ ՀԱՅՈՑ ԹԵՄԻ 15-ՐԴ ՆՍՏԱԵՐՋԱՆԻ ՊԱՏԳԱՄԱԻՈՐԱԿԱՆ ԺՈՂՈՎԻ ԸՆՏՐՈՒԹԻՒՆԵՐԻ ՆՈՐ ԶՈՒՂԱՅԻ ԹԵԿՆԱԾՈՒՆԵՐԻ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՀԱՆԴԻՊՈՒՄԸ՝ Ն.Ձ. ՀԱՅ Մ.Մ. «ԱՐԱՐԱՏ» ՄԻՈՒԹԵԱՆ ՍՐԱՀՈՒՄ



Կիրակի եւ երկուշաբթի՝ փետրարի 17-ի եւ 18-ի երեկոյեան ժամը 7:30-ին, Ն.Ձ. Հայ Մ.Մ. «Արարատ» Միութեան սրահում, կազմակերպութեամբ Սպահանի Հայոց Թեմի 15-րդ նստաշրջանի Պատգամաւորական Ժողովի Նոր Զուղայի Ընտրական Յանձնախմբի, կայացաւ սոյն ընտրատարածքի թեկնածուների ժողովրդական հանդիպումները՝ իւրաքանչիւր օր տասական թեկնածուների մասնակցութեամբ:

Երկու հանդիպումները վարեցին Արթին Մուրադեանն ու Ընտրական Յանձնախմբի անդամ Արսիկէ Անդրիասեանը, ովքեր սկզբում տեղեկութեան կարգով ներկայացրին Թեմի ազգային կառույցը եւ Ընտրական Յանձնախմբի կոչը:

Ծրագրերի երկրորդ բաժնում իրենց կենսագրականներով եւ ծրագրերով առանձնաբար ելոյթ ունեցան թեկնածուները՝ առաջին օրը Ալլէթ Աբրահամեանը, Մկրտիչ Աւետումեանը, Արշալոյս Դալթեանը, Վահան Թահմազեանը, Վահիկ Խուդաբախշեանը, Սքաւլէթ Հայրապետեանը, Գեղարդ Մանսուրեանը, Սասուն Մարկոսեանը, Վազրիկ Վարդանեանն ու Անդրէ Քալանթար-Օհանեանը, իսկ երկրորդ օրը հերթաբար ներկայացան թեկնա-

ծուներ՝ Սեդիկ Այազեանը, Մինաս Թահմազեանը, Ռուբեն Խաչիկ Գրիգորին, Արտիկ Մելիքեանը, Վարուժ Մինասեանը, Նիկիտ Միրզայեանը, Հենրիկ Յակոբեանը, Վահէ Ծահիջանեանը, Սարո Տէր-Յովհաննիսեանը եւ Արա Տէր-Ստեփանոսեանը:

Ելոյթների աւարտին թեկնածուները պատասխանեցին ներկաների հարցերին:



ԹՅՕՁԻՆՆԵՐԻ ՆՈՐ ԶՈՒՂԱ

Սիրելի հայրենակիցներ,

2013 թվականի փետրվարի 22-ին Սպահանի Հայոց Թեմի բոլոր շրջաններում տեղի ունեցան Պատգամատրական Ժողովի 15-րդ նստաշրջանի ընտրությունները:

Ստորև ներկայացնում ենք ընտրությունների ամբողջական արդյունքները.

ՆՈՐ ԶՈՒՂԱ

ՆՈՐ ԶՈՒՂԱ	ԶԵՆԱԿԱՆ	ԿՈՒՆԱԿԱՆ	
1. Վարուժ Մինասեան	836	11. Անդրե Զալանթար Օհանեան	513
2. Սեդիկ Ալազեան	731	12. Նիկիտ Միրզայեան	513
3. Ռուբեն Խաչիկ Գրիգորի	667	13. Գեղարդ Մանուրեան	510
4. Մկրտիչ Աւետուհեան	651	14. Վաչիկ Խուրաբախչեան	506
5. Արտիկ Մելիքեան	627	15. Վահան Թահմազեան	486
6. Վազրիկ Վարդանեան	625	16. Հենրիկ Յակոբեան	431
7. Սաքո Տեր Յովհաննիսեան	593	17. Արշալոյս Դաւթեան	355
8. Մինաս Թահմազեան	590	18. Արա Տեր Ստեփանոսեան	348
9. Վահե Շահիջանեան	568	19. Սասուն Մարկոսեան	310
10. Սքարլետ Հայրապետեան	566	20. Այլետ Աբրահամեան	287

1-ից 12 թեկնածուներն ընտրուել են 15-րդ նստաշրջանի Պատգամատրական Ժողովի Նոր Զուղայի պատգամատրոներ:

ՇԱՀԻՆՇԱՀԻՆ

ՇԱՀԻՆՇԱՀԻՆ	ԶԵՆԱԿԱՆ	ԿՈՒՆԱԿԱՆ	
1. Էդին Բաբումեան	238	3. Ալիս Մկրտչեան	174
2. Այիդա Մուրադեան	174	4. Մուկուչ Եղնազար Գրիգոր	90

1-ից 3 թեկնածուներն ընտրուել են 15-րդ նստաշրջանի Պատգամատրական Ժողովի Շահինշահի պատգամատրոներ:

ԱՆԻՍՏ

- Հայրուկ Փիլոսեան

ՇԻՐԱԶ

- Հերմոնդ Յարութիւնեան

ՓԵՐԻԱ

- Ջանիկ Նազարեան

Ընտրություններին մասնակցութեան ցուցանիշը փաստն է այն իրողութեան, որ մեր Թեմի ժողովուրդը գիտակից է իր ազգային-հասարակական իրաւունքներին եւ անտարբեր չէ համայնքային խնդիրների նկատմամբ:

4 մարտ 2013

Սպահանի Հայոց Թեմի
Թեմական Խորհուրդ

Ս. ՍԱՐԳԻՍ ԶՕՐԱՎԱՐԻ ՏՕՆԻ ԱՌԹԻԻ ԵՐԿՕՐԵԱՅ ԱՐԱՐՈՂՈՒԹԻՒՆՆԵՐ ՆՈՐ ԶՈՒՂԱՅԻ ՀԱՄԱՆՈՒՆ ԵԿԵՂԵՇՈՒՄ



Ուրբաթ եւ շաբաթ՝ յունւարի 25-ին եւ 26-ին, երկօրեայ արարողութիւններով մեծ շուքով նշուեց Ս. Սարգիս Զօրավարի տօնը՝ Նոր Զուղայի Ս. Սարգիս եկեղեցում, որը միաժամանակ նոյն եկեղեցու անանկոչութեան տօնն էր:

Այս տօնի առթիւ Նոր Զուղայի Հայոց Առաքելական Եկեղեցեաց Վարչութիւնը Ս. Սարգիս եկեղեցու շրջափակում կազմակերպել էր մատաղի զենման եւ հարիսայի պատրաստման ամենամեայ աշխատանքները, որոնց իրենց մասնակցութիւնն էին բերել մեծաթիւ հաւատացեալ ժողովուրդ:



Ուրբաթ՝ յունւարի 25-ի կէսօրից յետոյ, Ս. Սարգիս եկեղեցու շրջափակում, բազմաթիւ հայորդիների ներկայութեամբ, Սպահանի Հայոց Թեմի առաջնորդ գերշ. Տ. Բարգէն եպս. Զարեանի ձեռամբ կատարուեց աղօթհնէք, այնուհետեւ տեղի ունեցաւ ոչխարների զենում: Նոյն օրը՝ երեկոյեան, կատարուեց Հսկումի արարողութիւն, որտեղ թեմակալ առաջնորդ Սրբազան Հայրն անդրադառնալով «Ուր որ մեր գանձն է, այնտեղ կը դնենք մեր սիրտը» անտարանական հատածին՝ շեշտեց, որ մեր գանձը պէտք է տեսնենք յաւիտենական

արժէքների մէջ եւ պէտք է կապենք մեր եկեղեցու արժէքների ու սրբութիւնների հետ, որպէսզի կարողանանք Քրիստոսի ճշմարիտ եւ արժանաւոր հետետորդ դառնալ:

Շաբաթ՝ յունւարի 26-ի առաւօտեան, Ս. Սարգիս եկեղեցին ու շրջափակը լեցուն էին բազմաթիւ հաւատացեալներով, ի մասնաւորի երիտասարդներով: Ժամը 9:30-ին սկիզբ առաւ Ս. Պատարագը, որը մատուցեց առաջնորդ Սրբազան Հօր ձեռամբ: Արարողութեանը ներկայ էին նաեւ հոգեւորականաց եւ դպրաց դասերը: Ս. Պատարագի երգեցողութիւնը կատարում էր Ս. Ամենափրկչեան Վանքի «Կոմիտաս» երգչախումբը՝ ղեկավարութեամբ Արմէն Ամիրխանեանի:



Ս. Պատարագի ընթացքում յաւուր պատշաճի քարոզեց Սրբազան Հայրը: Նա ներկաներին ուղղած իր հայրական խօսքում այսպէս ասաց. «Քրիստոս եկաւ ցոյց տալու, որ դէպի փրկութիւն եւ յաւիտենական ուրախութիւն առաջնորդող ճանապարհը փշոտ ճանապարհ է: Այդ ճանապարհը դժւար, նեղութիւններով, չարչարանքներով ու հալածանքներով լեցուն ճանապարհ է: Առաքելներն այդ ճանապարհն ընտրելով՝ իրենց անձերը զոհաբերեցին, թողեցին ամէն ինչ ու հետեւեցին Քրիստոսին»: Սրբա-

Շարունակութիւնը՝ 20-րդ էջում

ՍՐԲՈՑ ՂԵՒՈՆԴԵԱՆՑ ՔԱՀԱՆԱՅԻՑ ՏՕՆԸ ՆՈՐ ԶՈՒՂԱՅՈՒՄ



Երեքշաբթի՝ 2013 թականի փետրվարի 5-ին, սրբոց Ղեւոնդեանց տօնին, որը տօնն է նաեւ քահանայութեան եւ քահանաների, սուրբ եւ անմահ Պատարագ մատուցեց Նոր Զուղայի Ս. Յովհաննու եկեղեցում, նախագահութեամբ Սպահանի Հայոց Թեմի առաջնորդ գերշ. Տ. Բաբգէն եպս. Զարեանի: Պատարագիչն էր Ծախիմշահրի հոգետոր հովիւ հոգշ. Տ. Անանիա վրդ. Գունանեանը: Ս. Պատարագի երգեցողութիւնը կատարեց Ս. Ամենափրկչեան Վանքի «Կոմիտաս» երգչախումբը: Սպահանի Հայոց Թեմի քահանայից դասը եկեղեցու բեմի վրայ սպասարկում էր Ս. Սեղանին:



Պատարագիչ Հայր Սուրբը, օրայ պատշաճ իր քարոզի ընթացքում, բնաբան ունենալով աւետարանական այն հատուածը, որտեղ ասում է՝ «Մի՛ վախենաք նրանցից, ովքեր մարմինն են սպանում, բայց հոգին սպանել չեն կարող. դուք վախեցէ՛ք մանաւանդ նրանից, ով կարող է թէ՛ հոգին եւ թէ՛ մարմինը կորստեան մատնել դժոխքում» (Մտ 10.28), անդրադարձաւ Ղեւոնդեանց անունով դրոշմաձ հոգետրականների խմբի կատարած սիրագործութեանը եւ ասաց. «Երբ խօսում ենք Ղեւոնդեանց քահանաների մասին, մեզ մօտ արթնանում են երկու գաղափարներ. առաջին՝ վստահութիւն Յիսուս Քրիստոսի՝ մեր Աստծու հան-

դէպ, որը նշանակում է մեր կեանքը, սիրտը, միտքը



ու հոգին յանձնել Քրիստոսին, որովհետեւ Նա է մեր առաջնորդը եւ ինչպէս Ինքն ասաց. «Ես եմ ճանապարհը»: Ղեւոնդեանք վստահելով Քրիստոսի գորութեանը, անլանն ու սրբութեանը, յանձն առան մահը: Երկրորդ՝ հաւատի գորութիւն. Քրիստոս Ինքն ասաց, որ եթէ մանանեխի հատիկի չափ հաւատ ունենանք, կարող կը լինենք լեռներ շարժել. Ղեւոնդեանց քահանաները նոյն այս հաւատի գորութեամբ եւ առաջնորդութեամբ նահատակեցին՝ ո՛չ թէ՛ այսօր յիշելու համար, այլ որպէսզի հաւատացեալ ժողովուրդն իրենց օրինակով շարունակի նրանց շառաւիղը, որն առաջնորդում է դէպի յաւիտենական կեանք»:



Հոգշ. Հայր Սուրբը շնորհատրելով քահանաներին իրենց տօնի առիթով, այսպէս շարունակեց. «Այսօր

մեր բոլորի՝ հոգեւորականների տօնն է, բայց նաեւ ձեր տօնն է, սիրելի՛ հաւատացեալ ժողովուրդ, որովհետեւ առանց ժողովրդի, նրանց աղօթքի եւ միասնականութեան՝ հոգեւորականը ոչինչ է: Հոգեւորականը ո՛չ թէ իր զգեստով է հոգեւորական, այլ՝ նկարագրով, իր ժողովրդով եւ մանաւանդ իր առաքելութեամբ եւ ծառայութեամբ»:



Ս. Պատարագի ասարտին ներկայ հաւատացեալները մօտենալով հոգեւորականաց դասին, իրենց շնորհաւորանքն ու բարեմաղթութիւնը փոխանցեցին նրանց, ապա եկեղեցու սրահում, Նոր Զուղայի Հայոց Առաքելական Եկեղեցեաց Վարչութեան կազմակեր-

պութեամբ տեղի ունեցաւ հիւրասիրութիւն, որի ընթացքում սրտի խօսքեր եւ շնորհաւորանքներ արտասանեցին Կրօնական Խորհրդի ատենապետ պրն. Արշալոյս Խուդավերդեանի եւ Եկեղեցեաց Վարչութեան ներկայացուցչի միջոցով: Հանդիսութիւնը վարեց արժն. Տ. Վազգէն քինյ. Քէօշկերեանը՝ շնորհակալութիւն յայտնելով հիւրասիրութեան համար, յիշելով, որ միջոցառման ծախսը հոգացել է Ս. Յովհաննու եկեղեցու տիրացու բրշ. Զանիկ սրկ. Ղազարեանը:



Աւարտին, Առաջնորդ Սրբազան Հայրը շնորհաւորական եւ շնորհակալական խօսքերով եզրափակեց հանդիսութիւնը եւ Եկեղեցեաց Վարչութեան կողմից յուշանւէրներ յանձնեց քահանայ հայրերին՝ առ ի գնահատանք:



Շարունակութիւն 18-րդ էջից

Ս. ԱՄՐԳԻՍ ԶՕՐԱՎԱՐԻ ՏՕՆԻ..

զան Հայրն իր խօսքի մի այլ բաժնում անդրադառնալով Ս. Սարգիս Զօրավարի, նրա որդու՝ Մարտիրոսի եւ 14 զինւորական նահատակների կեանքին ու ամուր հաւատին, ներկաներին յորդորեց հաւատարիմ մնալ Քրիստոսի փոխանցած հաւատին եւ խնդրեց Ս. Սարգսին, որ բարեխօս դառնայ առ Աստուած, որպէսզի մեր երիտասարդները, առողջ սիրեն, առողջ ընտանիքներ կազմեն ու առողջ զաւակներ դաստիարակեն մեր Հայրենիքի, եկեղեցու եւ համայնքի ապագայի համար:



Առաջնորդ Սրբազան Հայրն իր պատգամի ասարտին գնահատանքի խօսք ուղղեց հոգեւորականաց դասին, Կրօնական Խորհրդին, Նոր Զուղայի Հայոց Առաքելական Եկեղեցեաց Վարչութեանը, Կանանց ու Մատաղի յանձնախմբերին եւ բոլոր հաւատացեալներին՝ իրենց զօրակցութեամբ եկեղեցին պայծառացնելու համար:

Ս. Պատարագի ասարտին Ս. Սարգիս Զօրավարի աջ-մասունքով կատարեց Զօրինէքի արարողութիւն, այնուհետեւ եկեղեցու բակում տեղի ունեցաւ մատաղօրհնէք, որից յետոյ՝ օրհնած ջուրը եւ հարիսան բաժանեցին հաւատացեալ ժողովրդին:

ՍՐԲՈՑ ՎԱՐԴԱՆԱԼՆՑ ՏՕՆԻ ԱՌԹԻ Ս. ՊԱՏԱՐԱԳ ՆՈՐ ԶՈՒՂԱՅԻ Ս. ԱՄԵՆԱՓՐԿՉԵԱՆ ՎԱՆՔՈՒՄ

Հինգշաբթի՝ 2013 թականի փետրարի 7-ի առաւօտեան ժամը 10:00-ին, Նոր Զուղայի Ս. Ամենափրկչեան Վանքի Ս. Յովսէփ Արեւմաթացի եկեղեցում, Սրբոց Վարդանանց տօնի առթիւ ձեռամբ Տ. Վազգէն քինչ. Քէօշկէրեանի Ս. Պատարագ մատուցեց, որին մասնակցում էր նաեւ հոգեւորականաց դասը: Ս. Պատարագի երգեցողութիւնը կատարեց Ս. Ամենափրկչեան Վանքի «Կոմիտաս» երգչախումբը՝ ղեկավարութեամբ Արմէն Ամիրխանեանի:

Արարողութեանը ներկայ էին՝ ազգային մարմինների ներկայացուցիչները, «Արմէն» տարրական համալիրի 5-րդ ու 6-րդ դասարանների եւ «Քանանեան» աղջկանց ու «Կատարինեան» տղայոց ուղեցոյց եւ միջնակարգ դպրոցների աշակերտ-ուհիները, տեսչութիւնները, ուսուցչական կազմերը, Ծնողական խորհուրդներն ու հաւատացեալ ժողովուրդ:

Պատարագի ընթացքում Ս. Հաղորդութիւն ստացան հայոց դպրոցների աշակերտութիւնն ու ներկաները:

Արարողութեան վերջաւորութեանը յաւուր պառնակի քարոզեց պատարագիչ Քահանայ Հայրը: Արժն. Տ. Վազգէն քինչ. Քէօշկէրեանն անդրադառնալով առաքելների ամուր հաւատին, որոնք չվախենալով նահատակութիւնից՝ ընտրեցին Քրիստոսի խոստացած

յաւիտենական կեանքը, անդրադարձաւ Վարդանանց պատերազմին եւ աւելացրեց. «Վարդանանց պատերազմի քաջերը գոհւեցին ու նահատակւեցին եւ իրենց արեամբ ծաղկեցրին մեր հոգիները: Նրանք յաղթեցին հաւատի կեանքի մէջ, եւ այդպիսով մեր հաւատը կանգուն մնաց մեր ժողովրդի կեանքում»:



Վերջում Քահանայ Հայրը դիմելով ներկաներին, ի մասնաւորի աշակերտներին, այսպէս ասաց. «Հպարտացէ՛ք հայ եւ քրիստոնիայ լինելու համար: Հպարտացէ՛ք մեր սուրբերով ու եկեղեցիով, քանի որ մեր եկեղեցին եւ ազգը միասին շողկապլած են: Զեզ մէջ պէտք է զարգացնէք հայ միտքն ու ոգին՝ քրիստոնէական սուրբ սկզբունքներով եւ հաւատով: Քրիստոնէութիւնը ճշմարտութիւն է եւ յաւիտենականութիւն: Թող սուրբ Վարդանը եւ Ղեւոնդ Երէցը ձեզ համար օրինակ դառնան»:



Ս̂àđ æàôŌ²Ս̂àôŌ Ũ̂P̂o°ò î°èŨ̂ÀŨ̂ ,²è²æÆ îúŨ̂À

Չորեքշաբթի՝ 13 փետրարի երեկոյեան, Նոր Զուղայի Ս. Ստեփանոս, Ս. Յովհաննու, Ս. Մինաս եւ Ս. Գրիգոր Լուսաւորիչ եկեղեցիներում կատարեց Տեառնընդառաջի նախատօնակ եւ աւանդական հրավառութիւն: Յընթացս եկեղեցական արարողութեան ընդունեց նորածինների տաճար ընծայման խորհրդաւոր կարգը:

Եկեղեցիներում նախատօնակի հանդիսաւոր արարողութիւններից յետոյ, ժամը 7-ին, Ն.Զ. Հայ Մ.Մ. «Արարատ» Միութեան շրջափակում հսկայ խարոյկը միախմբեց համայնքի անդամներին՝ տօնը նշելու համար: Միջոցառումը նախաձեռնել էր Սպահանի Հայոց

Թեմի Կրօնական Խորհուրդը, Նոր Զուղայի Հայոց Առաքելական Եկեղեցեաց Վարչութեան կազմակերպութեամբ:



Մինչ խարոյկի բոցավառուելը, տկն. Հռիփսիկ Այսա-

գեանը գեղեցիկ ձեով բացատրեց Տեառնընդառաջի խորհուրդը և նրա հետ կապած ժողովրդական ծիսական մի քանի սովորություններ: Այնուհետև Շահինշահրի հայ համայնքի հոգետոր հովիւ հոգշ. Տ. Անանիա վրդ. Գունանեանի աղօթքով և նորապսակ զոյգերի միջոցով բոցավառեց Միութեան բակում տեղադրած հսկայ թուփը: Միութեան շրջափակում ստեղծուած տօնական մթնոլորտը շարունակեց կրակի շուրջ:



Այնուհետև նորապսակ զոյգերը և նորածինները՝ իրենց ծնողների հետ, անցան «Արարատ» Միութեան սրահ, որտեղ նրանց դիմաւորեցին Տ. Անանիա վրդ. Գունանեանը, հոգետորականաց դասը, Թեմի Պատգամատրական Ժողովի Դիւանի ու Թեմական Խորհրդի ատենապետերը և Կրօնական Խորհրդի ու Նոր Զուղայի Հայոց Առաքելական Եկեղեցեաց Վարչութեան անդամները:



Յանուն Եկեղեցեաց Վարչութեան, տկն. Հռիփսիկ Այսագեանը շնորհատրելով նորածինների ծնողներին և նորապսակ զոյգերին, բեմ հրաւիրեց նախ Կրօնական Խորհրդի ատենապետ պրն. Արշալոյս Խուրավերդեանին, ապա Եկեղեցեաց Վարչութեան անդամ տկն. Անժել Ղարախանեանին՝ օրւայ առթիւ արտայայտելու: Պրն. Արշալոյս Խուրավերդեանը շնորհատրելով «Հայ Մօր Տարի»-ն, իր ուրախութիւնը յայտնեց նորապսակների և նորածինների ներկայութեան համար: Նա անելացրեց. «Ուրախայի է նորապսակ զոյգերի թւի աճման երեւոյթը: Տա՛յ Աստուած, որ իւրաքանչիւր հայի օջախից լւի մանկան ձայն: Յանկա-

նում ենք մանուկներին առողջութիւն, իսկ նորապսակներին յաջողութիւն»:



Տկն. Անժել Ղարախանեանը երջանկութիւն և փայլուն ապագայ ցանկանալով նորապսակներին և նորածիններին, արտայայտեց. «Թող ձեր օջախը միշտ տաք լինի և շուտով այն լցւի հայ մանկան քաղցր ձայնով: Թող որ գալիք տարի կրկնապատկւի մեր նորապսակների և նորածինների թիւը: Մաղթում ենք, որ մանուկներն իրենց ծնողների համար լինեն լաւ գաւակ, իսկ նորապսակներն իրենց գալիք գաւակների համար լինեն հոգատար ծնողներ»:



Բովանդակալից խրատներից յետոյ, Եկեղեցեաց Վարչութեան կողմից ներս բերեց երկու կարկանդակներ, որոնք նւիրեցին այդ գիշերւայ մանուկներին և զոյգերին: Պահը գեղեցիկ էր: Մէկ կողմից լսում էր նորապսակների քրքիջն և ուրախութիւնը, իսկ միւս կողմից՝ մանուկների ձայները:

Ծրագրի երկրորդ բաժնում հրաւիրեալները հոգշ. Տ. Անանիա վրդ. Գուջանեանի ձեռամբ ստացան յուշանւերներ, որից յետոյ հոգշ. Հայր Սուրբը շնորհատրելով «Հայ Մօր Տարի»-ն, բոլորին մաղթեց երջանկութիւն, արելատութիւն և ընտանեկան կեանքում համերաշխութիւն ու փոխ-յարգանք:

**ՀՈԳԵՀԱՆԳԱՏԵԱՆ
ԱՐԱՐՈՂՈՒԹԻՒՆ ԵՒ ԲՈՂՈՐԻ
ՀԱԻԱՔ Ս. ԱՏԵՓԱՆՈՍ
ԵԿԵՂԵՑՈՒՄ՝
ՍՈՒՄԳԱՅԻԹՈՒՄ
ԱԴՐԲԵՋԱՆՑԻՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ
ՍՊԱՆԴԻ ԵՆԹԱՐԿԻԱԾ
ԱՆՄԵՂ ՀԱՅՈՐԴԻՆԵՐԻ
25-ՐԴ ՏԱՐԵԼԻՑԻ ԱՌԹԻԻ**

տէր կանգնեք»:



Այնուհետև ներկաները բոլորելով եկեղեցու բակում, ունկնդրեցին Սպահանի Հայոց Թեմի Թեմական Խորհրդի ատենապետ Նուէլ Մինասեանի եւ դեսպան Գրիգոր Առաքելեանի օրան պատշաճ արտայայտութիւնները: Պրն. Մինասեանը կարեւորութեամբ ընդգծելով մինչեւ այսօր շարունակող թուրք-ադրբեջանական հայատեաց քաղաքականութիւնը, որի պարզ ապացոյցն Ադրբեջանի կողմից մարդասպան Սաֆարովիւն հերոսի կոչում շնորհելն է, յիշեց արցախեան ազատամարտը եւ ասաց, որ արի հաչ զաւակների միասնական պայքարի շնորհիւ Արցախի ժողովուրդը կարողացաւ ստեղծել իր անկախ հանրապետութիւնը եւ իր ապահով կեանքը շարունակելու հնարաւորութիւնը:

Հինգշաբթի՝ փետրուարի 28-ի երեկոյեան ժամը 7-ին, Նոր Զուղայի Ս. Ստեփանոս եկեղեցում, նախագահութեամբ Սպահանի Հայոց Թեմի առաջնորդ գերշ. Տ. Բաբգէն եպս. Չարեանի եւ մասնակցութեամբ Ծախինշահրի հաչ համայնքի հոգեւոր հովիւ հոգշ. Տ. Անանիա վրդ. Գունանեանի ու հոգեւորականաց դասի, կայացաւ Հոգեհանգստեան արարողութիւն՝ Սումգայիթում ադրբեջանցիների վայրագութեան զոհ զնացած անմեղ հայորդիների յիշատակին: Երգեցողութեամբ հանդէս եկաւ Ս. Ամենափրկչեան Վանքի «Կոմիտաս» երգչախումբը՝ ղեկավարութեամբ Արմէն Ամիրխանեանի:



Արարողութեանը ներկայ էին Իրանում Հայաստանի արտակարգ եւ լիազօր դեսպան Գրիգոր Առաքելեանը, Թեմի ազգային մարմինների եւ շրջանի Հայ Դատի Յանձնախմբի ներկայացուցիչներն ու համայնքի անդամներ:

Որպէս եզրափակիչ ելոյթ, դեսպան Գրիգոր Առաքելեանն անդրադառնալով արցախեան շարժման ձեւաւորմանը եւ Սումգայիթում հայերի նկատմամբ իրականացած շարդերին, ատելացրեց. «Այսօր մենք ակահատեան ենք նոյն քաղաքականութեան, երբ Ադրբեջանում հայատեացուիւնը քարոզուում է, երբ Սաֆարովիւների նմանները հերոսացուում են: Մենք պէտք է ուրախ լինենք, որ Հայաստանի, Արցախի եւ Սփիւռքի ջանքերի շնորհիւ շատ արագ կարողացանք պատուել Ադրբեջանի դիմակը եւ համաշխարհային հանրութեանը ցոյց տալ նրա իսկական դէմքը»:

Հոգեհանգստեան արարողութեան ընթացքում առաջնորդ Սրբազան Հայրն իր հայրական պատգամը փոխանցեց ներկաներին: Նա նշելով, որ մեր ժողովուրդը կարողացաւ նեղութիւնների ու տառապանքների միջից անցնելով՝ ոտքի կանգնել եւ իր յաղթական երթը շարունակել, անդրադառնալով պատմութեան տարբեր հանգրուաններում հաչ ազգի տառապանքներին ու արձանագրած յաղթանակներին եւ ասաց. «Այսօր մեր պարտականութիւնն է՝ որպէս ժողովուրդ միակամ դառնանք եւ միասնաբար մեր ձայնն աշխարհին լսելի դարձնելով ասենք՝ մենք մեռած ժողովուրդ չենք եւ կը շարունակենք մեր պայքարը այնքան ժամանակ մինչեւ մեր արդար իրաւունքներին»:

ՄԵԾ ՀԱՆԴԻՍՈՒԴԵԱՄԲ ՆՇԵՑ ՍՊԱՀԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՀԱՅՈՑ ԼԵՂԻ ԵՒ ԳՐԱԿԱՆՈՒԹԵԱՆ ԱՄԲՈՒՆԻ ՀԻՄՆԱԴՐՄԱՆ 50-ԱՄԵՍԱԿ



Կազմակերպութեամբ Սպահանի Պետական Համալսարանի Հայոց Լեզվի եւ Գրականութեան Ամբիոնի եւ համագործակցութեամբ նոյն Համալսարանի տնօրինութեան ու Սպահանի Հայոց Թեմի Թեմական Խորհրդի, չորեքշաբթի՝ փետրուարի 27-ի առաւօտեան ժամը 9-ին, Համալսարանի Օտար Լեզուների Ֆակուլտետի «Էմամ Խոմէյնի» դահլիճում, մեծ շուքով նշեց Սպահանի Պետական Համալսարանի Հայոց Լեզվի եւ Գրականութեան Ամբիոնի հիմնադրման 50-ամեակը: Յրբելեանի նշման առաջարկը Համալսարանի տնօրինութեանն էր տրել Սպահանի Հայոց Թեմի Թեմական Խորհրդի միջոցով:



Ծրագրին ներկայ էին՝ Սպահանի Հայոց Թեմի առաջնորդ գերշ. Տ. Բաբգէն եպս. Չարեանը, Իրանում Հայաստանի արտակարգ եւ

լիազօր դեսպան Գրիգոր Առաքելեանը, Իսլ. Խորհրդարանում հարաւային իրանահայութեան պատգամատուր Ռոբերտ Բեգլարեանը, Սպահանի Հայոց Թեմի ազգային մարմինների ներկայացուցիչներ, Սպահանի Պետական Համալսարանի պատասխանատուներ եւ Հայոց Լեզվի ու Գրականութեան Ամբիոնի դասախօսներ, շրջանաւարտներ, ուսանողներ եւ այլ հրաւիրեալներ:

Յրբելեանական ձեռնարկն սկիզբ առաւ Ղուրանի ընթերցմամբ, որից յետոյ՝ հնչեցին Տէրունական Աղօթք՝ արժն. Տ. Խաչատուր քինյ. Ջարգարեանի միջոցով եւ Իրանի Իսլ. Հանրապետութեան հիմնը:

Որպէս օրայ հանդիսավար, ողջոյնի խօսքով հանդէս եկաւ Ամբիոնի շրջանաւարտ եւ վաստակաւոր ուսուցիչ Անահիտ Կիրակոսեանը, որից յետոյ, որպէս հիւրընկալ, ելոյթ ունեցաւ Օտար Լեզուների Ֆակուլտետի դեկան դկտ. Գաշմառդին, յոյս յայտնելով, որ այս յոբելեանական ձեռնարկը Սպահանի Հայոց Թեմի Թեմական Խորհրդի եւ Սպահանի Պետական Համալսարանի միջեւ առկայ փոխ-համագործակցութիւնների առաւել զարգացման սկիզբ է հանդիսանալու՝ Հայոց Լեզվի եւ Գրականութեան Ամբիոնի աշխատանքների աշխուժացման նպատակով: Այնուհետեւ իր եւ Համալսարանի տնօրէն դկտ. Ռամեշթի անունից, ով աշխատանքային այցով գտնուում էր Թեհրանում, արտայայտեց Համալսարանի փոխտնօրէն դկտ. Բիդհեդին: Նա ողջունելով հիւրերի ներկայութիւնը, յոյս յայտնեց, թէ Օտար Լեզուների Ֆակուլտետի պատասխանատուները գերլիսանսի մակարդակում Հայոց Լեզվի եւ Գրականութեան ճիւղի հիմնադրմամբ, որի աշխատանքների մեծ մասն արդէն կատարել է, սոյն ճիւղի առաւել զարգացման պատճառ եւ հանդիսանալու:

Ծրագրի շարունակութեան մէջ իր հայրական օրհնանքը փոխանցեց թեմակալ առաջնորդ գերշ. Տ. Բաբգէն եպս. Չարեանը: Նա հոգեկան մեծ ուրախութեամբ ողջունելով ամբիոնի հիմնադրման 50-ամեակը, անդրադարձաւ ազգի ինքնութեան կազմաւորման եւ պահպանման գործում լեզվի վճռորոշ դերակատարութեանը եւ ասաց. «Հայ տառերի գիւտով Հայ ժողովրդի ինքնութեան»

կազմաւորման ընթացքը ո՛չ միայն ամբողջացաւ, այլ աւելի բիւրեղացաւ ու արմատացաւ: Հայ լեզուն դարձաւ հայի հարազատ ինքնութիւնը պահպանող զօրեղ վահանը՝ պատմութեան արհաւիրքների եւ ապականիչ հոսանքների դիմաց»: Սրբազան Հայրն իր խօսքի մի այլ բաժնում բնութագրելով լեզուն որպէս հաւատի պահապան, ասելացրեց. «Հաւատ-լեզու փոխ-յարաբերութիւնը տարբեր մտեցումներով ու շեշտադրումներով բոլոր կրօնների մօտ կարելոր մի երեւոյթ է: Այս իրողութիւնը բացայայտօրէն տեսնում ենք մեր եկեղեցու մօտ: Հայ տառերի ստեղծմամբ, որը կատարւեց մեր եկեղեցու հայրերի միջոցով, Աստուծ հայերէն խօսեց ժողովրդի հետ եւ դարձաւ աւելի կենդանի ու անմիջական»:

Այնուհետեւ դասախօսութեամբ ելոյթ ունեցաւ դեսպան Գրիգոր Առաքելեանը, ով արտայայտելով «Հայերէնի եւ պարսկերէնի փոխադարձ ազդեցութիւնները» նիւթի շուրջ՝ անդրադարձաւ երկու լեզուների միջեւ առկա բառային, լեզամտածողութեան եւ արտայայտման ձեւերի ընդհանրութիւններին՝ հայերէն ու պարսկերէն հին գրականութիւններից օրինակներ բերելով: Ելոյթի այլ բաժնում դեսպան Առաքելեանը բառակազմութեան, բառարմատի եւ բառիմաստի տեսանկիւնից վերլուծելով երկու լեզուների մի շարք բառեր, ինչու չէ նաեւ խօսքեր ու արտայայտութիւններ, բազմաթիւ նմանութիւններ եւ ընդհանրութիւններ մատնանշեց հայ եւ պարսիկ ժողովուրդների միջեւ:



Ելոյթների շարանում Իսլ. Խորհրդարանի պատգամաւոր Ռոբերտ Բեգլարեանը գնահատելով Ամբիոնի հիմնադիրների եւ անցեալի ու ներկայի վարիչների եւ դասախօսների ջանքերը, շնորհակալական խօսք ուղղեց Սպահանի Պետական Համալսարանի տնօրինութեանը՝ յորելեանական ծրագրի կազմակերպման առաջարկն ընդունելու համար: Նա իր խօսքում յիշեցնելով լեզւի դերակատարութիւնը՝ մշակոյթի, հաւատի եւ ազգային ինքնութեան պահպանման գործում, շարունակեց. «Իրանի Իսլ. պետութիւնը եւ իրանցիները, իրենց իրանա-խալամական հարուստ մշակոյթի, բարձր գիտակցութեան եւ ինքնավստահութեան շնորհիւ ո՛չ միայն գրկաբաց են ընդունել օտար մշակոյթները, այլ աջակցութիւն են ցուցաբերել նրանց լեզուների ու պատմութիւնների տարածման եւ ուսուցման գործում»:

Հիւրասիրութիւնից յետոյ, օգտաշատ եւ բազմաբովանդակ դասախօսութիւններով ելոյթ ունեցան նաեւ Ամբիոնի բազմավաստակ դասախօս Հրայր Ծահնագարեանը՝ «Ամբիոնի պատմութիւնը», Ամբիոնի դասախօս դկտ. Սիլա Ալլահվերդեանը՝ «Հայ Գրականութեան շրջափուլերի համառօտ բնութագրութիւնը», ԻԻՀ Ազատ Համալսարանի Հայոց Լեզւի եւ Գրականութեան Ամբիոնի վարիչ դկտ. Անդ-

րանիկ Սիմոնեանը՝ «Հայագիտական ամբիոնների դերը հայ-իրանական ընդհանրութիւնների հետազօտման գործում» եւ Ամբիոնի հիւր-դասախօս Իսա Ալիոեզային՝ «Հայոց լեզւի սերտման անհրաժեշտութիւնը՝ պարսկալեզուների համար» նիւթերով:



Ձեռնարկի ընթացքում եղան ասմունքային գողտրիկ կատարումներ՝ Ամբիոնի ուսանողների միջոցով, որոնց շնորհիւ իրայատուկ բոյր հաղորդւեց ծրագրին:

Հանդիսութեան ասարտին ձեռամբ թեմակալ առաջնորդ գերշ. Տ. Բաբգէն եպս. Չարեանի, դեսպան Գրիգոր Առաքելեանի, Իսլ. Խորհրդարանի պատգամաւոր Ռոբերտ Բեգլարեանի, Սպահանի Հայոց Թեմի Թեմական Խորհրդի ատենապետ Նուէլ Սիմասեանի եւ Օտար Լեզուների Ֆակուլտետի դեկան դկտ. Գաշմատդիի, յուշանւէրներ եւ պատույզ գրեր շնորհեցին Ամբիոնի բազմավաստակ դասախօսներ՝ հանգուցեալ Խաժակ Տէր-Գրիգորեանին, Հրայր Ծահնագարեանին, Ազատ Մաթեանին, դկտ. Անդրանիկ Սիմոնեանին, Ամբիոնի հրապիրեալ դասախօսներ Արմոնդ Քեշիշեանին եւ Հիլդա Պողոսեանին, Ամբիոնի դասախօս ու սոյն ձեռնարկի կազմակերպիչ յանձնախմբի պատասխանատու դկտ. Սիլա Ալլահվերդեանին եւ Ամբիոնի նախկին վարիչներին ու գերազանցիկ ուսանողներին:

Յատկանշական է, որ սոյն յորելեանական ձեռնարկի կազմակերպիչ յանձնախումբն այս առիթով շնորհաւորական ուղերձներ էր ստացել՝ Թեհրանի Հայոց Թեմի առաջնորդ գերշ. Տ. Սեպուհ արքեպս. Սարգիսեանից, ՀՀ Սփիւռքի նա-

Շարունակութիւնը՝ 27-րդ էջում

ՆՈՐ ԶՈՒՂԱՅԻ ԵՒ ԵԱՆՔԻՆԵԱՆՔԻ ՆՈՐԱՄՈՒՏ ՆԱՅ ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ ԳՆԱՆՏԱՏՄԱՆ ԵՐԵԿՈՅ

Նախաձեռնությամբ Սպահանի Հայոց Թեմի Կրթական Խորհրդի եւ հովանաւորությամբ Թեմական Խորհրդի, յունւարի 27-ի երեկոյեան ժամը 7:30-ին Նոր Զուղայի Հայոց Ազգային Կրթահամալիրի «Ալեմուշ Տէրեան» սրահում կազմակերպել էր Նոր Զուղայի եւ Ծաղիկաշահի նորամուտ հայ ուսանողների գնահատման երեկոյ՝ ներկայությամբ Սպահանի Հայոց Թեմի ազգային մարմինների ներկայացուցիչների, հայոց ազգային դպրոցների ուսուցիչ-ուսուցիչների եւ նորամուտ ուսանողների ու իրենց ծնողների:



Սկզբում բարի գալստեան եւ ողջոյնի խօսքով հանդէս եկաւ ծրագրի հաղորդավար Արթին Մուրադեանը:



Այնուհետեւ յանուն Թեմի Կրթական Խորհրդի արտայայտեց Խորհրդի ատենապետ Զանսոն Աղաբաբայեանը: Նա շնորհաւորելով նորամուտ ուսանողներին

ընդ եւ նրանց ծնողներին՝ արձանագրած յաջողութիւնների համար, ասաց. *«Մեր ազգը բարձր գիտակցութեան ըմբռնումով գնահատում է գիտութիւնն ու իմաստութեան ձգտող անձին: Այսօր երկրների տարածութեան պատճառը իմացութեան եւ չիմացութեան մէջ է եւ ոչ ունեւոր եւ չունեւոր ժողովուրդներ ունանալու»:* Պրն. Աղաբաբայեանն իր խօսքի շարունակութեան մէջ դիմելով նորամուտներին, ասաց. *«Դուք համալսարան մուտք գործելով ձեզ վրայ էք վերցնում կարեւոր պարտականութիւն, որը կոչւում է հասարակական յանձնարարութիւն: Այն՝ կիրթ համալսարանական երիտասարդի շուրջ ստեղծում է սպասելիքներ, քանի որ նա սովորել է ու զարգացել: Արդար գնահատելով այդ սպասելիքները, դուք ձեր ուսումն աւարտելուց յետոյ, ուր էլ որ գտնուէք, պէտք է արդարացնէք ձեր հասարակութեան սպասելիքները՝ ցանկացած ասպարէզով»:*



Միջոցառման շարունակութեան մէջ ելոյթ ունեցաւ նաեւ Թեմական Խորհրդի ատենապետ Նոէլ Մինասեանը, որն ակնարկելով մեր պատմութեան տարբեր հանգրուաններում երիտասարդութեան դերակատարութեանը, ասաց. *«Յաւօք, մեր ժողովրդի թւաքանակը փոքրացել է եւ մեզ համար առկայ միակ ելքը այն է, որ մեր թւաքանակի սակաւ լինելը փոխարինենք գիտութեան ասպարէզով աւելի ներկայանալի դառնալով: Գիտութիւնն է, որ համապատասխան որակ է բերում մեր ժողովրդի համար եւ այդ որակի առաջին ներկայացուցիչները երիտասարդ այն խաւն է, որը որպէս ուսանող մասնագիտանում է որեւէ գիտութեան մէջ»:* Պրն. Մինասեանը կարեւորելով Հայոց Լեզւի եւ Գրականութեան Ամբիոնը, ցաւալի երեւոյթ համարեց հայագիտական ճիւղում հայ ուսանողների բացակայութիւնը եւ անելացրեց. *«Իւրաքանչիւր հայ*

ուսանող պարտաւոր է համալսարանում ներկայացնի Հայ Դատը, մեր մշակույթը եւ առհասարակ հայութեանը՝ բացատրելով ազգային մարմինների ներդրումը իւրաքանչիւր հայ երիտասարդի համար»։ Պրն. Մինասեանն իր խօսքի աւարտին շնորհաւորելով երիտասարդների յաջողութիւնները յայտնեց, որ Սպահանի Հայոց Թեմի ազգային մարմինները օժանդակելու եւ աստար են հանդիսանալու համայնքի բոլոր ուսանողներին:



Վերջում նորամուտ հայ ուսանողներին յանձնեցին գնահատագրեր եւ յուշանւէրներ ձեռամբ՝ Սպահանի Հայոց Թեմի Պատգամաւորական Ժողովի Դիւանի, Թեմական ու Կրթական խորհուրդների ատենապետեր Աշոտ Դաւթեանի, Նոէլ Մինասեանի եւ Զանսոն Աղաբաբայեանի: Գնահատուցին նաեւ դկտ. Արմոնդ Բաղրամեանը՝ 2012 թականին Սպահանի նահանգապետարանի կողմից օրինակելի բժիշկ ճանաչելու համար եւ դկտ. Մեղեղի Խուրաբախշեանը, որն աւարտելով բարձրագոյն ուսումը Թեհրանի Ուսումնասիրական Գիտութիւնների Համալսարանում, դոկտորի կր-

չում է ստացել նարտարապետութեան ճիւղում եւ ներկայիս, որպէս դասախօս, աշխատում է Սպահանի Խորասգան (Ազատ) համալսարանում:

Ծրագրի աւարտին տեղի ունեցաւ ընդունելութիւն «Արմէն» համալիրի Ծնողական Խորհրդի պատրաստութեամբ:

Շնորհաւորելով նորամուտ ուսանողներին՝ ստորեւ ներկայացնում ենք նրանց անունները.

Դկտ. Սիլւա Յովսէփեան, Արփի Մուրադեան, Մանհա Յովսէփեան, Նորվան Հազարմալեան, Մարինէ Թահմազեան, Սերո Ղազարեան, Անասիկ Լալազարեան, Ուրֆա Յովսէփեան, Արքի Հայրապետեան, Նարէ Ասատրեան, Անգիլնէ Զոհրաբեան, Նարինէ Քեշիշեան, Նինելիա Թահմազեան, Մանէ Թահմազեան, Գեղարդ Մանսուրեան, Անի Մինասբանեան, Նինելիա Մարգարեան, Անասիկ Թահմազեան, Վեհանուշ Խուրաբախշեան, Անիա Յովսէփեան, Նարէ Թահմազեան, Արազ Տէր Գրիգորեան, Հուրիկ Թահմազեան, Արիս Դաւթեան, Լիլիթ Հայրապետեան, Մարիա Խուրաբախշեան, Ովսաննա Թահմազեան, Մանիֆա Յարութիւնեան, Դերենիկ Շահնազարեան, Միրո Կարապետեան, Արգին Աբնուսեան, Աուլեն Հայրապետեան, Վեհանուշ Համբարձումեան, Արլին Խուրաբախշեան, Փաթրիկ Զանի, Արփի Թահմազեան, Ռուդիկ Յակոբեան, Անաշէ Առաքելեան, Երջանիկ Սիրջանեան, Արծիկ Ղազարեան, Մարինէ Մկրտչեան, Վանէ Մինասեան, Սերինէ Աղախանեան, Թենի Վարդանեան, Մարինէ Հայրապետեան, Սերինէ Թահմազեան, Գեղանի Յակոբեան, Դալարէ Ալազբալեան, Փիւնիկ Թորոսեան, Նորան Թահմազեան, Նարինէ Բարդեան, Նարէ Մարկոսեան, Թանգիկ Միրզախանեան, Լիլի Ամիրխանեան, Նայիրի Խուրաբախշեան, Մեղրի Ակոն:



Շարունակութիւն 25-րդ էջից

ՄԵԾ ՀԱՆԴԻՍՈՒԹԵԱՄԲ ՆՕՒԵՑ...
 խարար Հրանուշ Յակոբեանից, «Ալիք» Օրաթերթի գլխաւոր խմբագիր Դերենիկ Մելիքեանից, «Պայման» ամսագրի գլխաւոր խմբագիր Արմինէ Առաքելեանից, Երեւանի Պետական Համալսարանի տնօրէն՝ պրֆ. Արամ Սիմոնեանից, Երեւանի եւ Իրանի համալսարանների տարբեր ֆակուլտետների դեկաններից, Հայոց Լեզւի եւ Գրականութեան Ամբիոնի շրջանաւարտներից ու այլ անհատներից:



«ՀԱՅ ՄՕՐ ՏԱՐԻԱՆ» ԸՆԴՆՈՒՄՔ՝ ՀԱՅՈՑ ԿԱԳՎՅԻՆ «ԱՐՄԷՆ» ՏԱՐՐԱԿԱՆ ՀԱՄԱԼԻՐԸ ԿԱԶՄԱԿԵՐՊԵՑ ԿՈՒՄՑԻՆ ՁԵՌՆԱՐԿԸ...



Նոր Զուղայի Հայոց Ազգային «Արմեն» տարրական համալիրի տեսչության, ուսուցչական կազմի եւ Ծնողական Խորհրդի համատեղ նախաձեռնությամբ, փետրարի 6-ին, համալիրի սրահում տեղի ունեցաւ գրքի ցուցահանդէսի եւ վաճառքի բացումը՝ նկիրած «Հայ Մօր Տարւան»:

գողտրիկ յայտագրում տեղ էին գտել ասացածքներ ու երգ՝ նկիրած հայ մօրը: Գեղարուեստական բաժնին զուգահեռ, պատանոի վրայ ցուցադրուում էր նոյն դասարանի կողմից պատրաստուած համապատասխան տեսաերիզներ:

Ծրագրի վերջում առաջնորդ Սրբազան Հայրը շնորհաորելով «Հայ Մօր Տարի»-ն, իր հայրական պատգամը փոխանցեց աշակերտ-ուհիներին: Թեմակալ առաջնորդն իր խօսքում դիմելով հայ մայրերին ասաց. «Սիրելի՛ մայրեր, ձեր հայեցի դաստիարակութեամբ մենք ունենալու ենք այնպիսի սերունդ, որը վաղը տէր պէտք է կանգնի իր հողին եւ հայրենիքին»:



Բացումը տեղի ունեցաւ առաւօտեան ժամը 10-ին, ձեռամբ Սպահանի Հայոց Թեմի առաջնորդ գերշ. Տ. Բաբգէն եպս. Չարեանի: Ծրագրին ներկայ էին նաեւ Թեմի Կրօնական Խորհրդի անդամ Սաքօ Տէր Յովհաննիսեանը, Կրթական Խորհրդի ատենապետ Զանսոն Աղաբաբայեանը, դպրոցի պատասխանատուները եւ մեծ թուով ծնողներ:



Յատկանշելի է, որ սրահում նաեւ ցուցադրուել էր աշակերտների պատրաստած ուրբոտներ եւ այլ ստեղծագործութիւններ, իսկ մի այլ անկիւնում դասաւորուել էր պարսկերէն գրականութեան եւ խօսքի զարգացման տաղաւար, որտեղ աշակերտները պատրաստում էին գիրք եւ պատի թերթեր:

Ծրագրում դպրոցի տեսուչ Վրէժ Թիրւանեանը շնորհաորելով հայ մայրերին՝ տարին իրենց անամբ հոշակելու կապակցութեամբ, աւելացրեց. «*«Արմէն» համալիրի անձնակազմն ընդառաջելով Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա Վեհափառի կոչին, իր պարտքը համարեց այս միջոցառումը ներել համայնքի անձնագործ մայրերին»*: Այնուհետեւ պրն. Թիրւանեանը ներկաներին հրաւիրեց դիտելու դպրոցի 6-րդ դասարանի սաների միջոցով արտադասարանային աշխատանքներից պատրաստուած գողտրիկ ծրագիրը:

Աշխուժ եւ կայտառ աշակերտների պատրաստած

Նոյն օրը Իրանի Իսլ. Յեղափոխութեան 34-ամեակի առթիւ աշակերտութիւնը հիւրասիրեց Ծնողական Խորհրդի կողմից պատրաստուած պատանիներով: Այնուհետեւ բոլոր սաները միասնաբար անցան համալիրի «Ալեւնուշ Տէրեան» սրահ, ուր իրենց սպասում էր մի այլ ծրագիր: Ծրագիրը նկիրած էր Վարդանանց ճակատամարտին: 4-րդ եւ 5-րդ դասարանների աշակերտների կողմից բեմադրուեց Վարդանանց հերոսամարտից մէկ հատուած, որտեղ գեղեցկօրէն ներկայացուեց նախապատերազմեան անց ու դարձը եւ Վասակի դաւանանութիւնը:

Ն.Ձ. ՀԱՅՈՑ ԱՋԳԱՅԻՆ «ՔԱՆԱՆԵԱՆ» ԵՒ «ԿԱՏԱՐԻՆԵԱՆ» ԴԳՐՈՑՆԵՐԻ ԱՒԱՐՏԱԿԱՆ ՀԱՆԴԻՍՈՒԹԻՒՆԸ՝ ՆԻՐԻՒՄԸ «ՀԱՅ ԳՐՔԻ ՏԱՐԻԱՆ»

Նախաձեռնությամբ՝ Ն.Ձ. Հայոց Ազգային «Քանանեան» աղջ. եւ «Կատարինեան» տղ. դպրոցների տեսչութիւնների, դեկտեմբերի 19-ի երեկոյեան ժամը 7:30-ին, Հայոց Ազգային Կրթահամալիրի «Ալեհուշ Տէրեան» սրահում տեղի ունեացաւ 2011-2012 ուս. տարեշրջանի շրջանաւարտների ասարտական հանդիսութիւնը, որն այս տարի նիւրել էր «Հայ Գրքի Տարւան»:



Ծրագրին ներկայ էին Սպահանի Հայոց Թեմի առաջնորդ գերշ. Տ. Բարբէն եպս. Չարեանը, Իրանի Իսլ. Խորհրդարանում հարաւային իրանահայութեան պատգամաւոր Ռոբերտ Բեգլարեանը, ազգային մարմինների ներկայացուցիչներ, հայոց ազգային դպրոցների տեսչութիւնները, ուսուցիչ-ուսիները, ծնողներ եւ մի շարք աշակերտներ:

Ծրագրի սկզբում նախորդ տարիների շրջանաւարտ Մանիա Ղուկասեանը, որպէս օրւայ հանդիսավար, յանուն «Քանանեան» եւ «Կատարինեան» դպրոցների տեսչութիւնների, ուսուցչական կազմերի ու Ծնողական խորհուրդների, ողջունելով ներկաներին, սրահ հրաւիրեց 2011-2012 ուս. տարեշրջանի շրջանաւարտներին:

Այնուհետեւ ուսուցչական խօսքն ընթերցեց «Քանանեան» դպրոցի փոխ-տեսուչ Ռիմա Սիմոնեանը, որտեղ կարեւորելով 5-րդ դարում թարգմանչաց վարդապետների ջանքերի շնորհիւ ստեղծուած ազգային գիր ու գրականութիւնը եւ դպրոցը, որը վերածելով դարերով շարունակուող շարժման՝ ապահովեց հայ ժողովրդի շարունակութիւնը մինչեւ այսօր, այսպէս ատելացրեց. «Ազգային վարժարանները բիւրեղացումն են հայ դպրութեան լաւագոյն աւանդոյթների եւ համաշխարհային կրթութեան նւաճումների: Նրանք մշակութաստեղծ այն միջավայրերն են, որտեղ ազգային հիմքի վրայ մշակուում են ժամանակակից կրթութեան բարձրագոյն ձեռքբերումները՝ ի նպաստ հայկական կրթութեան մրցունակութեան բարձրացման»: Տկն. Սիմոնեանն իր խօսքի մի այլ բաժնում

անդրադանալով համայնքի ազգային դպրոցներին, կարեւորութեամբ ընդգծեց. «Մեր ազգային դպրոցների ամենամեծ հպարտութիւններից մէկը նրա շուրջ համախմբուած մարդիք են: Մարդկային բացառիկ ցանցն այսօր գործում է որպէս հզօր համակարգ, ուր ամէն մէկն օգտագործելով իր գիտելիքը, փորձն ու կապերը, նիւթական եւ բարոյական աջակցութեամբ նպաստում է նոր տաղանդի բացայայտմանը ու զարգացմանը, այն համոզմամբ, որ կեանքում կայանալուց յետոյ, նա էլ իր հերթին ձեռք կը մեկնի իրենից յետոյ եկողներին: Համայնքի հետ աշակերտի կապն այսպիսով դառնում է անքակտելի եւ շնորհիւ այս թարմ հունդի, համայնքը մնում է միշտ կենսունակ եւ գործունեայ»:

Ծրագրի յաջորդ բաժնում շրջանաւարտներ Ալինա Ալեքսանդրեանը, Նարէ Սիմոնեանը, Միրուշ Ղուկասեանը, Նայիրի Իսախանեանը եւ Քրիստինէ Յակոբեանը ներկայացրեցին Գէորգ Էմինի «Երգ գրի մասին»-ից հատուածներ, որոնց զուգահեռ պաստառի վրայ ցուցադրեց համապատասխան տեսանիւթ՝ մատենադարանից, հայ անւանի գրողներից ու գրչագիր մատենաներից:

Յաջորդիւ մեներգութեամբ հանդէս եկան Լալա Ալեքսանդրեանը, Թեմի Մկրտչեանը, Թանգիկ Միրզախանեանը եւ Մարտունի Խաչիկեանը, որոնցից մի քանի կատարումը համեմաւած էին պարային կատարումներով:



«Դպրոցական օրերը էլ երբէք չեն կրկնի» երգը կատարեց Վանանդ Գէորգեանը, ընկերակցութեամբ «Քանանեան» դպրոցի աշակերտուհի Թանիա Մինասեանի եւ նագակցութեամբ Թոմիկ Սիմոնեանի ու Մարտունի Խաչիկեանի:

Ծրագրի շարունակութեան մէջ բոլոր շրջանաւարտները կատարեցին «Հայոց տուն» երգը: Այնուհետեւ Նարէ Կիրակոսեանը, Նարէ Մարկոսեանը եւ Մեղմիկ Սիմոնեանն իրենց սրտաբուխ արտայայտութիւններով խորապէս յուզեցին դահլիճում ներկաներին:

Այնուհետեւ Վահան Վարդեանեանը կատարեց «Կարմիր կակաչները» եւ Լալա Ալեքսանդրեանը՝ «Հայաստան» երգերը, խմբի ձայնակցութեամբ:

Գեղարեստական բաժինը եզրափակեց «Վերջին



զանգ» երգով, շրջանաւարտների կատարմամբ, որին յաջորդեց ծրագրի ամենախորհրդաւոր պահը՝ աւանդական երդման կարգը շրջանաւարտներ Լաուրա Խուդաբախչեանի եւ Վահագն Վարդեանեանի շուրթերից հնչող բառերով:

սոն Աղաբաբայեանի, «Քանանեան» եւ «Վատարի-նեան» դպրոցների փոխ-տեսուչներ Ռիմա Սիմոնեանի, Արթին Մուրադեանի ու Ռուբէն Խաչիկ Գրիգորեանի եւ ուսուցիչներ Վարուժ Մովսիսեանի, Անահիտ Թահմազեանի, Սեդա Դիլանչեանի ու Քառուիկ Դիլանչեանի, շրջանաւարտներն ստացան իրենց վկայականները:



Աշակերտական կատարումներին յաջորդեց Կրթական Խորհրդի խօսքը, որն արտայայտեց Խորհրդի ատենապետ Զանսոն Աղաբաբայեանը: Նա մէջբերում կատարելով Թումանեանի խօսքերից՝ լեզվի մասին, գնահատեց հայ ուսուցիչների եւ դպրոցների պատասխանատուների գործունէութիւնը եւ ասաց. «Մեր դարաւոր պատմութեան ժառանգորդներն են մեր այսօրւայ հերոս աշակերտները, ովքեր միւս առարկաներին գուգահեռ սովորել են հայերէնագիտական առարկաները եւ ստացել վկայական՝ հայոց լեզվին տիրապետելու համար: Այսօր հնարաւորութիւն է ընձեռուով նրանցից իւրաքանչիւրին խորանայու մեր ժողովրդի պատմութեան ու քաղաքակրթութեան հզօր անցեալի մէջ: Ովքեր ընտրելու են գիտութեան ուղին, թող հայկական մշակոյթով զարդարւի նրանց կեանքը, եւ այսպէս է ձեւաւորուած ազգի պահպանման ամենախոշոր գործօնը՝ ազգային դաստիարակութիւնը»:



Ապա Սրբազան Հայրն իր հայրական օրհնանքում այսպէս փոխանցեց. «Այսօր տեսնում ենք շրջանաւարտների դէմքերի ժպիտները: Նրանք ուրախ են ո՛չ թէ հայ դպրոցից հեռանալու, այլեւ հայ դպրոցի մէջ մեծանալու, թրծւելու եւ հասակ առնելու համար, որը կատարւել է շնորհիւ իրենց ուսուցիչ-ուսհիւներին»: Ապա թեմակալ առաջնորդն իր գնահատանքի խօսքն ուղղեց ուսուցչական կազմերին, Ծնողական խորհուրդներին եւ ծնողներին՝ աշակերտների կրթւելու եւ դաստիարակւելու կապակցութեամբ իրենց դերակատարութեան համար եւ շարունակեց. «Պատիւ ձեզ, որ ձեր գաւակներին առաջնորդեցիք հայ դպրոց, քանի որ հայ դպրոցում հայը հայ կը դառնայ եւ հայը մա՛րդ կը դառնայ: Հայ դպրոցը փրկութեան փարոսն է՝ սփիւռքեան մեր կեանքում, հայ դպրոցը միջնաբերդն է մեր կեանքի, եւ հայ դպրոցը վաւերական ու ճշմարիտ ակնադրիւրն է հայութեան»: Սրբազան Հայրն իր խօսքի ւարտին շրջանաւարտներին յորդորեց հայ դպրոցից ստացած հարստութիւնն ու գիտութիւնը չպահել իրենց մէջ, այլ փոխանցել յաջորդող սերունդներին՝ միշտ լինելով հայութեան հետ:

Ծրագրի շարունակութեան մէջ, ձեռամբ առաջնորդ Սրբազան Հօր, Իսլ. Խորհրդարանի պատգամաւոր Ռոբերտ Բեգլարեանի, Թեմական եւ Կրթական խորհուրդների ատենապետեր Նոէլ Մինասեանի ու Զան-

Վերջում տեղի ունեցաւ ընդունելութիւն գոյգ դպրոցների Ծնողական խորհուրդների կազմակերպութեամբ:

ԳԵՂԱՆԱԿԱՐՉՈՒԹԵԱՆ ԵՒ
ԼՈՒՍԱՆԿԱՐՆԵՐԻ ԾՈՒՅԱՀԱՆՆԵՄ
ՔԱՆԱՆԵԱՆ» ԴՊՐՈՉՈՒՄ



Իրանի Իսլ. Յեղափոխության 34-րդ տարեդարձի առթիւ, փետրարի 13-ից մինչեւ 20-ը, Նոր Ջուլայի Հայոց Ազգային Կրթահամալիրի սրահում կայացաւ ցուցահանդէս, որտեղ ցուցադրել էին «Քանանեան» աղջ. ուղեցույց եւ միջնակարգ դպրոցի աշակերտուհիների գեղանկարչութիւններն ու լուսանկարները:

Գեղանկարչութեան բաժնում ցուցադրել էին նաեւ շրջանաւարտների ստեղծագործութիւնները: Ուշագրաւ էին յատկապէս Եւգինէ Խաչիկ Գրիգորեանի ու Սանահին Ղուկասեանի մրցանակակիր նկարչութիւնները, որոնք վերջին տարիների ընթացքում միջազգային մրցոյթներում յաղթող ճանաչելով՝ հպարտութեան առիթ հանդիսացան դպրոցի եւ համայնքի համար: Ցուցադրած գեղանկարչութիւնների շարանում մեծ ուշադրութիւն էին գրաւում նաեւ Ռոժին Ներսիսեանի ստեղծագործութիւնները, որոնց իւրայատուկ

ոճն ուղղակի հիացնում էր այցելուներին եւ արժանանում մասնագէտների բարձր գնահատանքին:



Դպրոցի պատասխանատուների որոշմամբ մրցոյթի էին դրել լուսանկարների բաժնում ցուցադրած նկարները՝ հնարատրութիւն տալով բոլոր աշակերտներին ու այցելուներին քւէարկել իրենց նախընտրած լուսանկարի օգին: Արդիւնքում քւէների համաձայն առաջին եւ երկրորդ կարգ հանդիսացան երրորդ միջնակարգի աշակերտուհի Սարա Ներսիսեանի երկու լուսանկարները, իսկ երրորդ կարգ՝ առաջին միջնակարգի աշակերտուհի Վանէ Թահմազեանի լուսանկարը:

Նորանոր յաջողութիւններ ենք մաղթում «Քանանեան» դպրոցի արւեստասէր եւ արւեստագէտ աշակերտուհիներին:

ՉՍօ՞ԷաօÂÆŬ Üàđ æàðŌՉՄÆ
ÎÆđ²ÎŬúđօ²Ŭ ä ðàðÆŬ



Կիրակի՝ 2013 թականի փետրարի 3-ին, Թեմիս բարեջան առաջնորդ գերշ. Տ. Բաբգէն եպս. Չարեանը, ընկերակցութեամբ Հայաստանից ժամանած Աստւածաշնչային Ընկերութեան ծրագրերի տնօրէն պրն. Արշաիր Գաբունեանի, այցելեց Հայաստանեայց

Առաքելական Սուրբ Եկեղեցու Նոր Ջուլայի Կիրակնօրեայ Դպրոց:

Պրն. Արշաիրը շրջելով դասարանները՝ ծանօթացաւ աշակերտութեանը դասաւանդող նիւթերին եւ պատրաստող ձեռքի աշխատանքներին, ապա հարցումների միջոցով ճշտորոշեց աշակերտութեան գիտելիքների մակարդակը: Վերջում նա մտերմիկ մթնոլորտում զրուցեց ուսուցիչների հետ, գնահատելով նրանց կատարած դժուարին եւ պատասխանատու աշխատանքը:



Գերշ. Սրբազան Հայրը, այցելութեան աւարտին իր գնահատականը տուեց աշակերտութեան պատրաստածութեան եւ կրօնական գիտելիքներին, նաեւ գնահատեց ուսուցիչներին նրանց աշխատանքներին յաջողութիւն մաղթելով:

Հ.Յ. ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ 122-ԱՄԵԱԿԻ ՏՕՆԱԿԱՏԱՐՈՒԹԻՒՆ ՆՈՐ ԶՈՒՂԱՅՈՒՄ



Երեքշաբթի՝ դեկտեմբերի 18-ին, երեկոյան ժամը 7:30-ին, շրջանի Հայ Դատի «Արձագանգ» Քարոզչական Յանձնախմբի նախաձեռնությամբ, Ն.Ջ. Հայ Մ.Մ. «Արարատ» Միության սրահում, դասախոսական-գեղարվեստական ձեռնարկով նշեց Հ.Յ. Դաշնակցության 122-ամեակը: Տօնակատարությանը ներկայ էին Սպահանի Հայոց Թեմի առաջնորդ գերշ. Տ. Բաբգէն եպս. Չարեանը, Ծափնշահրի հայ համայնքի հոգևոր հովիւ հոգշ. Տ. Անանիա վրդ. Գունանեանը, շրջանի Հայ Դատի Յանձնախմբի անդամները, ազգային մարմինների, միությունների եւ հայոց ազգային դպրոցների ներկայացուցիչները, գաղափարակից ընկերներ եւ հոծ թուով ժողովուրդ:

Ծրագիրն սկսեց Հ.Յ.Դ. «Մշակ բանոր» քայլերգի յոտնկայս ունկնդրությամբ, որից յետոյ «Արձագանգ» Քարոզչական Յանձնախմբի անունից բացման խօսքով հանդէս եկաւ օրւայ հանդիսավար Արթին Մուրադեանը, որտեղ անդրադառնալով Հ.Յ. Դաշնակցության ծնունդին ու բեղուն գործունէութեանը՝ կարեւորությամբ նշեց. «Վիթխարի են Դաշնակցութեան կատարած դերն ու գործը: Այն վեր է լուկ քաղաքական կազմակերպութեան սահմաններից: Հայ ժողովրդին պարտադրւող վիճակի հետեւանքով է, որ Դաշնակցութիւնը խոր գիտակցութեան եւ ամբողջական պատասխանատուութեան ըմբռնումով, իր ուսերի վրայ վերցրեց ծանր պարտականութիւններ: Այսօր տօնում ենք Հ.Յ. Դաշնակցութեան հիմնադրման 122-ամեակը: 122-ամեայ կազմակերպութիւն, որը ապրում է որպէս առոյգ եւ երիտասարդ մի ուժ՝ իր գաղափարական, քաղաքական եւ կազմակերպական կենսունակութեամբ»:

Այնուհետեւ դասախօսությամբ ելոյթ ունեցաւ

«Ալիք» օրաթերթի խմբագրութեան անդամ Արամ Ծափնազարեանը, ով անդրադառնալով Հայաստանի Հանրապետութեան վերանկախացումից յետոյ երեք նախագահների օրօք ձեւաւորւած սոցիալական, տնտեսական եւ քաղաքական համակարգերի յատկանշող կողմերին ու Դաշնակցութեան դիրքորոշումներին՝ պատկան ժամանակաշրջաններում, այսպէս շարունակեց. «Դաշնակցութիւնն առնւազն երկու գլխաւոր առանցքներով տարբերւում է առաջին նախագահի նէո-լիբերալ, երկրորդ նախագահի անդէմագատական, իսկ երրորդի լիբերալ-պահպանողական քաղաքական հոսանքներից, որոնք հետեւեալն են. առաջին՝ Դաշնակցութիւնը երբեւէ ազգային ու պետական շահերը չի հակադրել միմեանց՝ համոզւած լինելով, որ խելամիտ քաղաքականութեամբ եւ օրինական իշխանութիւնների միջոցով հնարաւոր է առանց ազգային հիմնանպատակներից հրաժարելու զարգացնել պետութիւնը. երկրորդ՝ Դաշնակցութիւնը հակառակ Հայաստանի քաղաքական չակերտաւոր էլիտայի, խորապէս հաւատում է սոցիալական արդարութեան ու հասարակական համերաշխութեան սկզբունքներին եւ այդ ուղղութեամբ ունի իր գաղափարական համակարգային յստակ ծրագիրը»:



Օրւայ դասախօսն իր խօսքի շարունակութեան մէջ անդրադառնալով ՀՀ 2013 թւականի նախագահական ընտրութիւններին, ասաց. «Հիմնական խնդիրները թողած, այսօր ընդդիմադիր քաղաքական ուժերի մե-

ծամանուլթեան համար հարցերի հարցը դառել է այն, որ ո՛չ թէ ի՛նչ գաղափարների եւ նպատակների, այլ, ի՞նչ քաղաքական կուսակցութեան կամ անհատ գործիչի շուրջ պէտք է ձեւաւորել համախմբումը: Դժբախտաբար հէնց այս սխալ առանցքի շուրջ են գարգանում մեր այսօրւայ քաղաքական կեանքի բոլոր իրադարձութիւնները»:



Արամ Ծահնագարեանն իր խօսքի ասարտին նշելով մի շարք քաղաքական ուժերի սխալ դիրքորոշումները, որոնց պատճառով ընտրողների զգալի մասը մոլորութեան են ենթարկուում, ւաւելացրեց. «Դաշնակցութիւնն արդէն իսկ ներկայացրել է եօթ կէտից բաղկացած այն գաղափարական ծրագիրը, որի շուրջ պէտք է համախմբւեն փոփոխութեան ձգտող բոլոր քաղաքական ուժերը: Այդ եօթ կէտանոց ծրագրի հիմնական նպատակը շատ յստակ է՝ ձեւաւորել որակապէս նոր իշխանութիւն, որը հնարաւորութիւն կընձեռնի լիակատար քաղաքացիական համակարգ ձեւաւորել՝ իրաւունքի եւ արդարութեան սկզբունքի համատարած կիրառմամբ ու ձգտել սոցիալական արդարութեան՝ ժողովրդավարական ճանապարհներով, իսկ առաջնորդի հարցը պէտք է լուծւի միայն եւ միայն վերջին փուլում, երբ լուծւած կը լինեն ծրագրային-գաղափարական բոլոր հարցերը եւ յստակեցւած կը լինեն գլխաւոր նպատակներն ու ապագայ անելիքները: Եւ սա է ներկայ վիճակից միակ ելքը»:

Բովանդակալից դասախօսութիւնից յետոյ՝ տօնակատարութեան երկրորդ բաժնում, Արին Խաչիկեանի ղեկավարութեամբ «Աճի» նազախումբը եւ համայնքի տաղանդաշատ երգիչ-երգչուհիները ոգեշնչեցին եւ մեծ խանդավառութիւն առաջացրին ներկաների մօտ:



Յեղափոխական երգերի կատարմամբ հանդէս եկան «Աճի» նազախումբի կատարողներ եւ երգիչներ Սարո Ղարախանեանն ու Կարէն Օհանեանը եւ «Կոմիտաս» երիտասարդական երգչախմբի մենակատարներ՝ Թանհա Մինասեանն ու Վանա Ծիրանեանը:



Գեղարուեստական բաժնի շարունակութեան մէջ զուգերգով հանդէս եկաւ նոյն նազախումբի անդամներից Րաֆֆի Խուդաբախշեանը, ընկերակցութեամբ փոքրիկ Նարինէ Խուդաբախշեանի, իսկ «Զօներգ Հ.Յ. Դաշնակցութեան» բանաստեղծութեամբ ելոյթ ունեցաւ Արթին Մուրադեանը:



«ԵՍ ԳՏԱՅ, ՈՐ ՄԻԱԿ ՆԷՐԸ,
ՈՐ ԱՍՏԾՈՒՅ ՈՒՆԵՄ՝
ԳԱ ՄԱՅՐԵՆԻ ԼԵԶՈՒՆ ՈՒ ԳՐԻՉՆ Է»:

Ն.Ջ. ՀԱՅ Մ.Մ. «ԱՐԱՐԱՏ» ՄԻՈՒԹԵԱՆ ԳՐԱԿԱՆ ԽՈՒՄԲԸ ՀԱՆԴԻՊՈՒՄ
ՈՒՆԵՑԱԻ ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒՂԻ ԳԱՅԻԱՆԷ ՄԻՄՈՆԵԱՆԻ ՀԵՏ

Վերջերս Նոր Զուղայում էր գտնում Հայաստանից ժամանած ծագումով իրանահայ, բանաստեղծուհի Գայիանէ Սիմոնեան-Այլազբալեանը: Առիթը պատեհ համարելով, Ն.Ջ. Հայ Մ.Մ. «Արարատ» Միութեան Մշակութային Միաւորի «Գրական» խումբը, վարիչ յանձնախմբի կազմակերպութեամբ հիւրընկալեց բանաստեղծուհուն:

մասին:
Բանաստեղծուհին հանդիպում է ունեցել նաեւ Սպահանի Հայոց Թեմի առաջնորդ գերշ. Տ. Բաբգէն եպս. Զարեանի հետ եւ ստացել նրա օրհնութիւնը:



Հանդիպումը տեղի ունեցաւ «Գրական» եւ «Կուռնկ» ասմունքի խմբերի ղեկավար Ռիմա Սիմոնեանի համագործակցութեամբ ու Միաւորի Վարչութեան հովանաւորութեամբ: Առիթը նրա բանաստեղծութիւնների առաջին ժողովածու «Գիրք մի անուն, անուն առ անուն» գրքի ներկայացնելն էր բանաստեղծուհուն հետ ծանօթանալն էր: Ծրագրի սկզբում Կարին Տէր Մարտիրոսեանը նախ կենսագրական տւեալներով ներկայացրեց բանաստեղծուհուն, այնուհետեւ տկն. Ռիմա Սիմոնեանը ողջունեց բանաստեղծուհուն ներկայութիւնը եւ հակիրճ բնութագրականով ներկայացրեց խմբերի հիմնադրման պատմականը եւ աշխատանքներն ու տարբեր մրցութիւններում ձեռքբերումները:

Որպէս ծանօթացում, ստորեւ ներկայացում է բանաստեղծուհու կենսագրականը:

Գայիանէ Սիմոնեան-Այլազբալեանը ծնել է 1960 թականին Հայաստանի Արմաւիր քաղաքում, Իրանից հայրենիք ներգաղթած հայրենադարձ մի ընտանիքում: Դեռեւս դպրոցական հասակում մեծ սէր է ցուցաբերել հայ գիր ու գրականութեանը, որի արդիւնքում 14 տարեկան հասակում ծնել են նրա առաջին քառատողերը եւ տարիներ յետոյ, 1997 թականից, նորից սկսում է ստեղծագործել: Նրա առաջին ժողովածուն ընդգրկում է 1997-2009 թականների ստեղծագործութիւնները, որոնցում կան հայոց մեծերին նվիրած քառատողեր, հայրենասիրական եւ սիրային բանաստեղծութիւններ, անանական քառատողեր, մաղթանքներ եւ այլն:

Յաջորդիւ Լեռնիկ Ծատուրեանն ընթերցեց ստեղծագործութիւններից հատւածներ, որից յետոյ բանաստեղծուհին երեկոյի կազմակերպման առիթով շնորհակալութիւնների կողքին, ընթերցեց իր ստեղծագործութիւններից մի քանի կտորներ: Ներկաներն առիթ ունեցան նաեւ ունկնդրելու ՀՀ ժողովրդական արտիստ Սարգիս Նաչարեանի միջոցով կարդացած Գայիանէի բանաստեղծութիւնները: Երեկոն ասարտեց ընդունելութեամբ, որի ընթացքում, բանաստեղծուհին բոլորին ներկայացրեց իր բանաստեղծութիւնների ժողովածու գիրքը:

Նրա հետ զրուցելիս տեղեկացանք, որ նա յանախակի է լինում Իրանում, ունի ազգական-բարեկամներ, հետաքրքրւած է իրանահայ համայնքով, մշակութային կեանքով ու դպրոցներով: Եղել է Թեհրանում եւ մասնակցել Հայ Գրողների Միութեան գրական երեկոյթին: Նա մեծ յարգանքով ու գնահատանքով խօսեց իրանահայ գրողների

ՄՐԲՈՑ ՎԱՐԴԱՆԱՆՑ ՏՕՆԸ ՆՇԻՅՑ ՆՈՐ ԶՈՒՂԱՅՈՒՄ

Հովանատրուբեամբ Սպահանի Հայոց Թեմի առաջնորդ գերշ. Ս. Բարգէն եպս. Չարեանի եւ կազմակերպութեամբ Ն.Ջ. Հայ Մ.Մ. «Արարատ» Միութեան Մշակութային Միատրի Վարչութեան, հինգշաբթի՝ փետրարի 7-ի երեկոյեան, Միութեան սրահում նշեց Սրբոց Վարդանանց ազգային-կրօնական մեծ տօնը:



Ծրագրի բացման խօսքից յետոյ ելոյթ ունեցաւ Ծահինշահրի հայ համայնքի հոգեւոր հովիւ հոգձ. Տ. Անանիս վրդ. Գունանեանը: Բանախօսը նորովի ու հետաքրքիր մեկնաբանութեամբ անդրադարձաւ 451 թուականին տեղի ունեցած Աւարայրի ճակատամարտին եւ նշելով զօրքերի անհաւասար պայմաներում եւ նիւթապէս եւ բարոյապէս յաղթանակով աւարտած սոյն հաւատամարտին ասաց. «Հայի համար թիւը երբ է եղել անհրաժեշտութիւն. հայը միայն իր որակով ու ոգով կարող է թլագրուել, հայն իր շնորհքով ու ներկայութեամբ կարող է թլագրուել, հայն իր հաւատի գօրութեամբ, ազգային գիտակցութեամբ եւ իր կամքով ու տարած աշխատքով միայն կարող է թլագրուել»: Նա ամփոփելով Վարդանանցի հիմքում ընկած խորհուրդն ասաց. «Վարդանանքն այսօր եւս մեզանից իւրաքանչիւրիս համար հաւատի մարտ է եւ նրա քաջարի հերոսն ու սպարապետը նոյնինքն Հայաստանեաց Առաքելական Սուրբ Եկեղեցին է՝ իր հոգեւորականութեամբ, կառոյցով եւ Քրիստոսով առաջնորդւած հաւատացեալ ժողովրդով: Վարդանանքն այսօր եւս մեզանից իւրաքանչիւրի համար

մշակոյթի մարտ է եւ նրա քաջարի հերոսն ու սպարապետը նոյնինքն մեր դրպրոցներն ու ազգային-մշակութային կառոյցներն են, որոնք թրծում են մեր ժողովրդին մշակութային բարձր աստիճանով ու սպարապետով, որոնք մեր երիտասարդութեան մէջ կերտում են նոր Վարդաններ ու Ղեւոնդներ: Վարդանանքը նաեւ ազգային մարտ է եւ նրա քաջարի հերոսն ու սպարապետը նոյնինքն մեր Սարգարապատն է, Արցախն ու Զաւախքը եւ մեր գաղթօջախներն են, որոնց յոյսով, գօրութեամբ, միասնականութեամբ գոյատեւում ու պահպանւում են մեր անցեալը, պատմութիւնն ու ազգային սուրբ եւ բարձր արժէքները»:



Հայր Սուրբն աւարտելով իր դաստիարակիչ եւ բովանդակալից բանախօսութիւնը, որպէս պատգամ ասաց. «Բաւական չէ՛ միայն յիշել, տօնախմբել, հպարտանալ, եւ միայն... Այլ անհրաժեշտ է, որ հետեւենք մեր նախնեաց ականդին: Անհրաժեշտ է ունենալ նոյն գիտակցութիւնն ու բժախնդրութիւնը՝ հնդէպ մեր անգային արժէքների, որոնք յաճախ արեամբ պահած ու յետ բերւած են: Գօտեպնդենք Վարդանանց սուրբերի հաւատով եւ այդ հաւատով պահպանենք մեր Հայրենիքը, Արցախը: Այդ հաւատով հետապնդենք ցեղասպան թուրքի դէմ մեր պահանջատիրական պայքարը, այդ հաւատով պահպանենք սփիւռքը եւ սփիւռքեան մեր կառոյցները: Վարդանանքի յարատեւութիւնն ու կամքի ոգին, թող ողոյի մեր ազգի իւրաքանչիւր զաւակի սիրտը, հոգին ու զգացումը՝ այն վերածելու համար գործի ու կեանքի»:

Գեղարւեստական բաժնում Միութեան «Լեւոն Ծանթ» թատերախումբը հատուածներ ներկայացրեց Վարդանանց դրագից, որը թէեւ կարճ բայց յաջող եւ ամբողջական ձեւով փոխանցեց հայ ժողովրդի հաւատի, պայքարի, նահատակութեան եւ յաղթանակի ոգեւէնող պարագան: Բեմադրիչն էր թատերախմբի աւագ անդամ Հրայ Տէր Յովհաննիսեանը եւ սցենարի հեղինակը՝ Հերմինէ Բարայեանը:



Ձեռնարկի աւատին հրաւիրեց եւ օրայ առթիւ իր պատգամը յղեց թեմակալ առաջնորդ գերշ. Ս. Բարգէն եպս. Չարեանը, ով նշելով նոյն օրը առաւօտեան Վարդանանց զօրավարների, նրանց զի-

Ծարունակութիւնը՝ 50-րդ էջում

ՀԱՅԿԱԿԱՆ ԱՒԱՆԴԱԿԱՆ ԲԱՐԵԿԵՆԴԱՆ ՏՕՆԻ ԱՌԹԻ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՏՕՆԱԽՄԲՈՒԹԻՒՆ ՆՈՐ ԶՈՒՂԱՅՈՒՄ



Անցեալում Նոր Զուղայի բնակչութիւնն աւանդաբար Բուն Բարեկենդանը նշում էր ընտանիքների յարկի ներքոյ եւ ոմանք էլ տարազատուած շրջում էին քաղաքով, այցելում էին ծանօթ-անծանօթ ընտանիքներին եւ խաղերի ու կենցաղական դրագների ներկայացումներով ուրախ եւ զարճալի պահեր էին նւիրում նրանց: Սկսեալ 2001 թականից, Նոր Զուղայի բնակչութիւնը, Բուն Բարեկենդանի տօնը նշում է միասնաբար. Նոր Զուղայի Հայ Մ.Մ. «Արարատ» Միութեան շրջափակում կազմակերպուում է դիմակահանդէս եւ աւանդական ճաշերի ու այլ ուտեստեղէնների մատակարարում: Նոր ձեւ ու կերպ ստացած սոյն տօնախմբութիւնն ի մի է բերում մեծաթիւ դիմակաւոր ու տարազատոր անճանց, որոնց առիթ է տրուում բեմահարթակում ցուցադրել իրենց հետաքրքիր մտայղացումներով իրականացրած կերպարները, ինչպէս՝ ազգագրական եւ աշխատանքային տարազներ, կենդանական, բուսական եւ երեւակայական աշխարհի կերպարներ, ծաղրածուներ, դերասաններ եւ այլն:



Այս տարի եւս, տօնական սոյն հանդիսութիւնը կազմակերպեց Միութեան Երէջների Միաւորի Վարչութեան եւ անդամ-ուհիների ամբողջ կազմի համագործակցութեամբ, որն իրականացւեց Միութեան մարզադահլիճում: Բեմային ծրագրի մեկնարկն եղաւ Բարեկենդանի խորհրդանիշ Ղափամայի խանդավառ

մուտքով, որը համանուն երգ-երաժշտութեան ներքոյ դահլիճ բերեց հայկական տարազներով զգեստաւորած Երէջների Միաւորի անդամ-ուհիների պարով, որի ընթացքում բեմականացւեց նաեւ հայկական հարսանեաց ծէսերից՝ փեսային կանաչ-կարմիր կապելու արարողութիւնը:



Ստեղծած ուրախ ու զարճալի տրամադրութիւն էր տիրում հարիրաւոր հանդիսատեսի մօտ, որոնց զգալի մասը ներկայ էր գտնւել տարազով եւ Միաւորի միջոցով պատրաստած դիմակներով ու գլխարկներով, նաեւ Բարեկենդանին համապատասխան դիմայարդարանքով, որը տեղի վրայ իրականացնում էին Արինէ եւ Լուսինէ Թորոսեանները:

Այսպիսով հանդիսութիւնը նոյն տրամադրութեամբ շարունակեց Հովիկ Աղախանեանի եւ Ռիթա Մինասեանի երգեցողութեամբ, որից յետոյ Մշակութային Միաւորի «Լեւոն Շանթ» թատեսխումբը հանդէս եկաւ Յովհաննէս Թումանեանի «Բարեկենդան» հեքիաթի ներկայացումով, բեմադրութեամբ Վիգէն Մովսիսեանի:



Մինչ տարազների ցուցադրումը, ծրագրի հանդիսավար Հոփսիկ Սիմոնեանը, Ռոլանդ Ղարախանեանի հետ միասին հումորային ելոյթով տեղեկութիւններ փոխանցեցին Բուն Բարեկենդանի, նրա խորհրդի, տօնին առնչող ծէսերի, ինչպէս նաեւ Ղափամայի (մեղրադրումի) պատրաստման մասին, նաեւ կատակախա-

ղով զուգահեռներ անցկացրին օտար ազգերի Վալենթայնի, Բալմասկէի եւ հայկական Ս. Սարգսի ու Բուն Բարեկենդանի տօների միջեւ. սրա նպատակն էր ներկաների, յատկապէս երիտասարդութեան ուշադրութեանը յանձնել, որ զերծ մնան օտարամոլութիւնից եւ կառչաց մնալով մեր ազգային գեղեցիկ ասանդութեանն ու ծէսերին՝ դրանք անաղարտ ձեւով փոխանցեն յաջորդ սերունդներին:

Տարագների ցուցդրման բաժնում բեմ ելան նախապէս արձանագրուած աւելի քան 60 տարագաւորներ: Ըստ իրաւարար կազմի քնարկումների, 9 լուսագոյն տարագաւորներ գնահատուեցին յուշանւերներով, իսկ միւս մասնակիցներին գնահատագրեր յանձնուեցին: Իրաւարար կազմի անդամներն էին Վարդուշ Զարգարեանը, Զեփիլո Մարտիրոսեանը, Միգանուշ Տէր Մարտիրոսեանը եւ Ադրիէն Ստեփանեանը:

Երեկոն շարունակուեց Արին Խաչիկեանի ղեկավարութեամբ աշխատող «Անի» նազախմբի երգ-երաժշտութեան կենդանի կատարումներով եւ ներկաները վայելեցին Երեցների Միաւորի պատրաստած հայկա-

կան ասանդական ու Մեծ Պահքին յատուկ ճաշատեսակներով:



Վերջում շնորհակալական խօսք ուղղուեց, բոլոր նրանց՝ որոնց համագործակցութեամբ իրականացուեց դժուարին աշխատանքը, որը վկայութիւն էր միութենականների ու մասնակից անձանց ավերապահ համագործակցութեան մասին:



ԴՊՐԱՅ ԵՒ ԿԻՍԱՍԱՐԿԱՒԱԳՈՒԹԵԱՆ ՉԵՆՆԱԴՐՈՒԹԻՒՆ ԸԱՀԻՆԸԱՀՐՈՒՄ



2012 թւականի դեկտեմբերի 29-ի երեկոյեան ժամը 17:30-ին, Ծափնշահրի Սրբոց «Վարդանանց» դպրոցի սրահը լեւի-լեցուն էր հաւատացեալ ժողովրդով: Առաջին անգամ Ծափնշահրում տեղի էր ունենալու դպրութեան եւ կիսասարկաւագութեան ձեռնադրութիւն:

Կիրակնամուտքի ժամերգութեան ընթացքում, խարտաւիկալութեամբ Ծափնշահրի հոգեւոր հովիւ հոգշ. Տ. Անանիա վրդ. Գունանեանի, Սպահանի Հայոց Թեմի բարեջան առաջնորդ գերշ. Տ. Բաբգէն եպս.

Չարեանի ձեռամբ դպիր եւ կիսասարկաւագ ձեռնադրուեցին Հայոց Եկեղեցուն նւիրեալ 11 երիտասարդներ՝ Սերժիկ Քեշիշեանը, Սեւադա Իսաղուլեանը, Արին Մելքոնեանը, Լեւիկ Անջուլեանը, Արուսիկ Հախնազարեանը, Անդրէ Խաչատրեանը, Արգիկ Ծախմիրզայեանը, Ծանթ Թահմազեանը, Արգիկ Մարկոսեանը, Արգամ Նազարեանը եւ Արգիկ Ղարիբեանը: Չեռնադրութեան ընթացքում երիտասարդները ծուկիկ եկած ստացան Սրբազան Հօր օրհնութիւնը:

Արարողութեան ժամանակ նախ տեղի ունեցաւ դպրաց ձեռնադրութիւնը, որի ընթացքում Սրբազան Հայրը դպրութեան աստիճանների արժանացրեց 11 երիտասարդներին, որոնցից մի մազափունջ կտրեց՝ ի նշան աշխարհիկ կեանքը թողնելու: Յաջորդաբար նրանց տուեց Սաղմոսագիրքը, որպէսզի գիտակցօրէն հաւատան ու ընթերցեն այնտեղ գրածները, աւելը՝ որպէսզի սրբեն, մաքրեն եւ միշտ մաքուր ու անաղարտ պահեն հայ եկեղեցին, բանալին՝ որպէս իրաւունք բանալու եւ փակելու եկեղեցու դռները, Առաքելական գրքերը՝ որպէսզի տեղեկանան եւ պատմեն Աստծու խօսքը, Մաշտոցը՝ որպէս իրաւունք երդմնեցչութեան, վառած աշտանակը՝ որպէս կարգ ջահընկալութեան, ապա գինու սրակը՝ Ս. Պատարագի գինին նրա մէջ լցնելու համար:



Պահպանիչ աղօթքից յետոյ, 11 դպիրներից 5-ը ստացան կիսասարկաւագութեան պաշտօն, ովքեր էին՝ Սերժիկ Քեչիշեանը, Սեւադա Իսաղուկեանը, Արին Մելքոնեանը, Լեւիկ Անջուկեանը եւ Արուփին Հախնազարեանը, ովքեր եկեղեցու բեմի առջեւ Սրբազան Հօր դիմաց ծնկի եկած, այս անգամ թեմակալ առաջնորդից ստանան ուրար կրելու իրաւունք:



Սրբազան Հայրն իր ձեռքը նրանց գլխին դնելով

աղօթք կարդաց, որի մէջ ամենակալ Աստծուց խնդրեց օրհնի եւ Իր հովանու տակ պահի 5 երիտասարդները, որպէսզի ամենայն պատշաճութեամբ եւ երկիւղածութեամբ կատարեն իրենց վստահած Հայաստանեաց Առաքելական Սուրբ Եկեղեցու նիւրապետական առաջին կարգերի պարտականութիւնները, ապա նրանց ձախ բազկի վրայ դրեց ուրարները եւ նրանց ձեռքը տուեց դատարկ Սկիին ու մաղզման, Պատարագի ամբողջ մի զգեստ, շոշիպ եւ խորհրդատետր, ի նշան Ս. Պատարագի ընթացքում Ս. Սեղանին սպասարկելու արտօնութիւն:

Սրբազան Հօր օրհնութիւնից յետոյ, երիտասարդներն երդուեցին անձնփրաբար ծառայել Հայոց Առաքելական Եկեղեցուն:



Սրբազան Հայրն իր քարոզում գնահատեց Ծահինջահրի հոգետր հովի հոգչ. Տ. Անանիա վրդ. Գունանեանին, որի ջանքերով վերոյիշեալ 11 երիտասարդները պատրաստուել էին ստանալու դպրաց եւ կիսասարկաւագաց պաշտօնները, ապա խօսքն ուղղելով ձեռնադրեալներին ասաց. «Պարկեչտութեա՛մբ, ազնուութեա՛մբ եւ խոնարհութեա՛մբ պէտք է ծառայէք Հայոց Եկեղեցուն»: Նա շեշտեց նաեւ, որ եկեղեցու նիւրապետական կարգի խոնարհագոյն աստիճաններն ստանալ նշանակում է՝ սպասարկել սուրբ Խորանին, մաքրել եւ բարեզարդել եկեղեցին: Իր խօսքի աւարտին Առաջնորդ Սրբազան Հայրը շնորհաւորեց նորօք ձեռնադրեալ դպիրներին եւ կիսասարկաւագներին, մաղթելով որ յարատեւ կերպով ուրախութիւնը ունենան ծառայելու եւ սպասարկելու նախ Աստծուն, եկեղեցուն եւ ապա ժողովրդին:

Այս նշանակալից իրադարձութիւնն աւարտեց ճիւղ հիւրասիրութեամբ, որը պատրաստել էր Ծահինջահրի Հայ Կանանց Եկեղեցասիրաց Միութիւնը:

«ՍՐԲՈՑ ՎԱՐՂԱՆԱՆՑ» ՏՕՆԸ ՇԱԽԻՆՇԱՀՐՈՒՄ

«Սրբոց Վարդանանց» տօնը հայ ժողովրդի եւ մասնատրապէս Շախինշահրի ժողովրդի կողմից սիրւած եւ յարգուած տօներից մէկն է, քանի որ այն Շախինշահրի եկեղեցու սրահի, եւ դպրոցի անւանակիցն է:



Սրբոց Վարդանանց տօնի առթիւ մատաղ մատուցելը համայնքի մեծագոյն ցանկութիւններից էր, որն իրականութիւն դարձաւ այս տարի, Շախինշահրի հոգետոր հովիւ հոգշ. Տ. Անանիա Վրդ. Գունանեանի եւ Շախինշահրի Հայ Համայնքային Վարչութեան ջանքերով: Խորհուրդ ունեցողներից հանգանակած գումարով գնեց մատաղացու ոչխար եւ չորեքշաբթի՝ 2013 թւականի փետրուարի 6-ին Շախինշահրի Հայոց Ազգային «Սրբոց Վարդանանց» դպրոցի բակում կատարեց Աղօրհնէքի արարողութիւն հոգշ. Հայր Սուրբի ձեռամբ, ապա տեղի ունեցաւ ոչխարի զենում:

Հարիսան ետիւու գործն ստանձնել էին մի քանի կամաւոր անձինք, ովքեր ամբողջ գիշերը ուշադրութեամբ հսկեցին աշխատանքի վրայ:



Հինգշաբթի՝ փետրուարի 7-ի առաւօտեան նախագահութեամբ Սպահանի Հայոց Թեմի թեմակալ առաջնորդ գերշ. Տ. Բարբէն եպս. Չարեանի, Շախինշահրի հոգետոր հովիւ հոգշ. Տ. Անանիա վրդ. Գունանեանը

«Սրբոց Վարդանանց» դպրոցի սրահում Ս. եւ անմահ պատարագ մատուցեց, որին ներկայ էին նաեւ արժն. Տ. Վարդան քինչ. Աղաբաբայեանը, Սպահանի Հայոց Թեմի Կրօնական Խորհրդի ատենապետ արն. Արշալոյս Խուդավերդեան, Շախինշահրի հայ համայնքի Վարչութեան անդամները, ազգային մարմինների ներկայացուցիչները, Շախինշահրի Հայոց Ազգային «Նարեկ» Մանկապարտէզ-Նախակրթարանի եւ «Սրբոց Վարդանանց» դպրոցի ուսուցչական կազմերը, աշակերտութիւնը եւ բազմաթիւ հաւատացեալներ:

Ս. Պատարագի երգեցողութիւնը կատարեց, ինչպէս միշտ, Շախինշահրի «Նարեկ» երգչախումբը:

Սրբոց Վարդանանց զօրավարների եւ 1036 նահատակ վկաների յիշատակին մատուցող հանդիսատար այս պատարագի ընթացքում յաւուր պատշաճի քարոզեց Թեմիս բարեջան առաջնորդ գերշ. Տ. Բարբէն եպս. Չարեանը: Առաջնորդ Սրբազան Հայրը բացատրելով, որ օրւայ խորհուրդը սրբոց Վարդանանց կատարած սխրանքը մեր օրերում եւս վառ պահելն է, ասաց. *«Վարդանն ու քաջարի ռազմիկները ինչպէս նաեւ ողջ հայ ժողովուրդը այնքան ամուր էին կառչած իրենց հաւատին, այնքան սրտանց էին փարւել իրենց քրիստոնէական հաւատին, որ այն միաձուլել էր իրենց արեան հետ, դարձել մաշկի գոյնի պէս իւրովի ու սեփական եւ անհնար էր, որ ժողովուրդը յետ կանգնէր դրանից»:*



Մեծարելով սրբոց Վարդանանց սխրանքը, առաջնորդ Սրբազան Հայրը անրադարձաւ այսօրւայ մեր հաւատի հիմնահարցերին եւ ազգային խնդիրներին՝ շեշտելով, որ մենք պէտք է շարունակենք Վարդանանց գործերը՝ ազնիւ վարքով, ազգային խոր նկարագրով, ընդգծուած ու վառ քրիստոնէական հաւատով:

Սուրբ Պատարագից յետոյ, առաջնորդ Սրբազան Հայրը եւ պատարագիչ Հայր Սուրբը, հաւատաւոր ժողովրդի հետ միասին թափոր կամելով՝ դուրս եկան հայոց դպրոցի բակ, որտեղ արդէն պատրաստ էր մատաղի մսով պատրաստուած հարիսան՝ պատշաճ ամանների մէջ լցած:

Տեղի ունեցաւ մատաղի օրհնութիւն գերշ. Տ. Բարբէն եպս. Չարեանի միջոցով, որից յետոյ այն բաժանեց ներկայ հաւատացեալներին, ովքեր լիցքաւորուած օրւայ խորհրդով եւ գօտեպնդուած Վարդանանց հաւատով տուն մեկնեցին խաղաղութեամբ:

ԲՈՒՆ ԲԱՐԵԿԵՆՒԱՆԸ ՇԱՅԻՆՇԱՔՐՈՒՄ

2013 թականի փետրարի 7-ին Շահինշահի Հայ Ազգային «Սրբոց Վարդանանց» դպրոցի սրահում կայացաւ Բուն Բարեկենդանին նկրած տօնահանդէս-դիմակահանդէս: Բարեկենդանը ժողովրդի մէջ յատուկ սիրած տօներից մէկն է եւ այդ էր պատճառը, որ հանդէսին մասնակցել էին թէ՛ երիտասարդները, թէ՛ երեխաները եւ թէ՛ տարեցները: Իրենց իրօրինակ հանդերձանքով աչքի էին ընկնում համարեա՛ բոլոր դպրոցականները:



Հանդէսը բացւած յայտարարեց պրն. Ռազմիկ Մարկոսեանը, բեմ հրաւիրեցին փոքր տարիքի երեխաներ, ովքեր տօնական հանդերձանքով էին: Անշափ գեղեցիկ էին պառաւ տատիկը՝ ձեռնափայտով, կրիան, հալկական հարսի տարազով աղջնակը, Սպունգ-Բոբը, զոյգ քոյրեր թիթեռնիկները, կախարդը...: Բեմ ներկայացած մանուկներն ու բոլոր փոքրիկ հերոսներն զմայլեցին ներկաներին իրենց երգերով ու թոթովախօս արտասանութիւններով: Այնուհետեւ բեմ բարձրացան դպրոցականները՝ ծովահէն, ջրահարս, բժշկուհի, հայ աւանդական թագուհի, մոխրոտիկ, զինուոր, հրշէջ, ոստիկան. ահա ոչ-լրիւ այն կերպարները, որոնց հանդերձաւորել էին դպրոցահասակ երեխաները: Բոլոր մասնակիցներին տրուեցին նւերներ:

Այնուհետեւ բեմը տրամադրուեց պարին եւ ուրախութեանը: Մասնակիցները պարեցին, զարնացան, մի խօսքով՝ Բուն Բարեկենդանին վայել մի լաւ ուրախացան:



ԲԶԾՔՄԻՔԶԾՔ ԾՉՍ ԻՉՍՉՍԾ ՕԻՕԾՕԾՉԵՔԾՉՈ ՔՔՁՁՁՁՁՁ ԻՆՍՍՕԾ ԻՁՍՍ ԻՉՉՕԻՕՍՍ ՉՍ

2013 թականի փետրարի 11-ին, «Սրբոց Վարդանանց» դպրոցի սրահում, Շահինշահի Հայ Կանանց Եկեղեցասիրաց Միութիւնը տօնեց Բուն Բարեկենդանի տօնը:

Տօնականօրէն զարդարւած սրահում ներկայ էին Շահինշահի հոգեւոր հովիւ հոգ. Տ. Անանիա վրդ. Գունանեանը, Շահիշահի Հայ Համայնքի Վարչութեան անդամ տկն. Մարիթա Քեշիշեանը, Միութեան հիւրերը՝ Նոր Զուղայից ու Շահինշահից, եւ Միու-

թեան անդամուհիները:

Տօնահանդէսը բարիգալստեան խօսքով բացեց եւ բոլորին շնորհաւորեց Միութեան նախագահ տկն. Անահիտ Օհանեանը՝ հրաւիրելով հոգ. Հայր Սուրբին՝ օրայ առթիւ իր պատգամը փոխանցելու: Հոգ. Տ. Անանիա վրդ. Գունանեանը հակիրճ բացատրութեամբ ներկայացրեց Բուն Բարեկենդանի խորհուրդը եւ ցանկացաւ բոլորին ուրախ ժամանց:

Այնուհետեւ խօսքը տրուեց տկն. Նարդ Փանոսեանին, ով մանրամասն ներկայացրեց Բուն Բարեկենդանի տօնակատրութեան մասին, նշելով. «Բարեկենդանն այն աւանդական տօներից է, որ Հայր միշտ տօնել է: Այն նշանակում է ճոխ ու առատ ուտելիքների եւ խրախճանքի օր: Բարեկենդանը զարդարւել է թէ՛ տարազների, թէ՛ ուտելիքների եւ թէ՛ տնային զարդարանքների ցուցադրութեամբ եւ ազգային ու աւանդական երգ ու պարով»:



Այնուհետեւ բեմ բարձրացան տարազ հագած կանայք ու երեխաներ, որոնց ներկայացրեց տկն. Օհանեանը: Փերիոյ կնոջ տարազ հագած մասնակիցը ներկայացրեց Փերիայի աւանդույթները՝ Բուն Բարեկենդանը նշելու վերաբերեալ: Չհարմախալ գաւառի տարազակիր կինն իր տարազն ու նրա արդուզարդը եւ տօնի սովորութիւնները ներկայացրեց: Միութեան անդամուհի տկն. Վերժիկ Նազարեանը բոլորի ծափող-ջոյնների ներքոյ կատարեց «Ղափամա» պարը:

Տօնակարութեան երկրորդ բաժնում կազմակերպւել էին հետաքրքիր մրցութիւններ, որոնք խանդավառ մթնոլորտ եւ լաւ տրամադրութիւն առաջացրին բոլորի մօտ: Մրցութիւններում յաղթողները պարգեւատրուեցին նւերներով:

Այնուհետեւ տկն. Սեդա Բաբումեանը ներկայացրեց «Հայ Մօր Տարւան» նկրած իր ձեռքի աշխատանքը՝ դրումից պատրաստուած գեղեցիկ կերպարանւորած ազգային տարազով կինը եւ նրա մանկան օրօրոցը, խոհանոցը, մի խօսքով՝ այն միջավայրը, որը յատուկ է հայ կնոջը:

Հանդէսի ժամանակ հնչում էր նաեւ հայ կնոջը, հայ ընտանիքին ու կեանքին նկրած առակներ եւ ասույթներ: Իր բարեհնչիւն ու գեղեցիկ երգերով ներկաներին մեծ հաճոյք պատճառեց հայ կնոջ ազգային տարազ հագած տկն. Ռիթա Մկրտչեանը:

¼°Ī àŪòª

բԶԹÆÛԲԾԾÆԾՄձո շ¼¶ՉՄÆÛ ՏÛԶծօĪ | 0ԶÛĪ Չä Չծի ¾¼-ÛԶÊ ՉĪծÃ ՉծՉÛÆ ¶āծĪ āoÛ¾āoÃ օԶÛ

ՆԱԽՕՐԵԱԿ ԵՒ ԱՄԱՆՈՐԵԱՅ ՀԱՆԴԵՍ

2012 թականի դեկտեմբերի 25-ի առաւօտեան ժամը 10-ին, Ծահինշահրի Հայոց Ազգային «Նարեկ» Մանկապարտէզ-Նախակրթարանի յարկի տակ տեղի ունեցաւ Ամանորի նախօրեակի հանդէսը: Մեր ազնի մանուկներն իրենց մաքուր եւ անարատ մտածումներով անհամբեր սպասում էին Չմեռ-Պապայի գալուին. մէկ տարի սպասելուց յետոյ, պէտք է հանդիպէին նրան եւ իրենց ուզած խաղալիքների մասին ասէին, որպէսզի Ամանորի գիշերան իրենց ուզածը յայտնւի տօնածառի տակ:



Երբ Չմեռ-Պապը Չիւնանուշի հետ ժամանեց դպրոց, սաները մեծ խանդավառութեամբ դիմաւորեցին նրանց իրենց դասարաններում: Նրանք դասարանում մտերմիկ զրոյց ունեցան Չմեռ-Պապի հետ եւ նրան ներկայացրեցին իրենց սովորածներից:

Քիչ անց, դպրոցի մեծ սրահում ուրախ նւագներով եւ երգերով զւարճացան եւ պարեցին մանուկները: Տեղի ունեցաւ նկարահանում Չմեռ-Պապի եւ Չիւնանուշի բերած կարկանդակի հետ:



Ծրագրի աւարտին սաներն ուրախ տրամադրութեամբ յաջողութիւն մաղթեցին Չմեռ-Պապին եւ Չիւնանուշին, ովքեր մանուկներին խօստացան, որ դարձեալ այցի կը գան Ամանորեայ հանդէսի օրը, որպէսզի տեսնեն եւ լսեն երեխաների ներկայացումներն ու նրանց համար նւէրներ բերեն:

Ուրախ տրամադրութիւնը շարունակեց մինչեւ 2012 թականի դեկտեմբերի 28-ի երեկոյան, երբ տեղի ունեցաւ դպրոցի Ամանորեայ հանդէսը, որին ներկայ էին Ծահինշահրի հոգեւոր հովիւ հոգձ. Տ. Անանիա վրդ. Գունանեանը, արժն. Տ. Մեսրոպ քինց. Գալստանեանը, Ծահինշահրի Հայ Համայնքի Վարչութեան անդամները, սաների ծնողներն ու հարազատները:



Ծրագրի բացումը կատարեց դպրոցի տեսչուհի Ալիս Մկրտչեանը, մաղթելով՝ «Գերազանց կեանք՝ ներքնապէս եւ արտաքնապէս զարդարւած ճշմարտութեան լոյսերով եւ համբերութեան զարդերով, եւ Աստուծու փառքն ու զօրութիւնը բոլոր ընտանիքներում», ապա հիւրերին եւ ծնողներին հրաւիրեց դիտելու սաների Ամանորեայ ծրագիրը:

Գեղարեստական բաժնի սկզբում սաներից երկուսը՝ Լեմուէլ Թահմազեանը եւ Էլիա Բարսեղեանը հանդէս եկան Ամանորեայ մաղթանքներով, ապա սաները ներկայացրին երկու պար, որն իր հերթին մեծ խանդավառութիւն ստեղծեց ներկաների մօտ:



Ծրագրի յաջորդ բաժնում բոլոր սաները միասին ներկայացրին գեղեցիկ երգեր: Երեխաների քաղցր ձայնը լսելով, նրանց այցելեց Ձմեռ-Պապը՝ Ձիմանուշի հետ, եւ դարձեալ իր այցով ուրախութիւն եւ նոր շունչ պարգեւեց դահլիճին եւ սաներին:

Երգերի շարանն աւարտելուց յետոյ, Ձմեռ-Պապը եւ Ձիմանուշը գեղեցիկ մրգեր նւիրեցին սաներին:

Ծրագրի աւարտին բեմ հրաւիրեց հոգշ. Հայր Սուրբը՝ իր օրհնանքի եւ ծրագրի փակման խօսքն արտայայտելու: Նա գնահատանքի խօսքեր ուղղեց դրպրոցի տեսչութեանը, ուսուցչական կազմին եւ Ծնողական Խորհրդին՝ իրենց տարած աշխատանքների համար: Հայր Սուրբն իր ուրախութիւնը յայտելով՝ ցանկացաւ ամուսայ ընթացքում պահեր անցկացնել դպրոցում եւ մօտից շփուել սաների հետ, որը մեծ ուրախութիւն պատճառեց բոլորին:

ԲՈՒՆ ԲԵՐԵԿԵՆԴԱՆ



Բարեկենդան նշանակում է բարի կեանք եւ ապրելակերպ, որը նշում է պահքի օրերն սկսելուց անմիջապէս առաջ, իսկ Բուն Բարեկենդանը Մեծ Պահքը կանխող օրն է, որն էլ համարում է Մեծ Պահքի առաջին կիրակին՝ յուշելով մարդկութեան նախածնողների՝ Ադամի եւ Եւայի դրախտային երանական կեանքն ու վաւելքը: Այդ օրը մարդիկ ուրախ խրախճանք են կազմակերպում եւ ճոխ սեղաններ պատրաստում, իսկ յաջորդ օրանից սկսում պահքի օրերը՝ ժամանակ՝ նորոգելու եւ վերազարդարելու իրենց հոգիներն ու անձերը:

Ինչպէս ամէն տարի, այս տարի եւս Ծահինշահրի Հայոց Ազգային «Նարեկ» Մանկապարտէզ-Նախակրթարանի տեսչութեան, ուսուցչական կազմի եւ Ծնողական Խորհրդի ջանքերով տօնեց այս գեղեցիկ տօնը, չորեքշաբթի՝ 2013 թականի փետրարի 6-ի առաւօտեան: Բոլորն անհամբեր էինք տեսնելու դպրոցի սաների հագած տարազները: Սաները մէկ առ մէկ յայտնեցին եւ իրենց գեղեցիկ զգեստներով ներկայացրեցին չինացի աղջիկ, հրշէջներ, հարսեր, մկնիկ, թիթեռնիկներ, Սպունգ-Բաք, կովբոյ եւ արքայադուստր:

Ամէն մէկն իր կերպարի մէջ երգում, պարում եւ ուրախանում էր:



Երկար խրախճանքից յետոյ, Ծնողական Խորհրդի դասատրումով հիւրասիրուեցին սաները, վերջում ստացան Խորհրդի կողմից պատրաստած մրգեր եւ լաւ յիշողութիւններով տուն վերադարձան:

ՏԵԱՌՆԸՆԴԱՌԱՋ

Չորեքշաբթի՝ 2013 թականի փետրարի 13-ի առաւօտեան Ծահինշահրի Հայոց Ազգային «Նարեկ» Մանկապարտէզ-Նախակրթարանում տօնեց Տեառնընդատաշը:



Այս խորհրդաւոր տօնի առթիւ տեղի ունեցաւ արդէն դպրոցում աւանդոյթ դարձած հրավառութիւնը: Թուփը պատրաստեց եւ վառեց Ծնողական Խորհրդի միջոցով: Երեխաներն անսահման ուրախ էին եւ կրակի շուրջ պտտելով իրենց ուսուցիչների հետ երգում էին ուրախ երգեր: Նրանք անհամբեր սպասում էին կրակի վրայից ցատկելու պահին. ահա հասաւ ժամանակը եւ սաներն իրենց դաստիարակների օգնութեամբ սկսեցին ցատկել կրակի վրայից՝ ուրախութեան ճշեր արձակելով եւ մեծ խանդավառութիւն ապրելով:

Վերջում սաներն ստացան գեղեցիկ փաթեթաւորումներով քաղցրաւեցիկներ եւ իրենց տները վերադարձան ուրախ տրամադրութեամբ:

Թղթակից՝ Այլին Քեչիշեան

ՇԱՀԻՆՇԱՀՐԻ ՆՈՐԱԿԱԶՄ ԹԱՏԵՐԱԽԱՐԻ ԱՆԷԱՆԱԿՈՉՈՒԹԻՒՆԸ ԱՆԴՐԱՆԻԿ ԲԵՏԱԴՐՈՒԹԻՒՆ՝ ՇԱՀԻՆՇԱՀՐՈՒՄ ԵՒ ՆՈՐ ԶՈՒՂԱՅՈՒՄ



Չորեքշաբթի՝ 2012 թվականի հոկտեմբերի 3-ի երեկոյան ժամը 8-ին, հովանաւորութեամբ Ծահինշահրի հոգւոր հովիւ հոգչ. Տ. Անանիա վրդ. Գունանեանի, ներկայութեամբ Սպահանի Հայոց Թեմի Թեմական, Կրօնական, Կրթական խորհուրդների, Հայ Դատի Յանձնախմբի, Ծահինշահրի Հայ Համայնքի Վարչութեան, ուսուցչական կազմերի, Ծնողական խորհուրդների ներկայացուցիչների եւ նաեւ բազում հրաւիրեալների, տեղի ունեցաւ Ն.Ձ. Հայ Մ.Մ. «Արարատ» Միութեան Ծահինշահրի Մասնաճիւղի Մշակութային Միաւորի նորակազմ թատերախմբի անանակոչութեան հանդիսաւոր արարողութիւնը:

Անանիա վրդ. Գունանեանի միջոցով խումբը կոչւեց «Յակոբ Պարոնեան» թատերախումբ: Հոգչ. Հայր Սուրբն իր դրատանքի խօսքն ուղղելով կազմակերպիչներին եւ թատերախմբին, այսպէս արտայայտեց. «Մեզ համար մեծ հպարտութիւն եւ ուրախութիւն է այս բեմում տեսնել երիտասարդ եւ հաւատարիմ ուժեր, որոնք գալիս են ծաղկեցնելու եւ արժեւորելու հայ մշակոյթը:



Բացման խօսքով հանդէս եկաւ Վիոլետ Յարութիւնեանը, ով բարի գալուստ մաղթելով ներկաներին, հակիրճ անդրադարձաւ թատերական արւեստի դերակատարութեանը մարդկային կեանքի պատմութեան ընթացքում: Ապա բեմը տրամադրեց նորակազմ թատերախմբին, որը շուրջ 3 ամիս եռանդուն աշխատանքից յետոյ, դերուսույց Ռեալիկ Մարկոսեանի ղեկավարութեամբ ներկայացնելով Ծիրանգաղէի «Շառլատան» կատակերգութիւնը՝ խինդ ու ծիծաղ եւ ուրախ պահեր պարգեւեց հանդիսատեսին, ուստի եւ արժանացաւ նրա բարձր գնահատանքին:

Եւ այս թատերախումբը մկրտում եմ «Յակոբ Պարոնեան» անւամբ: Այսօր «Յակոբ Պարոնեան» թատերախումբն իր կարճ ժամանակէկ աշխատանքի

Ներկայացումից յետոյ, երեկոյի հանդիսաւոր բաժնում, հոգչ. Տ.

արդիւնքը փոխանցեց մեզ: Նրանց մէջ չեղան անհատականութիւններ, այլ եղաւ ընտանիք: Գործեցին որպէս մէկ, ներկայացան որպէս մէկ եւ այսօր մեզ ներկայացրեցին այս ընտանիքի գեղեցիկ պատմութիւնը՝ իրենց կատակերգութեամբ, իրենց կեանքով, իրենց հոգով: Գնահատում եմ դերասաններին, մաղթում եմ նրանց յաջողութիւն: «Արարատ» Միութեան Շահինշահրի Մասնաճիւղը նոր կամքով, նոր ուժով լծել է իր առաքելութեանը: Ես գնահատում եմ նաեւ Միութեան Մշակութային Միաւորին եւ բեմադրիչ Ռազմիկ Մարկոսեանին»:

Վերոյիշեալ կատակերգութիւնը բեմականացւեց նաեւ հինգշաբթի՝ հոկտեմբերի 4-ին՝ Ծափնշահրում եւ շաբաթ՝ հոկտեմբերի 6-ին՝ Նոր Զուղայում, հոգձ. Հայր Սուրբի, ազգային մարմինների ներկայացուցիչների եւ հոծ թուով արւեստասէր հանդիսատեսների ներկայութեամբ՝ արժանանալով ներկաների բարձր գնահատանքին:

Բեմադրութիւնների աւերտին, Ն.Զ. Հայ Մ.Մ. «Արարատ» Միութեան Ծափնշահրի Մասնաճիւղի անուցից օրւայ հաղորդավարը շնորհակալական խօսք ուղղեց Միութեան Կենտրոնական Վարչու-

թեանը եւ միաւորներին, Ծափնշահրի Հայ Համայնքի Վարչութեանը՝ իրենց ցուցաբերած համագործակցութեան համար, եւ նաեւ բոլոր անձանց, ովքեր իրենց անվերապահ աջակցութիւնը ցուցաբերեցին բեմականացումն իրականացնելու կապակցութեամբ:

Բեմադրութեան երկրորդ եւ երրորդ օրերում, ծրագրերի աւարտին դարձեալ իր հայրական ոգեշունչ խօսքերով հանդէս եկաւ հոգձ. Հայր Սուրբը եւ իր գնահատանքի խօսքն ուղղելով թատերախմբին, կազմակերպիչներին եւ ներկաներին, մաղթեց բոլորին քաջաողջութիւն, յաջողութիւն եւ կանաչ ճանապարհ:

ՍՊԱՀԱՆԻ ՀԱՅՈՑ ԹԵՄԻ 15-ՐԴ ՆՍՏԱԵՐՉԱՆԻ ԳԱՏԳԱՄԱՒՈՐԱԿԱՆ ԺՈՂՈՎԻ ԸՆՏՐՈՒԹԻՒՆՆԵՐԻՆ ԸՆԴԱՌԱՋ

2013 թականի փետրարի 15-ին, Ծափնշահրի Հայոց Ազգային «Սրբոց Վարդանանց» դպրոցում հաւաքել էին համայնքի անդամներ՝ Սպահանի Հայոց Թեմի 15-րդ նստաշրջանի Պատգամաւորական Ժողովի Ծափնշահրի թեկնածուների հետ հանդիպելու եւ լսելու նրանց ծրագրերի, առաջարկութիւնների եւ խնդիրների մասին:



Հանդիպմանը ներկայ էին նաեւ Ծափնշահրի հոգեւոր հովիւ հոգձ. Տ. Անանիա վրդ. Գումանեանը, արժն. Տ. Վարդան քննչ. Աղաբաբայեանը, Ծափնշահրի Հայ Համայնքի Վարչութեան անդամները, Սպահանի Հայոց Թեմի 15-րդ նստաշրջանի Պատգամաւորական Ժողովի ընտրութիւնների Նոր Զուղայի Ընտրական Յանձնախմբի անդամներ պրնցք. Վահէ Թորոսեանը եւ Զարեհ Յովսէփեանը:

Հանդիպումը բացած յայտարարեց Ծափնշահրի Ընտրական Յանձնախմբի նախագահ Վահիկ Յովսէփեանը: Բարիգալստեան խօսքից յետոյ, նա յայտարարեց, որ թեկնածուներից պրն. Ռոբերտ Գորգին յայտարարել է ինքնաբացարկ, եւ Ծափնշահրի Ընտրական Յանձնախմբի կողմից հաստատուած թեկնածուներն են՝ Անանիա Ալազեանը, Էդիկն Բաբումեանը,

Մուկոչ Եղնազար Գրիգորը, Զանիկ Թահմազեանը, Ալիս Մկրտչեանը եւ Ալիդա Մուրադեանը:

Ծրագրի շարունակութեանը, առիթ տրւեց թեկնածուներին, ովքեր մէկ առ մէկ ներկայացրեցին իրենց կենսագրական տւեալներն ու իրենց պատգամաւորական ծրագրերը՝ համայնքին եւ նախատեսած գործունէութեանը վերաբերող:

Առիթ տրւեց նաեւ ներկաներին իրենց հուզող հարցերն ուղղելու թեկնածուներին եւ լսելու սպառիչ պատասխան:



Իբրեւ հանդիպման եզրափակում, իր խօսքն ասեց Ծափնշահրի հոգեւոր հովիւ հոգձ. Տ. Անանիա վրդ. Գումանեանը: Նա գտաւ, որ բոլոր թեկնածուներն էլ արժանի են եւ ունեն համայնքին վերաբերող օգտակար ծրագրեր: Հայր Սուրբը բոլորին մաղթեց յաջողութիւն եւ ընտրուելու դէպքում ետանդագին աշխատանք. Նա յատուկ կերպով շեշտեց. «Համայնքը կարիք չունի՝ պատգամաւորական աթոռ լցնող սպիկար անձանց, այլ՝ պատգամաւորական աթոռի վրայ նստող անձնէք, հայանպաստ եւ համայնքի շահերից բխող գործունէութիւն ծաւալող սրտցաւ պատգամաւորներ»:

**ՎԵՐՋԻՆ ՀՐԱԺԵՏ՝
ՎԱՏԱԿԱԿՈՐ ՌԻՍՈՒՑԻՉ ԵՒ
ԱԶԳԱՅԻՆ-ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԳՈՐԾԻՉ
ԼԵՒՈՆ Գ. ՄԻՆԱՍԵԱՆԻՆ**



Երեքշաբթի՝ յունարի 8-ին, Նոր Զուղայում հոծ բազմության ներկայությամբ տեղի ունեցավ վաստակաւոր ուսուցիչ եւ ազգային-հասարակական գործիչ Լեւոն Գ. Մինասեանի ազգային յուղարկաւորութիւնը, որն իր մահկանացուն էր կնքել 2012 թւականի դեկտեմբերի 31-ին, 93 տարեկան հասակում:



Թաղման եկեղեցական արարողութիւնը տեղի ունեցավ առաւօտեան ժամը 11-ին, Նոր Զուղայի Ս. Աստուածածին եկեղեցում՝ նախագահութեամբ Թեմրա-

նի Հայոց Թեմի առաջնորդ գերշ. Տ. Սեպուհ արքեպս. Սարգիսեանի եւ մասնակցութեամբ Սպահանի Հայոց Թեմի առաջնորդ գերշ. Տ. Բաբգէն եպս. Չարեանի, Շահինշահրի հոգեւոր հովիւ հոգշ. Տ. Անանիա վրդ. Գունանեանի եւ հոգեւորականաց դասի: Հանգուցեալի հարազատներից բացի, թաղման արարողութեանը ներկայ էին նաեւ՝ Իրանի Իսլամական Խորհրդարանում հարաւային իրանահայութեան պատգամաւոր Ռոբերտ Բեգլարեանը, Սպահանի նահանգապետարանի, Իսլամական Մշակոյթի եւ Առաջնորդութեան Հիմնարկի, Սպահանի 5-րդ շրջանի քաղաքապետարանի եւ Կրօնական Փոքրամասնութիւնների գրասենեակի բարձրաստիճան պաշտօնեաներ, Սպահանի Հայոց Թեմի ազգային մարմինների ու ենթամարմինների, շրջանի Հայ Դատի Յանձնախմբի, միութիւնների եւ հայոց ազգային դպրոցների ներկայացուցիչներ ու հոծ թուով հայ եւ պարսիկ հայրենակիցներ:

Եկեղեցական կարգի աւարտին գերշ. Տ. Սեպուհ արքեպս. Սարգսեանը հանդէս եկաւ դամբանախօսութեամբ, որից յետոյ գերշ. Տ. Բաբգէն եպս. Չարեանը նախ ընթերցեց Մեծի Տանն Կիլիկիոյ Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա Կաթողիկոսի ցաւակցագիրը, ապա անդրադառնալով հանգուցեալի կենսագրական գծերին՝ իր ցաւակցական խօսքն ուղղեց սգակիրներին:

Այնուհետեւ նորոգ հանգուցեալի դին տեղափոխւեց եկեղեցու բակ, որտեղ կարճատեւ արարողութիւնից յետոյ դամբանախօսութեամբ հանդէս եկան հանգուցեալի որդի Սեպուհ Մինասեանը՝ հարազատների, Վրէժ Շիրանեանը՝ Թեմի ազգային մարմինների, Արթին Մուրադեանը՝ գաղափարակից ընկերների եւ Հայկ Հայրապետեանը՝ Փերիոյ Կրթասիրաց Միութեան անունից, իսկ վերջում պարսկերէն լեզուով արտայայտւեց պատգամաւոր Ռոբերտ Բեգլարեանը:



Վաստակաւոր ուսուցչի դին ամփոփւեց Նոր Զուղայի Հայոց Ազգային Գերեզմանատանը: Վերադարձին Ն.Զ. Հայ Մ.Մ. «Արարատ» Միութեան սրահում հանգուցեալի հարազատներն ընդունեցին ցաւակցութիւնները:

Հանգիստ՝ բազմավաստակ ուսուցչի աճիւններին:

ԱՍՏՆՈՒՆԻ ԳՐԹՈՒՆԵՐՈՒՄԻ ԲԱՐՁՐ ԳՆԱԲԱՏԱԾ ԵՆՔ ՄԻՆԱՍՏԱՆԻ ԱՄՈՒՆՈՒՄԻ

Գերաշնորհ Տ. Բարգէն Եպս. Չարեան
Առաջնորդ Սպանիայի Հայոց Թեմի
Նոր Զուղա

Սիրելի՛ Սրբազան,

Այս առաւօտ խոր ցաւով իմացանք իրանահայու-
թեան կարկառուն դէմքերէն եւ մեր մշակոյթի երկարա-
մեայ սպասարկուներէն Լեւոն Գ. Մինասեանի մահուան
գոյժը: Այս տխուր առիթով մեր խորագգաց ցաւակցու-
թիւնները կը յայտնենք Ձեզի, Մինասեան ընտանիքի
անդամներուն, համայն իրանահայութեան ու յատկա-
պէս Նոր Զուղայի մեր Թեմի զաւակներուն, որոնց հա-
մար Լեւոն Գ. Մինասեան եղաւ ու կը շարունակէ մնալ
անխոնջ մտաւորականի ու նուիրեալ ծառայողի տի-
պարը:



Արդարեւ, մենք քաջածանօթ ենք Լեւոն Գ. Մինա-
սեանի անձին ու երկարամեայ կրթական ու մշակութա-
յին գործունէութեան: Բարձր գնահատած ենք միշտ
անոր ցուցաբերած ամուր կապուածութիւնը եւ օրինա-
կելի նախանձախնդրութիւնը մեր տեղային-եկեղեցա-

կան արժէքներուն ու խտելներուն: Հայ եկեղեցին
ընդհանրապէս ու Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսու-
թիւնը յատկապէս, անբաժան մասը կազմեցին Լեւոն
Գ. Մինասեանի գործունէութեան, ուր լայն տեղ գրա-
ւեց մանաւանդ Ս. Ամենափրկչեան Վանքէն ներս իր
ունեցած մշակութային կարեւոր ներդրումը: Մինչեւ իր
կեանքին վերջը, Լեւոն Գ. Մինասեան մնաց հաւատա-
րիմ զաւակը Կիլիկեան դարաւոր սուրբ Աթոռին, որուն
առաքելութեան բերած է իր գործօն մասնակցութիւնը,
եղած է պատգամաւոր Ազգ. Ընդհանուր Ժողովին եւ
աշխատակցած ՀԱՍԿ պաշտօնաթերթին:

Հոգեկան գոհունակութեամբ կ'ուզենք յիշել, որ
աւելի քան տասնամեակ մը առաջ Լեւոն Գ. Մինասե-
անի անձին ու նուիրեալ գործունէութեան նկատմամբ
մեր բարձր համարումն ու գնահատանքը արտայայտե-
ցինք իրեն շնորհելով Կիլիկեան «Ասպետ»-ի կարգի
շքանշան: Անկասկած, որ Լեւոն Գ. Մինասեանի անու-
նը անջնջելի կերպով արձանագրուած պիտի մնայ մեր
ժողովուրդի ժամանակակից պատմութեան մէջ, շնոր-
հիւ իր ունեցած ազգային-հասարակական, կրթական-
մշակութային, գրական-հրատարակչական ու ընկերա-
յին բազմակողմանի ու բազմարդիւն գործունէութեան:

Կ'աղօթենք առ Ամենաբարին Աստուած, որ երկ-
նային երանական խաղաղութեան մէջ ընդունի Լեւոն
Գ. Մինասեանի հոգին եւ յաիտենական կեանքի ար-
ժանացնէ զինք: Թող Աստուած Սուրբ Հոգւոյն միջո-
ցաւ միխթարէ հանգուցեալի պարագաներն ու բոլոր
սգակիրները:

Հայրապետական օրհնութեամբ եւ սիրոյ ջերմ ող-
ջունիւ,

*Առթարար՝
ԱՐԱՄ Ա. ԿԱԹՈՂԻԿՈՍ
ՄԵՍԻ ՏԱՆՆ ԿԻԼԻԿԻՈՅ*

Անթիլիաս, 4 յունուար 2013



ՎՇՏԱԿՑՈՒԹԻՒՆ

Ցաւօք սրտի ուշ տեղեկացանք իրանահայ հանրա-
ծանօթ եւ բազմավաստակ պատմաբան, բանասէր եւ
ազգային հասարակական վաստակաւոր գործիչ պա-
րոն Լեւոն Մինասիանի մահը:

Հանգուցեալն աւելի քան կէս դար ունեցած է ու-
սուցչական, գրական եւ վարչական գործունէութիւն
առհասարակ իրանահայութեան եւ ի մասնաւորի Իրա-
նա-Հնդկաստանի Հայոց Թեմի կրօնական եւ ազգա-
յին կեանքին մէջ:

Ան բացառիկ կարեւորութիւն ընծայող բանասիրա-
կան ասանդ թողած է մեզի, յատկապէս Իրանա-
Հնդկաստանի Հայոց Թեմի պատմութեան ուսումնա-
սիրութեան համար: Շուրջ քառորդ դար եղած ենք իր
հետ գործակիցներ մեր առաջնորդութեան տարիներ-
ուն եւ մեծապէս օգտուած անոր գիտութեան:

Ի խորոց սրտի կ'աղօթենք առ բարձրեալն Աստ-

լած, որպէսզի անոր հոգին հանգչեցնէ Իր երկնային լուսեղէն խորաններուն մէջ եւ Սուրբ Հոգույ մխիթարութիւն պարգեւ բոլորիս:

Այս առիթով մեր ցաւակցութիւնները կը յայտնենք նախ հանգուցեալի ընտանեկան պարագաներուն, Իսֆահանի եւ հարաւային Իրանի Հայոց Առաջնորդարանին եւ «Ալիք»-ի մեծ ընտանիքի անդամներուն:

*Մնամ ջերմօրէն աղօթարար՝
Կորիւն Արքեպս. Պապեան*



Յարգելի ներկաներ՝ սգակից բարեկամներ, ընդունեցէ՛ք որ չափազանց դժար է ցանկացած անձնաւորութեան աւելի քան 90-ամեայ ողջ կեանքն ու գործունէութիւնը սեղմ տողերով եւ կարեաց սահմանում ամփոփ կերպով ներկայացնել, ուր մնաց այնպիսի մարդուն, որ Իրանահայ համայնքում եւ ի մասնաւորի հարաւային իրանահայութեան կրթա-մշակութային ազգային եւ հասարակական կեանքում իր ուրույն դերակատարութիւնն է ունեցել, ինչպիսին է հանգուցեալ Լեւոն Գալուստի Մինասեանը:



Կրկնակի դժար է Ազգային մարմիններում աշխատող որեւէ անհատի համար դամբանական խօսք ասել նման անձնաւորութեան գործունէութեան վերաբերեալ:

Հանգուցեալ Լեւոն Գալուստի Մինասեանը, առաջին հերթին, իբրեւ Ս. Մեսրոպ Մաշտոցի հաւատաւոր ժառանգորդ, ընտրեց ուսուցչութեան ասպարէզը եւ 30 տարի շարունակ անմնացորդ ներդրումով աշխատեց հայ սերունդներ կրթելու, դաստիարակելու եւ իր հաստատ համոզումի ու գաղափարի ներքոյ ներշնչեց նրանց հաւատարիմ մնալու ազգին ու հայրենիքին:

Յետագային նրա շնչի տակ հայեցի դաստիարակութիւն ստացած երիտասարդութիւնն ազգային-հասարակական կեանքում պատասխանատուութիւններ ստանձնեց ո՛չ միայն իրանահայութեան կեանքում, այլ նաեւ՝ տարբեր համայնքներում, սփիւռքում ու Հայաստանում:

Մի խօսքով՝ նա իր ներդրումով ու համոզումով վարժապետեց մի ամբողջ կեանք:

Հաւատ, ներքում, աշխատանք եւ նպատակաւա-

ցութիւն: Ահա այն յատկանիշերը, որոնցով հանգուցեալը արձանագրեց մեծ նաճումներ, իր ճիգերն ու ժամանակն ամբողջութեամբ ներդնելով ի խնդիր հայ գիր ու գրականութեանը: Նրա տրճաշան եւ հետետողական աշխատանքի շնորհիւ ի մի բերեց Ս.Ա. Վանքի աւելի քան 350 տարուայ վաղեմութիւն ունեցող բոլոր նամակներն ու փաստաթղթերը:

Իր ուսումնասիրութիւնների արդիւնքում զանազան թերթերում հրատարակեց բազմաթիւ յօդածներ, գրեց պատմական արժէք ներկայացնող զանազան գրքեր հայերէն եւ պարսկերէն լեզուներով:

Տարիներ շարունակ մեր ազգային արժէքները վեր հանելուց եւ կենդանութիւն տալուց բացի, փորձեց տարածել ու ծանօթացնել նաեւ այլոց:

Եւ հետեւաբար, այդ բոլոր աշխատանքների եւ ուսումնասիրութիւնների արդիւնքում գնահատանքի արժանացաւ համազգային եւ միջազգային հաստատութիւնների կողմից՝ բազմաթիւ շքանշաններով ու պատուոյ գրերով:

Յարգելի ներկաներ, ահաւասիկ այսօր համախըմբւած ենք այս եկեղեցու սուրբ կամարների ներքոյ, հրաժեշտ տալու այնպիսի մարդու, որ տասնամեակներ շարունակ իր զոհաբերութեամբ, ներդրումով ու ըմբռնումով ծառայեց հայ մշակութիւն՝ միշտ նւիրած մնալով իր հարազատ ժողովրդին ու հայրենիքին:

Յարգանք նրա բազմամեայ եւ վաստակաշատ աշխատանքին:

*Սպահանի Հայոց Թեմի
Թեմական Խորհուրդ*



در ابتدای سخن از سوی خودم و جامعهی ارامنه عرض تسلیت دارم به خانواده و بازماندگان مرحوم لئون میناسیان انسانی که به جد فقدانش غیر قابل انکار خواهد بود. همچنین عرض تسلیت دارم به عموم ارامنه ایران و اصفهان و دیگر همشهریان اصفهانی و ایرانی و دوستداران فرهنگ و ادب و هنر.

تشکر می‌کنم از توجه و حضور تمامی شما عزیزان گرانقدر که در این محل با ما برای آخرین وداع با لئون میناسیان گردآمده‌اید و عرض سپاس دارم به تمامی مسئولین استانداری، نمایندگان شهردار محترم و اداره کل فرهنگ و ارشاد اسلامی، معلمان و دبیران و تمامی دست‌اندرکاران فرهنگی و رسانه‌ای که حاضرند و با ما در این فقدان به سوگ نشسته‌اند.

جناب اسقف چاریان در سخنان خود در داخل کلیسا فرمودند، که شمه‌ای و مختصری از شرح حال مرحوم میناسیان خواهند فرمود. ولی دیدید که خود این شمه و مختصر به واقع به چه‌سان مبسوط و پر بار بود. خودش به واقع چند عمر زیسته شده را بیانگر بود.

اینجانب در اینجا کلامی را بیان می‌کنم که البته مسلماً میرای از خطا نمی‌تواند بود و دیدگاه من است.

درود بر تو لئون میناسیان

شمایی که برای ما ارمنیان جلفای اصفهان تا دیروز آقای لئون یا بارون لئون بودی؛ جلوهای از معلم بودن، اهل ادب و هنر بودن، نمودی از موزه‌دار، مدیر چاپخانه، شاعر، محقق و کاوشگر فرهنگ ارمنی جلفایی- ایرانی بودی.

زاینده‌گی و زایابیش را استمرار بخشیده بود. می‌توان به برخی کارهایش خرده گرفت یا نقد داشت و بحرحال کارهای‌اش توفیق خاص خود را دارند و ریشه‌یابی‌های گوناگون‌اش در قوم‌شناسی و فرهنگ همه و همه مصالح ناب پژوهش‌های علمی هم می‌توانند باشند. می‌توان به او یا مانند او نقد داشت ولی نمی‌توان سرسری یا نادیده‌اش گرفت. گواهی همین ما که اینجا هستیم. گواهی خیل عظیم مردم، محققان، دانشجویان، روزنامه‌نگاران و جهانگردان و ایرانگردان که از دانش گسترده‌اش خوشه‌چیدند و بعدها آثاری از خود برجای گذاشتند.

تمامی اینها را گفتم نه برای اینکه خدای ناکرده ارج او را در این برهه خاص زمان کم کرده باشیم. بلکه برای اینکه تاکید کنم که او همچون اکثر ما اگر انسان کامل نبود، کاملاً انسان بود. و چه زیبا بود که تمامی خصائل کنجکاو و کاوشگری و در پی آواز حقیقت بودن را - به تعبیر ناب سهراب سپهری - در خود داشت و به ظهور رساند.

میناسیان نماد دورانی خاص از تاریخ جلفای نو، ایرانیان ارمنی و البته ایران است. دوران شناخت بازشناسی و احیا عناصر بسیاری از فرهنگ و تمدن و ادب که نصیب ما شده و افرادی چون او مهر خود را بر آن زده‌اند و همیشگی خواهد بود. افرادی که به ما همواره یادآوری می‌کنند که بسیاری از خرده حوادث و خرده ریزه‌هایی که زبردست و پای روزمرگی ما له و فراموش می‌شوند. ارزش توجه و نگاه عمیق دارند و بخش جالب و مهمی از فرهنگ و جهان بینی ما را جلوه‌گری می‌کنند، اگر به آنها دقت نگاه کنیم.

مثلاً: کافی بود به نمایشگاه آفیش‌های تئاتر جلفای نو که حدود دو دهه قبل برگزار کرد نظری می‌انداختی تا ببینی چه کارهایی در حوزه تئاتر در همین جلفای کوچک انجام شده و شگفت زده شوی که واقعاً یکی دو نسل قبل اینکارها در جلفا انجام شده است.

و چه کسی جز میناسیان این یادآوری را به جا آورد. افسوس که این مجال اندک است و کاروان سالار اعظم تو را به خود می‌خواند و بهرحال گفتنی‌ها هنوز بسیاری‌اند.

سخن را با درود بر تو معلم و کاورنده بزرگ آغاز کردم و اینک با بدرود خاتمه می‌دهم.

گفتم نماد دورانی خاص بوده ولی امید دارم چنانکه هم‌اکنون امید دارم و داریم با نیمه جانی زاینده رود عزیزمان دوران اصفهان را رو به پایانی ناخواسته ببینیم، نور افشانی‌های تو نیز کورسوی روشنگری و تلاش‌های نوینی باشد. چنانکه فرزند زمانه و خصال خویشتن بود و امید نیز از برجسته‌ترین خصائص انسان‌هاست، امیدوارم اثرات و کارهای هرچه بیشتر بسط و نضح گیرنده و شکوفه‌های نو بدهند.

